



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

83
7-44



303

Cherrywood

Hempstead

New York.

4360

83

2-44

այ

02 NOV 2009



ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ

Գ Բ Ա Մ Ա

Գերհար Հառավամանի

181

Այս դրաման ես նուիրում եմ նրանց,
որոնք ոճեցիլ են նմանը:

5084

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Դէպքը տեղի է ունենում Բերլինի մօս գոնոսող Ֆրիդրիխսհալէն
արտարձանում: Յլլդ տան պարտէզը կից է Միւգգէլեան լճին:
Եղոր հինգ գործողութեան ընթացքում բեմը մնում է անփոփոխ:
Դահանիքի նման սենեակը,—որ ծառաւում է միաժամանակ և իրեւ
հիւրանենեկ, և իրեւ սեղանառուն—կահատորուած է սենոր բուրժուացի
ձեռլ Դաշնամուր, գրքերի պահարան, երկու կողմից լուսանկար և փո-
րագրուած պատկերներ—ժամանակակից գիտնականների (ինչպէս և
ասուածարանների), նրանց մէջ Դարվինը և Ճեկիէլը: Դաշնամուրի վե-
րկից կախուած է իւլմներկ լուսանկար՝ պատորը զգեստաւորուած: Բացի
այդ՝ պատերից կախուած են Աստուածաշնչի նիւթերից մի քանի պաշ-
կերներ, ըստ Շնորհա ֆօն Կարոլմֆելդի:

Զախ կողմից մէկ, ա՞ կողմից երկու դուռը Զախ կողմից զուռը
տանում է դէպի Յոհաննէս Փոկերատի պարագելու սենեակը. աջ կողմի
դռներից մէկը—դէպի ննջարանը և միուր գէտի նախասենեակը:

Սենեակը այնքան էլ բարձր չէ: Երկու կիսակողոր լուսամուռներից
և յետի պատում գանոսող ապակեաւ գանից երեսում են պատշգամբը և
հեռուում պարտէզը, լին և լին միուր կողմին Միւգգէլեան ասրերը:

Դէպքը կատարուած է մեր ժամանակ:

1901p.

Ա. Ռ. Զ. Պ. Գ. Ռ. Վ. Ռ. Վ. Վ. Վ. Վ.

Սենեակը դատարկէ: Պարսպելու սենեակի կիսարաց դռնից լսում է պասորի ձայնը, որ քարոզ է խօսում: Երբ մի քանի վարկեանից լեռոյ ձայնը դադարում է լսում է երգեհանի վրայ նուազութ եկեղեցական մեղեղի:

Առաջին ձայների ժամանակ դուռը բացւում է, և մոնում են—տիկ, Ֆօկերատ—սկեսուրը, տիկ: Կէթէ Ֆօկերատ և ծծմալը՝ չեռքին խանձարարում դրած երեխան: Բոլորը տօնական հագուստներով:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. (Մօս 50 տարեկան պատկանելի կին է: Հազին մետախայ սեւ զգես: Խոպոպ մազեր միջից նեղ- խած: Վերցնում է եւ թիրեւ խփելով Կերեկի ձեռքը շոյում): Շատ գեղեցիկ էր նա խօսում, այնպէս չէ, Կէթէ:

Կէթէ. (21 տարեկան: Միջահասակ, երակազմ, գունաս, թիսաներ եւ մեղմ: Դեռ հիւանդուրիւնից ոչ բոլորովին կազ- դուրուած:—Ժայտում է ակամայ, մեքենայաբար գիշով է անում տիկ: Ֆօկերատին եւ դառնում դեպ երեխան):

ԾԾՄԱՅՐԼ. Փոքրիկ, սիրուն բալիկ.—Հէ, հէ... (Օրորում է երան ձեռքերի վրայ): Դէհ, հիմա քնեց: Շշշ, շշշ, շշշ!—Էլ ոչինչ բանի գլուխ դնել չէ ուզում: (Բաց է անում երեխային խան- գարող ժապաներ): Այդպէս, այդպէս—հրմ, հրմ, հրմ: Քնիր, փոքրիկ, քնիր: (Փակ որունեներով երգում է. «Ենի՛ր, բալիկ, բնի՛ր»): Բայց պաստորին լսու չարչարեց:—Հմ. (Երեխայի հանգը անում է): Հէհէ. այնքան բղաւեց, մինչև ջուրը նստացրին, հէ, հէ. նանի, բալիկս, նանի: Հէ, հէ. յետոյ ամա ճղբուռմ էր հայ, վայ. շշշ. նանի. բալիկս նանի....: (Երգում է եւ չափի համե- մատ ոոր խփում գետինի):

Տիկ. Կէթէ. (Գորովալի, բայց զղային ժայխով):

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Դէհ, մի տես, է, տես Կէթիսէն, տես ինչ փանալին է, ինչափսի երկար թերթեռունքներ ունի փոքրիկը:

ԾԾՄԱՅՐԼ. Հէ, հէ. մայրն է, որ կայ: Քնիր, մանկիկ... Ասես վրձինիկների մազեր լինեն...

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ուզիղն եմ սսում, Կէթէ. ամբողջապէս մայրն է:

Տիկ. Կէթէ. (Գլուխը քափ է տալիս բացասական կերպով):

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ուզիղն եմ սսում:

Տիկ. Կէթէ. (Ակամայից) Ա՛խ, մայրիկ, ես բոլորովին չեմ էլ ցանկանում որ նա ինձ նման լնի: Կուզէի որ ինձ սկի չը նը- մանուի էլ: Ինձ... (Նա չէ վերջացնում խօսք):

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. (Աշխատելով խօսակցուրիւնը վոխել): Ուժեղ երեխայ է:

ԾԾՄԱՅՐԼ. Հսկայ է, հսկայ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Կէթէ, դու միայն սրա բռունքներին նայիր, է:

ԾԾՄԱՅՐԼ. Գողիաթի բոռնցքներ ունի...

Տիկ. Կէթէ. (Համբուրում է երեխային):

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Այնպէս չէ, կործքը նըքան լայն:

ԾԾՄԱՅՐԼ. Այն, ես պարծանքով կարող եմ ասել, որ գե- ներալի կուրծքից սկի պակաս չէ: Շշշ... կը մնանայ և հինգի հափից միանդամից կը գայ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ի հարկէ... (Նա եւ Կերեն ծիծաղում են):

ԾԾՄԱՅՐԼ. Առողջ արիւն ունի, շշշ, շշշ: Ախր մանուկներն արիւնով են ապրում, շշշ, շշշ: (Կիսաձայն երգելով): Հիմա այսպէս, դէ սկ, զէ սկ:—Գնանք անկողնիկը—զէսի անկողնիկը: Այն, այն—մնաք—գնում ենք հիմա—անկողնիկը—շշշ, շշշ! Քնիր: մանկիկս: (Գնում է ննջարանը):

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. (Գուռը փակում է ծծմօր յետելից, վերա- դառնում է, զլուխը ուրափ շարժելով): Տսա... Այ քեզ, ինչ լաւ կին է: Շատ ուրախ եմ, Կէթիսէն, որ քեզ այսպիսի լաւն է պատահել:

Տիկ. Կէթէ. Գեներալի կրծքից պակաս չէ: Ա՛խ, Տէր Աս- տուած: (Ծիծաղում է: Նրա ծիծաղը զղաձզական է, աւելի լացի նման, բան ծիծաղի):

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. (Վախեցած): Ի՞նչ է, ի՞նչ պատահեց քեզ:

Տիկ. Կէթէ. (Աշխատում է իրան զապել):

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. (Գրիելով Կերեն): Կէթիկ, հոգիս:

Տիկ. Կէթէ. ես—հը—ոչինչ, ոչինչ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ի՞նչպէս թէ ոչինչ, ճշշտ որ զարթանալու ինչ կայ, ախր դու բոլորովին գեռ չես կազդուրուել: Գնանք, մի փոքր պատկիր:

Տիկ. Կէթէ. Ոչ, արդէն անցաւ, մայրիկ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Զէ, չէ, գէթ մի վայրկեան պառկիր:

Տիկ. Կէթէ. Ա՛խ, ոչ, ինդորում եմ. և յետոյ, չէ որ իսկոյն աշելու ենք:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. (Մօսենում է սեղանին, որի վրայ դրուած է ինի եւ խմորելին: Բաժակը զինի ածելով): Դէհ, գնէ մի կում ևսիր: Համբ տես, քաղցր է:

Տիկ. Կէթէ. (Խմում է):

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Կազդուրիչ է, չէ: Ա՛խ, դու իմ սիրեկի, մնաց մանկիկս, ինչ եղաւ քեզ: Հա, հա... դու զեռ քեզ պէտք է ինայես, ուրիշ ոչինչ հարկաւոր չէ, և կը լաւանաս: Դու ենար աւելորդ յուզումներ մի հնարիր:—Ամեն բան կար-

գի կը գայ: Այժմ դուք որդի ունեք. հիմա ուրիշ կերպ կը լինի երբ դու բոլորովին առողջանաս՝ այն ժամանակ տես եռ քեզ
Յոհաննէսը աւելի հանգիստ կը դառնայ...»

Տիկ. Կէթէ. Ախ, մայրիկ, եթէ միայն այդպէս լինի:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Հէնց դու ինքդ մտածիր, ինչպէս ուրա-
խացաւ նա, երբ ծնուեց երեխան, և ընդհանրատմէս նա գժուած
է երեխաների վրայ: Դու հաւատա, միշտ այդպէս է. ամուս-
նութիւնը առանց երեխայի սկի մի քանի նման չէ: Ես ինչպէս առ-
էի ազօթում Ս.ստուծուն, որ ձեր ամուսնութիւնը օրհնի մի գրավութ տակից լուսած: Հագուստը վերջին ձեփ, մի քիչ մաշուած, բայց
զաւակով: Տես, օրինակ հէնց մեր ամուսնութիւն առաջի չորս վայերուչ: Բրատնը մաղասափն (Փլեգմատիկ) է, մեծ մասամբ դժո՞ն,
տարիները: Միթէ մի բանի նման էր իմ և ամուսնուս կեանքը: սատի վաս տրամադրուած:
Վերջն Աստուած մեր ազօթքը լսեց և ուղարկեց Յոհաննէսին.
և միայն այն ժամանակ սկսուեց իսկական կեանքը: Մէկ սպա-
սիր, թող անցնին այս մի քանի ամիսները, դու կը տեսնես թէ
ինչ զուարծութիւն կը գտնես երեխայիդ մէջ: Ռէ, ոչ, դու միշտ լսու զիմացաք:
անգամայն կարող ես գոհ լինել: Այժմ դու ունես քո երեխադ,
ունես քո ամուսինդ, որ քեզ սիրում է: Դուք կարող էք անհոգ նկարէիր:—Յանցանք է և ամօթ—այսպիսի եղանակը իզուր
ասլըել. էլ ինչ ես ուզում աւելի:

Տիկ. Կէթէ. Գուցէ աս յիմարութիւն է: Ես ինքս էլ հաս-
կանում եմ: Երբեմն ես ինձ համար իսկ որ աւելորդ հոգսեր եմ
հնարում:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Տեսնում ես.—միայն՝ դու ինձ վրայ մի
բարկանար:—Դու շատ աւելի հանգիստ կը լինէիր, կէթիւն,
անհամենմատ աւելի, եթէ միայն... Գիտես, —երբ ես մի վիշտ եմ
ունենում և լաւ չերմ ազօթում եմ և այն ամենը, ինչ որ սըր-
տումս կայ, բաց եմ անում Ս.ստուծու առաջ՝ այն ժամանակ
այնպէս թէթիւննում եմ, այնպէս զուարթ է դանում սիրու...
Զէ, չէ, թող ուսում առածները ինչ կ'ուզեն ասին:—Աստուած
կայ, կէթիւն.—կայ մի ողորմած: Հայր երկնքումը, հաւատա
դու ինձ: Տղամարդը առանց հաւատի՝ այդ արդին վատ, բա-
ւական վատ բան է. բայց կինը, որ չէ հաւատում... Դու մի
բարկանար վրաս, կէթիւն: Դէ լաւ, լաւ: Ել չեմ խօսի զրա-
մասին: Ես շատ եմ ազօթում: Ամեն օր եմ ազօթում՝ իմ Աս-
տուծուն: Եւ նա կը լսի իմ ազօթքները, այդ ես զիտեմ: Զէ որ
դուք շատ լաւ մարդիկ էք: Ողորմած Ս.ստուած ձեզ էլ բարե-
պաշտ կը դարձնէ: (Նա համբուրում է իր հուրսի: Օրիները
վերջանում է): Ախ, ես իմ շատախօսութիւնով ժամանակ կորցրի:

Կէթէ. Գոնէ կարողանայի ես շուտ լաւանալ, մայրիկ: Թէ
ոչ ինձ համար ծանր է այդպէս միշտ տեսնել, ինչպէս դու նե-
զութիւն ես քաշում:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. (Գնալով դեպի նախասենեակի դուռը): Ի՞ն,
այդ խօսելու բան է. հիմն ձեզ մօտ արձակուրդ է այստեղ:

ինչպէս կը ծառայեցնեմ ինձ: (Դուրս է զնում):

Տիկ. Կէթէ. (Քայլում է դպի ննջարանը: Բայց մինչեւ որ
նա այնուն կը մտնի, մտնում է Բրատնը այն սենեալից, ուր մր-
կրտութեան ծեսն էր կատարուել):

Բրատնը քան և վեց տարեկան է: Գոնաս դէմքով: Ցողնած ար-
էի ազօթում Ս.ստուծուն, որ ձեր ամուսնութիւնը օրհնի մի գրավութ տակից լուսած: Հագուստը վերջին ձեփ, մի քիչ մաշուած, բայց
տարիները: Միթէ մի բանի նման էր իմ և ամուսնուս կեանքը: սատի վաս տրամադրուած:

ԲԲԱՌԻՆ. Այդպէս: (Կանգ է աւելում եւ ծխատուփից հա-
մի սիգարէս): Այս տանջանքն էլ տարանք:

Տիկ. Կէթէ. Իբրև թէ, լմէք պ. Բրատն, դուք բաւական
անգամայն կարող ես գոհ լինել: Այժմ դու ունես քո երեխադ,
ունես քո ամուսինդ, որ քեզ սիրում է: Դուք կարող էք անհոգ նկարէիր:—Յանցանք է և ամօթ—այսպիսի եղանակը իզուր
վասնել:

Տիկ. Կէթէ. Լաւ, դեռ կը յանդինք պակասը լրացնել:

ԲԲԱՌԻՆ. Ա՛խ, մնաք բոլորս էլ անխտիր թոյլ բնաւորու-
եան տէր ննք: (Նսում է սեղանի մօս): Սակայն այդպիսի
բառութիւնների մէջ մի ինչո՞ր բան կայ:

Տիկ. Կէթէ. Հետում էլք դուք Յոհաննէսին:
ԲԲԱՌԻՆ. (Նտապ): Նա զարմանալի կերպով անհանգիստ էր:
ամբողջ ժամանակ սպասում էի, թէ ահա մի բան կը պա-
ահի: Երկիւզ էի կրում, թէ մի գուցէ նա պաստօրի քարոզը
սղատի: Այս, թէկ հէնց քարոզն էլ անհաւատալի բան էր:

Տիկ. Կէթէ. Ինչո՞ւ, պ. Բրատն:
ԲԲԱՌԻՆ. Այդ միանդամայն պարզ է, տիկին կէթէ: Սակայն
ո բոլորովին գոհ եմ: Գիտէք, նոյն իսկ կարող է պատահել
ո ես այդ նկարից մի պատկեր նկարէմ: Հիանալի բան է:

Տիկ. Կէթէ. Լուրջ էք ասում, պ. Բրատն:
ԲԲԱՌԻՆ. Եթէ ես այդ նկարնմ՝ իմ նկարից պիտի փէ,
այսպէս ասած, յիշողութիւններով հարուստ մի բոյք, դուք հաս-
կանում էք—ճերմակ զինու... կարկանդակի, քթախոսի և մոմե-
նի... որ այնպէս, զիտէք, մարդու ախորժելի կերպով չշմացնի,
բրիտասարդական... այնպէս...

Այն սենեալից, որտեղ մկրտութեան ծէսն էր կատարուել, մըր-
ում է Յոհաննէս Ֆոկերատը: Նա 28 տարեկան է. միջակ հասակով, շի-
ահեր, հոգեզբազ շարժում դէմքով: Նրա շարժուածքները անհանդիսա-
ն, չափնած է մաքուր. Գրակ, սպիտակ վաղպատ և ձեռնոցներ:

ՄՈՒՐՃ

ՅՈՀԱՆՆԵՍ. (Հառաջում է եւ հանում ձեռնոցները):
ԲՐԱՌՈՒՆ. Զգացուած ես, չք: Խնձորի օշարակի նման հա
լուել ես, երեխ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ճիշտը չեմ կարող պնդել: Իսկ ճաշելու հա
մար ինչ կարդադրութիւն ես արել, Կէթիսէն:

ՏԻԿ. Կէթէ. (Անվնուղաբար): Դուրսը, պատշտամթի վրա
կարծում եմ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի՞նչպէս. այնուեղ է արդէն հացը գցած:
ՏԻԿ. Կէթէ. (Երկշուրեամբ): Այդ քեզ հաճելի չք. և
կարծում էի...

ՅՈՀԱՆՆԵՍ. Կէթէ, սիրելիս, բայց ոչ այդպէս խղճալ
ձայնով. ես հօ քեզ չեմ ուտելու.—Այդ ինձ համար ճիշտ
սոսկալի է:

Կէթէ. (Սիփելով իրան հաստատ ձայնով խօսել): Ես ասաց
որ դուրսը սեղան պատրաստեն:

ՅՈՀԱՆՆԵՍ. Դէ, այդպէս, ի հարկէ:—Շատ էլ լաւ ես ս
րել: Ախր ես մարդակեր եմ, ինչ է:

ԲՐԱՌՈՒՆ. (Մրգմբում է): Է՛, լաւ, դու էլ մի փնթփնթս
այդքան:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Գրկելով Կէթէին, բնիշուրեամբ): Խսկապէ
Կէթէ: Դու միշտ այնպէս ես անում, որ կարծես ես ուղղակ
տան մէջ բռնակալ լինեմ: Կարծես մի զարհուրեկի մարդ լինե
դու պէտք է անպատճառ թողնես այդ սովորութիւնդ:
ՏԻԿ. Կէթէ. Բայց երբեմն քեզ համար անախորժ է, Յ
հաննէս....

ՅՈՀԱՆՆԵՍ. (Նորից բռնկուելով): Հէնց թող այդպէս էլ լին
այդ մի դժբախտութիւն չք: Այդ գէպում ինձ մի լաւ շապի
դու էլ պաշտպանուիր: Իմ բնաւորութեան հետ ես ոչինչ չի
կարող անել: Դու թոյլ մի տար այդպէս քեզ սարկացնել: Ե
չկարող անել: Դու թոյլ մի տար այդպէս քեզ սարկացնել: Ե
չկարող անել: Դու թոյլ մի տար այդպէս քեզ սարկացնել: Ե
չկարող այդչափ համբերող է, այդպէս Մագոնսայանման...

ՏԻԿ. Կէթէ. Դէ, իզուր տեղից էլ մի զրգուիր, Հաննէ:

Չարժէ դրա մասին խօսել:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Զայրացած): Օ, օ, օ! Դու հիմնովին սիսալու
ես: Ես բնաւ չեմ զրգուում, մաքովս էլ չէ անցնում: Խսկապէ
այդ զարմանալի է, թէ ինչու ես պէտք է ամեն չնչին բան
համար նեղանամ: (Բրաունը կամենում է ինչոր ասել): Դէ լա
—ի հարկէ, դուք այդ տեսիլ լաւ դիտեք: Վերջ տանք. խօսե
մի այլ բանի մասին... Ախ, հա, հա...

ԲՐԱՌՈՒՆ. Գիտես, վերջապէս շատ ձանձրալի է դառնու
քո մշտական պիս ու վախոդ:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Բոնում է կուրծքը. Արա դեմքը ցաւից ծովր-
ւում է...) Ա՛խ: ԲՐԱՌՈՒՆ. Էլ ինչ պատահեց:

ՅՈՀԱՆՆԵՍ. Աչինչ նոր:—Դարձեալ հին պատմութիւնը:

ԲՐԱՌՈՒՆ. Դու էլ յետ ծակիր, Հան:

ՅՈՀԱՆՆԵՍ. Լսիր, ճիշտ եմ ասում, կատակ անելու բան

չէ. Ա... ախ:

ՏԻԿ. Կէթէ. Ա՛խ Հաննէս, այդ չը պէտք է քեզ ան-
հանդպատահի: Լուրջ ոչինչ չը կայ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Հա, բայց նրա համար, ով երկու անդամ՝ ու-
նեցել է թոքերի բորբաքում...

ԲՐԱՌՈՒՆ. Դեռ անունն էլ պահեստի օֆիցիէր է:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի՞նչ անեմ զբա դէմ:

ԲՐԱՌՈՒՆ. Պառաւ միկամաղնոս: Մի թուլացիր, մի բան

կեր. քարոզն է նստել սսկորներումդ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Պարզն ասած, Բրէօ... Դու այնպէս ես խօ-
սում մկրտութեան մասին... թէ ինչպէս ես եմ վերաբերում
այդ բանին, դու գիտես: Յամենայն դէպս ես նայում եմ դրա
վրայ ոչըքրիստոնէական տեսակէտից: Բայց և այնպէս դա մը-
նում է միշտ իբրև մի բան, որ շատ շատերի համար սուրբ է:

ԲՐԱՌՈՒՆ. Բայց ոչ ինձ համար:

ՅՈՀԱՆՆԵՍ. Այդ ես գիտեմ: Աւզզակի ոչ էլ ինձ համար:
Վերջապէս նոյնքան, որքան քեզ համար: Բայց չէ որ պէտք է
դէմ մի փառք պատկառանք ունենաս դէպսի այն հանդէսը, որ
մի քիչ առաջ...

ԲՐԱՌՈՒՆ. Է՛հ, դու էլ քո բարեպաշտական զգացմունքով:

ՅՈՀԱՆՆԵՍ. Եթէ դու էլ այդ զգացմունքից մի քիչ ունե-
նայիր:

ԲՐԱՌՈՒՆ. Հա, դէպի ամեն մի փայտի կտոր, որ մէկի
ուների. տակ է թուզում, պէտք է պատկառանք ունենալ: Դա
ուղղակի զգացմունքների զառանցանք է:

ՅՈՀԱՆՆԵՍ. Դէ, դու մի նեղանար, եթէ ես... մի ուրիշ
անգամ զուցէ ես աւելի հեշ տանէի այդ, քան այսօր: (Դրւու
է գնում պատճամբը, ուր երեւում է, թէ ինչպէս մարմնամա-
րական վարժութիւններ է անում):

ԲՐԱՌՈՒՆ. (Նփորուած վեր է կենում եւ առանց պատճառի
ծիծաղում):

ՏԻԿ. Կէթէ. (Կանգնած կարի սեղանի մօս): Դուք նրան
վերաբերեցիր, պարզն Բրառւն:

ԲՐԱՌՈՒՆ. (Նփորուած ծիծաղելով, յետոյ կուսուրեամբ): Ի՞նչ

կարող էի անել: Ատելով ատում եմ ամեն մի կիրառութիւն:
Տիկ. Կէթէ. (Կարճ լուսրիւնից յետոյ): Դուք անարդար էք
դէպի նա:

ԲԲՍՈՒՆ. Բայց այդ բնչու:

Տիկ. Կէթէ. Ես չը զիտեմ... ես չեմ կարողանում ար-
տայայտել այդ: Յամենայն դէպս... Հանճէսը սնկեղծօրէն է
մաքառում:

ԲԲՍՈՒՆ. Այդ որ ժամանակից է նա այդքան սաստիկ վի-
րաւորող դարձել, կ'ուզենայի ես խմանալ:

Տիկ. Կէթէ. Այն ժամանակից, երբ մկրտութեան մասին
հարց բարձրացաւ: Ես արդէն այնքան ուրախ էի... իսկ այդ
վէճը կրկին խլեց նրա բոլոր հանգստութիւնը: Չի որ հանդէսը
միայն մի ձեականութիւն է: Միթէ պէտք էր դրա համար ծեր
ծնողներին պատճառել մի սոսկալի վիշտ... ոչ—այդ բոլորովին
լաւ չէ: Այսր ինքներդ զատեցէք, այնպէս բարեպաշտ, չերմ հա-
ւատացող մարդիկ են: Պէտք է համաձայնուեք, պ. Բրառն:

ՅՈՒՆՆԵՍ. (Բաց է անում ապակէ դուռը և բացան-
չում): Տղերը, ես մի քիչ զրգուած էի: Ուրախացէք: Տեսնում
էք, ես էլ բացուեցի: (Գնում է դեպի պարտէզը):
ԲԲՍՈՒՆ. Ոչսար:

Թաղար (պատուա):

Տիկ. Կէթէ. Նա երեմն ինձ ուղղակի յուղում է:

Թաղար:

Այն սենեակը, որտեղ կատարաւել էր մկրտութիւնը, մտնում են
ուրախ ազմուկով Ֆօկերաստ-հայրը և պաստօր Կոլիինը: Ֆօկերասի տարիքը
60-ի մօտ է: Գորշ գլուխ, շէկ միրուք, ցան (պէն) դէմքի և ձեռքի վրայ:
Հուժկու և լայն, չաղութեան հակասած: Նա արդէն մի քիչ կորացել է և
ման է զալիս մանր քալուածքով: Ամրող Ծովին սէր և բարեցակամու-
թիւն է նրանից թափում: Զոտք, պարզ, կենսուրախ ընառութեամբ:
Պաստօր Կոլին, 73 տարեկան մի ծեր, գնում է փոքրիկ գոտիկ քթախոս
է քաշում:

ՅՈԿԵՐԱԾ. (Մտնում է՝ պասօրին քեւանցուկ, խօսում է
իներ մեղմ, մի քիչ բոնուած ձայնով): Շատ, շատ չնորհակալ եմ,
պարոն պաստօր, շատ չնորհակալ եմ պատճառած հոգեզմայլու-
թեան համար, հա: Ուղղակի մի ինչո՞ր հոգեկան ամրացում էի
ես զգում, հա, հա: Ա՛, գու այսուեղ ես, սիրելի դատիկոս: (Մո-
տնում է Կերկին, գրկում է եւ բնեուրեամբ համբաւում նրան):
Դէս, իմ սիրելի, սիրելի Կէթէ! Իմ ամբողջ հոգով ցանկանուս
եմ քեզ բախտ: (Համբոյր): Ողորմած Սատուածը նորից ցոյց
տուեց իր մեծ բարութիւնը, հա... Նա յայտնեց իր անսահման

բարութիւնը: (Համբոյր): Նրա ողորմաթիւնը և բարութիւնը
անշափ է: Եւ նա այժմ, հա... Եւ նա այժմ կը տարածէ իր
հայրական ձեռքը, հա, մեր մանկիկի վրայ, հա—(Բրառնին):
Թողլ տուեք, պ. Բրառն, ձեր ձեռքը ևս սեղմեր: (Յոհաննինը)
մտնում է. Ֆօկերատը գնում է նրա հանդիպ) Ահա և դու, իմ
հարազատ Յոհաննէս: (Համբոյր. ամուռ գրկախառնուրիւն: Գրե-
րի ծիծակելով յազումից): Ուրախ եմ քեզանով: (Համբոյր): Իս-
կապէս ուրախանում եմ: Ես չը զիտեմ, ինչպէս չնորհակալ լի-
նեմ ողորմած Աստուծոց, հա, հա!

ՊԱՍՈՐ ԿՈԼԻԻՆ. (Քիչ դղղողուն, ընչառութիւնը արագ,
բնիատ, հանդիսաւոր կերպով սեղմում է Կերկի ձեռքը): Կրկն
անգամ, թող ձեզ վրայ լինի Սատուածու օրհնութիւնը: (Սեղ-
մում է Յոհաննինի ձեռքը): Թող լինի ձեզ վրայ Սատուածու
օրհնութիւնը:

ՅՈԿԵՐԱԾ. Դէ հիմա, սիրելի պարոն պաստօր, ինչ ծա-
ռայութիւն կը հրամայէք մատուցանել ձեզ: Ոչի՞նչ: Օ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Խնդրեմ, պ. պաստօր.—գոնէ մի բաժակ զի-
նի անուշ արէք: Ես կը բերեմ մի նոր շի:

ՊԱՍՈՐ ԿՈԼԻԻՆ. Նեղութիւն մի քաշէք, լսեցէք, ոչ մի
նեղութիւն:

ՅՈՀԱՆՆԵՍ. Որից կը կամենաք, ձերմակ թէ...

ՊԱՍՈՐ ԿՈԼԻԻՆ. Խնչպէս կամենաք, բոլորովին ինչպէս
կամենաք. բայց—լսեցէք.—յասուկ խնդրում եմ մի ան-
հանգստացէք: (Յոհաննինը դուրս է գնում): Իսկ այժմ ես...
(Մտնում է իր իրերը: Գլխարկը, վերարկուն եւ պլեսը կախուած
են դրան մօս կախարանից):

ՅՈԿԵՐԱԾ. Միթէ դուք պատրաստում էք արդէն գնալ,
պարոն պաստօր:

ՊԱՍՈՐ ԿՈԼԻԻՆ. Այս, լսեցէք.—իսկ քարոզ: Ապա ով
կը խօսի վաղը իմ քարոզ:

ԲԲՍՈՒՆ. (Պատրաս բնեում է պասօրի վերարկուն հազ-
ցնելու համար):

ՊԱՍՈՐ ԿՈԼԻԻՆ. (Հագնելով վերարկուն): Շնորհակալ եմ,
երիտասարդ պարոն:

Տիկ. Կէթէ. Միթէ մեզ պատիւ չէք անիլ, պարոն պաս-
տօր, մասնակցելով մեր համեստ ճաշին...

ՊԱՍՈՐ ԿՈԼԻԻՆ. (Հագնելով): Շատ լաւ, շատ լաւ, սի-
րելի արկին Ֆօկերատ: Սակայն...

ՅՈԿԵՐԱԾ. Յարգելի պ. պաստօր, ձմարիտ, դուք պէտք է
այդ անէք մեր սիրոյն:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼՀԻՆ. (Անվասան): Սակայն, լսեցէք.—լսեցէք...

ՖՕԿԵՐԱԾ. Բայց եթէ մինք բոլորս ձեզ շատ խնդրում ենք:
ՊԱՍՏՈՐ ԿՈԼՀԻՆ. Ապա Աստուածային խօսքը, որ ևս վար պատրաստում եմ քարողել. հապա,—քարողել—լսեցէք
—Աստուծու խօսքը—վաղը: (Յոհաննեսը վերադառնում է եւ գինին ածում):

ՖՕԿԵՐԱԾ. (Վերցնում է բաժակը, գինու համբ տեսնում է):
Նախ և առաջ... դուք յամենայն դէպս սրանից չէք հրաժարուիլ:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼՀԻՆ. (Վերցնում է նրանից բաժակը): Դրանից—ոչ, լսեցէք: Այսպէս ուրեմն—ուրեմն նոր մկրտուածի... նոր մկրտուածի կենացը! (Հրիփացնում են): Խմննք,
որ նա կարողանայ մնալ Աստուծու հարազատ և ճշմարիտ զաւակ:

ՖՕԿԵՐԱԾ. (Կամացուկ): Տայ Աստուած:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Առաջարկում է պատօրին սիզար): Դուք անշուշտ ծիսւմ էք, պ. պաստօր:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼՀԻՆ. Այս, չորհակալ եմ: (Վերցնում է սիզարը եւ կտրում է ծայրը): Շնորհակալ եմ! (Վառում է Յոհաննեսի սիզարի կրակից): Պֆ, պֆ! (Քառում է մեծ ջաներով: Վերջապես սիզարը վառում է: Աչքի անց կացնելով մենեակը): Դուք գեղեցիկ կահաւորել էք, պֆ, պֆ!—մնձ ճաշակով: Լսեցէք: (Երջում է, ենթարկելով պատկերները նախ հարեւանցի, ապա մանրամասն զնուրեան: Կանգնելով մի պատկերի առաջ, որ ներկայացնում է Յակոբի կոփուր հրետակի հետ): Ես —քեզ չեմ թողնիլ, դու—պֆ, պֆ!—մինչև որ ինձ չօրհնեաւ: (Մրմում է նա ինքնազնի):

ՏԻԿ. Կէթէ. (Քիչ երկչոս): Հայրիկ. Ես կ'առաջարկէի քեզ —զնալ պարտէզ. այստեղ այժմ հիմնալի է: Աւելի տաք է քան սենեակում: Գուցէ դու կը զնաս պարոն պաստօրի հետ... Իսկ ես կ'ասեմ բաժակները փոխադրել այնտեղ:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼՀԻՆ. (Նայում է գրադարանի ուրց կախուած գիտականների պատկերները): Խայտաճամուկ հասարակութիւն! Սրանք ի հարկէ—պֆ, պֆ!—ձեր ուսուցիչներն են, պ. դօկտօր: Լսեցէք!

ՅՈՀԱՆՆԵՍ. (Քիչ շփորուելով): Այս... այսինքն... բացի Դարվինից, ի հարկէ:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼՀԻՆ. (Աչքերը յառած պատկերներին): Դարվին, Դարվին.—Հա, այդպէս! Դարվին! Հա, իսկ որ! ըմժ! Լսեցէք! (Արդում է վանկ-վանկ) երնստ—Հէկէլ: Մինչև ան-

գամ՝ սեփական ստորագրութիւն! Պֆ, պֆ! (Ոչ առանց հեգնութեան): Ուրեմն նա ձեր ուսուցիչն է եղել:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Ետապ, բոնկուելով): Այս, և ես պարծենում եմ դրանով:

ՖՕԿԵՐԱԾ. Իմ հարսա ձիչտ է ասում, սիրելի պաստօր: Դուրսը շատ աւելի տաք է: Եթէ դուք դէմ չէք՝ զնանք: Ես կը վերցնեմ զինին և բաժակները:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼՀԻՆ Շատ լաւ! պֆ, պֆ! հիմնալի! պֆ, պֆ! սակայն, լսեցէք.—մի երկու բոպէ, այս! (Ֆօկերատի հետ զնալիս խօսում է գրգուած): Մարդու, պ. դատաւոր! մարդու, ոչ նա, պֆ, պֆ! այլ ես խկապէս Աստուծու պատկերը, նմանթիւնը չէ, լսեցէք: Այլ խկապէս կապիկ, պֆ, պֆ! Դանէ, բնական զիտութիւնը այդ եղրակացութեան է հասել...

(Պուրս են զնում պատշգամբը, երկուսն էլ աշխորժ շարժումներ անելով, իջնում են պարտէզ):

ԲՐԱՌԻՆ. (Ծիծաղում է ինքն իրան):

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի՞ս: Ինչու: Ուրախանում եմ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ուրախանում ես:

ԲՐԱՌԻՆ. Այս. միթէ չէ կարելի:

ՅՈՀԱՆՆԵՍ. Խնդրեմ, խնդրեմ: (Յետ ու առաջ է զնում, հառաջում է եւ յանկած դիմում է Կերկին, որ ուզում է հեռանալ): Ասա, ես երկի մի քիչ կծու էի:

ՏԻԿ. Կէթէ. Այս, փոքր ինչ:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Թօրուելով ուսերը): Դէս, պարունակը.—այդ դէպրում ես ոչինչ չեմ կարող անել: Այդպիսի բան ես տանել չեմ կարող: Ամեն ինչ սահման ունի: Եթէ նրանք կամննում են ինձ զրգուել...

ՏԻԿ. Կէթէ. Բայց խկապէս այդ ամենը շատ կակող ձեռվ էր յայտնուած:

ՅՈՀԱՆՆԵՍ. Միթէ:

ՏԻԿ. Կէթէ. Ո՞վ գիտէ, գուցէ նա չը նկատեց էլ քո կծու ոճը:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Անց ու դարձ է անում եւ գլուխը հորում): Բայց այնու ամենայնիւ ինձ այդ անախորժ է:

ԲՐԱՌԻՆ. Դարձեալ մի պատճառ գտար նեղանալու, Հանս:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Յանկած բոնկուելով), Է՞՞, սատանան տանի, հանգիստ թողէք ինձ վերջապէս: Դուք պէտք չէ շատ հեռու զնաք—եթէ համբերութիւնս հատնի...

ԲԻԱՌԻՆ. Այդ վատ չէր լինի:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Դառնալով բրատեին): Գուք համոզմունքի պարծենկոտներ էք, աւելի ոչինչ: Ինչ կարիք կար ախր, որ ևս ծերուկին ձշմարտութիւնը ասէի, ինչի համար: Գիտես, երբ գու այդպէս ես խօսում, իսկոյն հանգստացնում ես իմ մէջ բարկութիւնը: Ինձ համար իսկոյն պարզում է, որ դա միայն տղայութիւն է, մի փոքր անգամ զրգուել այդպիսի մարդկանց վրայ: Այդ մի և նոյն է, որ ես սկսեմ վրդովուել, թէ ինչո՞ւ ոռնին ասեղներ ունի և ոչ տերեներ: Օրեկտիվ պէտք է լինել, սիրելիս:

ԲԻԱՌԻՆ. Գուցէ գիտութեան մէջ, բայց ոչ կեանքի:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ախր պարուներ. այդ ամբողջ գատարկարանութիւնը ինձ այնքան է ձանձրացրել... այնքան ձանձրացրել... որ գուք երեակայել անգամ չէք կարող, թէ ինչպէս... (Վագվում է յետ ու առաջ):

ԲԻԱՌԻՆ. (Վառարանից, որի մօս կանգնած եր, նեռանում է դեպի սեղանը, եւ դնում է մոխրամանի մէջ սիգարետի մեացորդը): Իսկ ինձ չէ ձանձրացրել: Ինձ էլ բաւականաչափ: Բայց այդ պատճառով շարունակ արտնջալ ու լալ՝ այդ ես երբէք թոյլ չեմ տալ:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Փոխուած ձայնով եւ ժպտուել): Լաւ, լաւ, մի տաքանար: Շարունակ արտնջալ ու լալու մասին խօսք էլ չը կայ: Իսկ եթէ պատճառում է, որ հառաջում եմ, այդ այն պատճառով է, որ օդի սովում եմ զգում, աւելի ոչինչ: Ո՛չ ոչ, իմ կեանքս այնքան էլ վատ չէ և յամենայն դէպս գեռ շտա հեռու եմ քեզ պէս սնանկ լինելուց:

ԲԻԱՌԻՆ. Կարող է պատճառել:

ՅՈՀԱՆՆԵՍ. Գրադ կը գաս:

ԲԻԱՌԻՆ. Ամենեին:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ախ, սնանկ, սնանկ, սակայն իսկուսէս ինչ է նշանակում մնանկ: Դու էլ նոյնքան քիչ ես մնանկ, որպէս և ես: Միայն լաւ կը լինէր, եթէ ես չը նեղացնէի ծերուկիս և պատօրի տրամադրութիւնը:

Տիկ. Կէթէ. (Գրկելով Յոհաննեսին): Հաննէս, Հաննէս, զուարթ կաց, զուարթ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ինձ մտատանջում է և իմ աշխատութիւնը: Ահա նորից երկու շաբաթ է, որ չեմ կարողանում պարագել:

ԲԻԱՌԻՆ. ՄՌայիսի փոքրովութիւն: Դու ինքդ չես ուղում ընդունել, թէ որքան ողորմելի է այդ ամենը:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Չը լսելով նրա պատճերը): Ի՞նչ:

ԲԻԱՌԻՆ. Երբ անձրև է թաց է, երբ ձիւն է դալիս՝ սպիտակ է, երբ ցուրտ է անում՝ սառչում է:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ոչինը:

Տիկ. Կէթէ. Զուարթ կաց, ֆրից, մտածիր մեր փոքրիկ ֆիլիպափ մասին: Մեղ համար ձմեռը այստեղ այնքան յարմար կը լինի: Ախ, այն ժամանակ ինչպէս լաւ կը պարապես:

ՅՈՀԱՆՆԵՍ. Գիտես, Բրէօ, արդէն չորրորդ գլուխը պատրաստ է:

ԲԻԱՌԻՆ. (Անարքեր): Հա:

ՅՈՀԱՆՆԵՍ. Հապա մի նայիր, անս ձեռագիրը. միմիան աղբիւրները 12 երես են բոնում: Ահա քեզ աշխատութիւն: Ճիշտ չէ: Ա՛խ, թէ ինչպէս կը ցնցուեն կեղծ ծամեր կրող ծեր գլուխները:

ԲԻԱՌԻՆ. Հաւատում եմ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ահա, օրինակի համար (Թերքում է ձեռագիրը): Այստեղ ես յարձակում եմ Դիւրուա-Ռայմօնի վրայ:

ԲԻԱՌԻՆ. Դու... ձշմարիսն ասած, այժմ մի կարդար: Ես հիմա այնպիսի ծոյլ տրամադրութեան մէջ եմ, որ... մի որիշ անգամ...

ՅՈՀԱՆՆԵՍ. (Համակերպուելով): Բնականաբար, հա, ի հարկէ: Դէ—ես սկի չէի էլ ուզում: Ես...

Տիկ. Կէթէ. Շուտով ձաշելու էլ ենք:

ՅՈՀԱՆՆԵՍ. Բնականաբար, ի հարկէ, ի հարկէ... և բուրովին չէի էլ մտածում: Ես ուզում էի միայն—է. (Հառաչելով ձեռագիրը նորից դնում է գրեթի պահարանում):

Տիկ. Կէթէ. Հաննէս, զուարթ կաց, զուարթ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Դէ, կէթէ, ես հէնց այդպէս էլ եմ:

Տիկ. Կէթէ. Զէ, դու էլի վշացար...

ՅՈՀԱՆՆԵՍ. Եթէ լանարձակ երկրի վրայ գէլ մի մարդ մի բան ունենար և ինձ համար: Շատ բան չէ հարկաւոր: Մի քիչ համակրութիւն, մի քիչ համակցում իմ աշխատութեան:

Տիկ. Կէթէ. Պէտք է խոհեմ լինես: Դու չը պէտք է քեզ ցաւ պատճառես: Պէտք է համբերող լինես: Ժամանակը կը գայ: Երբ նրանք կը հասկանան...

ՅՈՀԱՆՆԵՍ. Իսկ մինչև այն ժամանակը: Կարծում ես հէշտ է այդպէս առանց աշխացութեան... կարծում ես կարելի է այդքան ժամանակ դիմանալ...

Տիկ. Կէթէ. Հաւատացած եմ: Եկ, Հաննէս. Երբ մի միար ձնշում է պէտք է աշխատել նրանից աղատուել: Եկ, զնանք, մի տես Ֆիլիպափն: Քնած ժամանակը նա այնքան սիրուն է: Այսպէս է նա միշտ պառկած: (Ցոյց է տալիս, ինչպէս երեխան ծալում է քարիկները): Այսպէս բոռնցքներ է շինում նա միշտ: Ծիծաղից կարելի է մարել: Եկ, զնանք:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Թրառւնին): Դու էլ կը գաս մեզ հետ:
ԲԲՍՈՒՆ. Ահ, չէ, Համս, չեմ սիրում փոքրիկ երկխանե-
րին: Ես կը գնամ քիչ կը շրջեմ պարտէզում: (Դուրս է գալիս
պատճամբը):

ՅՈՀԱՆՆԵՍ. Տարօրինակ մարդ:
Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. (Զգուշութեամբ բաց է անում ննջարանի
դուռը): Տես ինչ գեղեցիկ է:—Շշ... կամաց, էլ կամաց:
(Երկուսն էլ դուրս են զնում ձեռք ձեռքի տուած եւ ոտերի
ծայրերի վրայ):

Ե.—Ա.

(Կը շարունակուի)

ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ

Դ Բ Ա Մ Ա

Գերհար Հառապմանի

(Շարունակութիւն*)

Տիկին Ֆօկերատը և աղախինը այդ միջոցին պատշգամբի վրայ սե-
ղան են պատրաստում: Յանկարծ լսում է մեծ շառաչով ափսէների մի
կոյտի թափուելը քարերի վրայ և փշուր-փշուր լինելը: Կարծ նիչ է ար-
ձակում և աղախինը գունատ վազում է սենեակի միջով, պատշկամբից
դէպի մոտքը: Տիկ. Ֆօկերատը նոյնպէս ներս է մտնում յանդիմանելով
աղախնուն:

Տիկին ՖՕԿԵՐԱՏ. Ոչ, դա ուզգակի անտանելի է, Միննա: Օր չէ անցնում, որ մի բան չը կոտրէք: Փչացաւ հիանալի
մայօնէզու: (Աղախինը դուրս է զնում դրսի դռնից): Ինձ մօտ
այսպիսի բան չէր կարող պատահել: Աղախինները ինձ մօտ
գիտեն, թէ ինչպէս պէտք է վարուել:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Սիլմուկի վրայ դուրս գալով ննջարանից): Ի՞նչ է մայրիկ, ինչ է պատահել: (Գրկում է նրան եւ աւշա-
տում հանգստացնել): Հանգստացիր, հանգստացիր. չը պէտք է
բարկանալ, թանկապին մայրիկ:

Տիկ. Կէթէ. (Գլուխը համեմով դռնից): Ի՞նչ պատահեց:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ոչինչ, ոչինչ:

Տիկ. Կէթէ. (Գլուխը յես է հաշում դռնից):

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Շատ շնորհակալ եմ—ոչինչ: Ամբողջ 10
մարկի ամաններ է փշուր-փշուր արել: Դեռ էլի ոչինչ, եւ ամ-
բողջ հիանալի մայօնէզը: չէ... (Յես է մզում Յոհաննեսին):

ՅՈՀԱՆՆԵՍ. Մայրիկ, սիրելի մայրիկ: Է՞ն, մի անդամ էլ մայօ-
նէդ չենք ուսի:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ոչ, ոչ: Դուք չափազանց թեթև էք վերաբերուում: Դուք դէն գցելու փողեր չունէք: Չափից դուրս կակուղ էք ծառաների հետ և միայն երես էք տալիս նրանց:

ՅՈՀԱՆՆԵՍ. Բայց չը որ դրանք շարունակ ամանների հետ գործ ունեն ետք...

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ես խօ բռնակալ չեմ: Ինձ մօտ աղախինները ապրում են վեց, եօթ տարով: Բայց երբ մի որ և է բան կոտրում են, պարտաւոր են փոխարէնը գնել: Ի հարկէ, նրանք ձեր տանը կարկանդակ և խաւեար են ուտում: Բոլորը ձեր այդ նոր գաղափարներն են: Ազատեցէք ինձ դրանցից: Լոտում էք:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Զուարքադէմ): Դէ, մայրիկս, աւելի բարի եղիր:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ես հէնց բարի եմ, զաւակս: (Համբուրում է նրան): Ա՛խ դու մտքամոլոր գլուխ: Ասում եմ՝ ախր կեանքի մարդ չես դու:

Երեսում է ինչպէս աղախինը պատշկամբի վրայ սրբում է յատակը և հաւաքում ամանների կտորտանքները:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Նփորուած): Ճիշտ է, մայրիկ: (Ուրախ): Բայց ինչու դու միշտ այդպիսի աչքեր ես շինում... այդպիսի աչքեր: Մի ինչ-որ երկիւղ կայ աչքերումդ. մի ինչ-որ լարուածութիւն:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ե՞ս. Ա՛խ, ինչ ես ասում... ես չը գիտեմ ճշմարիտ... ինչպէս թէ աչքերս մի տեսակ են:

ՅՈՀԱՆՆԵՍ. Մէկ էլ նայիր ինձ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Անխելք տղայ: (Յառած նայում է նրան): ՅՈՀԱՆՆԵՍ. Ա՛յ, այժմ լւա է:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Անխելք տղայ: Ես այնպէս կուզէի, որ դու միշտ ուրախ լինէիր, ուրախ մարդ լինէիր, չանչս:

ՅՈՀԱՆՆԵՍ. Այդ, մայրիկ, դու երեք չես տեսնիլ. գոհ մարդիկ փեթակում եղած արու մեղուների նման են. ողորմելի ոչչութիւններ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ինչ օգուտ այդ ամենից...

ՅՈՀԱՆՆԵՍ. (Աւելի լուրջ եւ մի եւ նոյն ժամանակ յուզուած): Եւ երեխան, որ այնտեղ այժմ քնած է, նոյնպէս պէտք է ինձ նման լինի, մի իսկական դժոխ մարդ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ասուած չանէ, չաննէս:

ՅՈՎՀԱՆՆԵՍ. Նա ընդհանրապէս ուրիշ տեսակ մարդ պիտի դառնայ, քան ես եմ: Ես դրա մասին կը հոգամ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Մարդը ենթազրում է, իսկ Ասուած կարգադրում: Մենք ես արել ենք, ինչ որ կարողացել ենք:

ՅՈՀԱՆՆԵՍ. Է՞ն, մայրիկ, ես էլ վերջապէս ուղղակի անաղողակ մէկը չեմ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ի հարկէ ոչ: Ես այդ տեսակ բան չեմ առում: Այդ ես բնաւ չեմ էլ ուզում... Բայց դու հիմա հէնց ինքը ասացիր, որ ֆիլիպպը պէտք է ուրիշ տեսակ լինի: Եւ... և... լսիր, դու չէ որ չես հաւատում... Դու բոլորովին չես հաւատում ողորմած Աստուծուն: Դու՝ իսկն ասած, ոչ մի կրօն չունիս: Իսկ այդ պէտք է մին տանջանք պատճառի:

ՅՈՀԱՆՆԵՆԵՍ. Կրօն, կրօն: Իրաւ է ես չեմ հաւատում, որ Աստուծ մարդու տեսք տնի, մարդու պէս է գործում, որդի նի և այդ օրինակ բաներ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Բայց, Յոհաննէս, պէտք է հաւատալ:

ՅՈՀԱՆՆԵՆԵՍ. Ոչ, մայր: Կարելի է չը հաւատալ և այնու ամենայնիւ ունենալ կրօն: (Մի ժիշ յափէտակուած): Ավ ջանում է ճանաչել բնութիւնը, նա ձգուում է ճանաչել Աստուծուն: Աստուծած՝ բնութիւնն է: «Ի՞նչ կը լինէր մի Աստուծած, որ միայն դրսից է ներգործում և ամբողջ տիեզերքը մատի նշանով սպիտում է պայոյա գալ: Նրան վայել է տիեզերքը շարժել և կառավարել ներգուսա», ասում է Գէօթէն, մայրիկ. իսկ նա այդ աւելի լւա էր հասկանում, քան աշխարհիս բոլոր պաստօնները և հոգենոր տեսունները:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ա՛խ, զաւակս: Երբ ես լսում եմ քո այդ խօսքերը... շատ ախսոսում եմ, որ դու աստուծաբան չը մընացիր: Ես յիշում եմ դեռ, թէ քո փորձնական քարողից յետոյ ինչ ասաց ինձ սարկաւազը...

ՅՈՀԱՆՆԵՆԵՍ. (Զուարնութեամբ) Մայր, մայր... անցած-զնացած ժամանակներ: (Լառում է դուն զանգը):

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Դրսի դուռն է—բայց չէ որ կողպուած չէ: (Մի բանի բայլ և անում դափի մուտի դուռը: Բայլիում են մուտի դուռը):

ԼՈՒՅՑՈՐՈՐՈՒԾԻ ԼԵՄԱՆ. (Հազին կապոյն խունացած չփի դերիա, ներս է մտնում վախվիսելով): Բարի լուս:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. { (Ոչ բոլորովին միաժամանակ): Բարի.

ՅՈՀԱՆՆԵՆԵՍ. { ափկին լէման:

Տիկ. ԼԵՄԱՆ. Ես միայն ուզում էի տեսնել թէ... ներեցէք տիկին ֆօկերատ: Ես երկար որոնում էի անկիցիս:

ՅՈՀԱՆՆԵՆԵՍ. Ինչպէս չէ, ափկին լէման, պ. Բրառունը այս տեղ է:

Տիկ. ԼԵՄԱՆ. Ծը, ծը... (Այդի անցնելով սենեակը): Եթէ կարողանայի այսպէս սարքուել:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ի՞նչպէս է ձեր քէփը, տ. լէման:

ԽՈՎԱՅՐԱԳՐԱԴԱՐԱՆ
ԽՈՎԱՅՐԱԳՐԱԴԱՐԱՆ
1922

Տիկ. ԼէՄԱՆ. Ե՞ն, առ. Ֆօկերատ, լաւ չէ բանս. իսկի լաւ չէ Ծերուկիս դուրս վուղեցիք: Ել անկարելի էր տանել: Այժմ ինքս էլ չը գիտեմ ինչ անեմ երեխաներիս. հինգ երեխայ է, ինչպէս պահեմ...

Տիկ. ՖՕԿԵՐՍ. Ի՞նչ էք ասում: Բայց...

ԼէՄԱՆ. (Աւելի ու աւելի բացուելով): Գիտէք, առ. Ֆօկերատ. Եթէ ես ինքս էլ գոնէ այսքան թոյլ չը լինէի... Թէ չէ շատ եմ ձեռքից ընկել. չարութիւնը, հասկանում էք, մարդ արարածին բոլորովին փշացնում է ու ստորացնում. հէնց այդ պատճառով էլ ինձ ոչ չէ կարող մնջադրել: Ես ասացի իմ ծերուկիս: Առողիք, ասում եմ, ի սէր Աստուծոյ, գնա քո ընկերակիցների մօտ, ասում եմ: Գնա քո հարբան ընկերներիդ մօտ, ասում եմ: Ես ինքս կաշուցո դուրս կը գամ և հինգ երեխաներիս կը պահեմ մենակ: Տես, ասում եմ, քեզնից ինչ օգուտ. քո աշխատածով քո կոկորդն ես թաց անում, ասում եմ: Դու իսկը չունես, ասում եմ: Եթէ դու իսկը ունենայիր, ասում եմ, երեխաներիդ և կնոջդ այս խեղճութեան չիր հասցնի, ասում եմ: Տեմնում էք, տիկին Ֆօկերատ, ես նրան հէնց այդպէս ասացի. թէն գիտէք, այդ բոլորը ինձ համար անտանելի էր: Ես կ'ուզէի այնպէս խօսել, որ փշի պէս ծակէր. բայց ինչ օգուտ այդ բոլորից: Ելի ճշմարտութիւնն ասել, այդ աւելի լաւ է:—Դէն, մտածում էի, Աստուած ողորմած է, նա ինձ կը պաշտպանի իմ հինգ երեխաներիս հետ: (Խնջում է եւ սրբում աչերը):

Տիկ. ՖՕԿԵՐՍ. Մենք միշտ պիտի...

Տիկ. ԼէՄԱՆ. Հա, ես հէնց այդ ասացի: Գնա դու թէկուզ Հնդկաստան, ասում եմ: Գնա: Եթէ դու աղնիւ մարդ ես, ասում եմ, և մի երկու պֆենիդ յետ ձգես, ասում եմ, այն ժամանակ դեռ կարելի է ապրել: Իսկ ես աղնիւ կին եմ, տիկին Ֆօկերատ: Թող իմ տառաջ ինչ ուզում է զրուած լինի: Ես մատովս չեմ կպցնիլ...

ՅՈՀԱՆՆԵՍ. Դուք կամնում էք պ. Բրաունի հետ խօսել, տիկին Լէման:

Տիկ. ԼէՄԱՆ. Զէ, ես իսկապէս մոռացայ բոլորովին: Այս անդ մի օրիորդ կայ, նա ուզում է նրան տեսնել: (Մուտքի դոնից ներս է երեւում օրիորդ) Մառի գլուխը եւ իսկոյն յետ հաւում: Յոհաննեսը տեսնում է նրան):

ՅՈՀԱՆՆԵՍ. Համեցէք... համեցէք, խնդրեմ. ներս մտէք: (Տիկիններին, որոնք ոչինչ չին նկատել): Օրիորդը: Այդ օրիորդն էր: (Տիկին Լէմանին): Դուք պէտք է նրան ներս բերէք: (Բաց անելով մուտքի դուռը): Խնդրեմ, չնորհալի օրիորդ: Դուք կա-

մնում էք իմ բարեկամ՝ Բրաունին տեսնել: Բարի եղէք, ներս չնորհ բերել:

Օրիորդ Աննա Մառ 24 տարեկան է. միջահասակ, փոքրիկ զիւով, մոթի, հարթ սանրած մազերով, նորք ջղալին դիմագծով: Նրա համարձակ շարժուածքների մէջ կայ գրացիա և ոյժ: Մի որոշ ինքնավտանութիւն նայուածքում, մի որոշ կարտասութիւն, որ միւս կողմից չափատրում է համեստութեամբ և տակտով, այնպէս որ նա բնաւ չէ խախտում կանացիութեան տպատրութիւնը: Աննան աև հագուստով է:

ՕՐ. ԱՆՆԱ. ՄԱԹ. (Ներս է մենում): Ա՛յս, աղաջում եմ ինձ ներէք: Ինձ չափազանց անախորժ է ձեզ անհանգըստունել:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ոչ, համեցէք, խնդրեմ, խնդրեմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Տիկին Լէմանը յետ չը դարձաւ—իսկ ես ուզում էի նրան միայն ասել—որ արդէն... որ ես պարոն Բրաունին կարող եմ ուրիշ անգամ տեսնել:

ՅՈՀԱՆՆԵՆԵՍ. Բայց ոչ, խնդրեմ.—Ես իսկոյն կը կանչեմ Բրաունին: Նստեցէք, խնդրեմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Շատ չնորհակալ եմ: (Մենում է կանգնած): Ճշմարիտ, ինձ շատ անախորժ է, որ...

ՅՈՀԱՆՆԵՆԵՍ. Բայց խնդրում եմ, չնորհակալ օրիորդ: Ես այս բուլէիս կը կանչեմ Բրաունին:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց ես ձեզ նեղութիւն եմ պատճառում, ես...

ՅՈՀԱՆՆԵՆԵՍ. Բնաւ, օրիորդ:—Ներեցէք, իսկոյն: (Դուրս է գնում պատօգամբը):

Փոքր դադար ու թեթև շփոթութիւն:

Տիկ. ԼէՄԱՆ. Դէ, ուրեմն, ես գնամ: (ՕՐ. Աննային): Վերադարձին դուք անշուշտ մենակ էլ կը գտնէք ճանապարհը:

ՕՐ. ԱՆՆԱ. Շատ չնորհակալ եմ, որ ինձ ուղեկցեցիք: Թող առեւէք ձեզ մի չնչին... (Տալիս է նրան փող):

Տիկ. ԼէՄԱՆ. Շատ չնորհակալ եմ, շատ չնորհակալ: (Տիկ. Ֆօկերատին): Ահա իմ վաստակը պյուր, տիկ. Ֆօկերատ: Աղնիւ խօսք: Թէն դա հետ բան չէ, բայց ես դարձեալ ասում եմ, լաւ է մարդ իր կաշին ծափի, քան ապրի մի այնպիսի հարբանի հետ: Հա... Հարկաւոր է միայն հաւատալ ողորմած Աստուծուն: Գիտառատ Աստուած դեռ ինձ երբէք անտես չի թողել: (Բնելով դռան կորից): Հիմա ուղղակի կը գնամ խանութ, մի բան գնելու իմ հինգ ձագուկերիս համար: (Դուրս է գնում):

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. (Կանչում է նրա լետերից): Մատէք խոհանոց: Այստեղ քիչ-միշ բան կայ ձեզ համար: (Մօտեցնում է իր արուր Աննայի համար դրուած արոռին եւ նայում է): ԽՆԴՐԵՄ, օրիորդ, չեք կամենալ նստել:

ՕՐ. ԱՆՆԱ. (Դանդաղութեամբ նստելով): Ես ամեննեին յոզնած չեմ, ևս...

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Այս կողմերին դուք ծանօթ եք:

ՕՐ. ԱՆՆԱ. Ո՞չ—Ես ոռուաց Օստէեան գաւառից եմ: Ես... (Նփորուած լուսին):

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Այս կողմերը շատ աւազուտ են: Ինձ դուք չէ գալիս այստեղ: Ես Բէջսլառուի շրջակայրից եմ: Եւ ամեն բան այստեղ այնպէս թանգ է, դուք երևակայել անգամ չեք կարող: Իմ մարդս ազնուականների կալուածների կապալառու է: Գործը վաս չէ գնում, մենք կարողանում ենք երբեմն էլ մի բան ուղարկել մեր երեխաններին: Լիճը դուք տեսնել էք: Իսկապէս շատ գեղեցիկ է: Պէտք է ասել, որ լիճը իսկապէս գեղեցիկ է: Մեր ամառանոցը շատ յարմար է: Ուզիղ եղերքի մօտ է: Մենք ներքեր պարտիզում երկու նաւակ ունենք: Բայց ես չեմ սիրում, երբ երեխանները նաւարկում են: Ես շատ վախկոտ եմ: —Թռըլ տուէք հարցնել, դուք այժմ Բէրբիշնում էք ապրում:

ՕՐ. ԱՆՆԱ. Այս—Ես այստեղ առաջին անգամն եմ: Ես կամենում եմ Բէրլինը մի լաւ տեսնել:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Օ՛, ի հարկէ: Բէրլինը արժէ տեսնել:—Բայց շատ աղմկալի է:

ՕՐ. ԱՆՆԱ. Օ՛, ի հարկէ. շատ աղմկալի է: Մանաւանդ երբ մարդ սովոր է փոքր քաղաքներին:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Դուք որտեղից էք, եթէ թոյլ տաք...

ՕՐ. ԱՆՆԱ. Ես գալիս եմ Բէվէլից և վերագանում եմ Ցիւրիխ: Վերջին չորս տարիները ես ապրում էի Ցիւրիխում:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Այս, գեղեցիկ Շվեյցարիա:—Դուք երեք պղգականներ ունէք Ցիւրիխում:

ՕՐ. ԱՆՆԱ. Ո՞չ, ես ուսանում եմ:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Դուք... համալսարանում:

ՕՐ. ԱՆՆԱ. Համալսարանում:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Դա անկարելի է: Նշանակում է դուք ուսանողուհի էք: Ի՞նչ էք ասում: Դա շատ և շատ հետաքրքրական է:—Ուրեմն իրաւ ուսանողուհի էք:

ՕՐ. ԱՆՆԱ. Այս, յարգելի տիկին:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Ասացէք, խնդրեմ: Եւ ի՞նչ, այդքան շատ սովորել հաճելի է ձեզ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Զուարք): Օ՛, ի հարկէ: Շատ—անշուշտ յայտնի աստիճան:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Կարելի բան է դա:

Յոհաննէսը և Բրաունը երեսում են պատշկամբում: Կանայք տեսնում են, որ նրանք մօտենաւմ են, վեր են կենում:

ՕՐ. ԱՆՆԱ. Ճշմարիտ շատ եմ ցաւում, յարգելի տիկին, ձեզ անհանգստացնելուս համար:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Խնդրեմ, սիրելի օրիորդ, իսկապէս ինձ շատ ուրախացրեց երես առ երես տեսնել մի իսկական ուսանողուհի: Մեզ մօտ երբեմն զանազան անմիտ բաներ են պատրամց մասին: Դուք զգական էք պարոն Բրաունին:

ՕՐ. ԱՆՆԱ. Ո՞չ—մենք ծանօթացանք իրար հետ Պարիզում, ցուցահանդիսին:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. (Մեկնելով նրան ձեռք): Մնաք բարով: Ինձ իրօք մեծ ուրախութիւն պատճառեց...

ՕՐ. ԱՆՆԱ. Խնդրեմ... կրկին խնդրում եմ, ներեցէք ինձ:

Տիկ. Ֆօկերախը գլուխ տալով հեռանում է մոտքի դռնով:

Յոհաննէսը և Բրաունը մի քանի վարկեան խորհրդակցում են պատշկամբում: Խորհրդակցութիւնը վերջացնելով, Յոհաննէսը մնում է պատշկամբում, մինչդեռ Բրաունը մտնում է սենեակը:

ԲԲԱՌԻՆ. (Զարմացած): Օրիորդ Մառ՝ Դուք.՝.

ՕՐ. ԱՆՆԱ. Այս—բայց և յուսով եմ, դուք ինձ այնքան ամստակտ չեք համարի... մեղաւորը ձեր տանտիրուհին է. այդ տարօրինակ տիկին Լէմանն է, որ ես ձեզ մինչև այստեղ...

ԲԲԱՌԻՆ. Նուիրական Բիմբան:

ՕՐ. ԱՆՆԱ. Դուք չեք մոռացել ձեր նուիրական Բիմբամը:

ԲԲԱՌԻՆ. Բայց ես երազում անգամ այդ տեսակ բան չեի սպասում: Դա իսկապէս հիանալի է:

ՕՐ. ԱՆՆԱ. Ուրեմն էլի մնում է ձեր նախկին «հիանալին»: Ձեզ համար ամեն ինչ միշտ հիանալի է: Դուք ես բնաւ չեք փոխուել, իրաւ:

ԲԲԱՌԻՆ. Կարծում էք: Բայց օրիորդ, հանեցէք ձեր վերաբերուն:

ՕՐ. ԱՆՆԱ. Ո՞չ, ո՞չ—ի՞նչ էք ասում: Ես միայն ուզում էի տեսնել, թէ ինչ էք անում դուք: (Զարանի նենզութեամբ): Գլխաւորապէս ձեր մեծ նկարի մասին էի կամենում տեղեկանալ: Սրդէն կարելի է նրանով պանչանալ:

ԲԲԱՌԻՆ. Ստուերը, գաղափարն անգամ գոյութիւն չունի, ոչ էլ կտաւն է գնուած, օր. Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Լաւ չէ. իսկ եմ ասում, շատ վաս է: Իսկ դուք այնպէս հաստատ ինձ խրստացաք:

ԲԻԱՌԻՆ. Մարդս մտածում է, իսկ կառապանը վարում է:
Սակայն կրկին խնդրում եմ, հանուեցէք օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Հիմա ես ձեզ տեսայ, պ. Բրառուն, և յոյս ու-
նեմ...

ԲԻԱՌԻՆ. Ո՞չ, ոչ: դուք պէտք է այստեղ մնաք:

ՕՐ. ԱՆՆԱ. Այստեղ:

ԲԻԱՌԻՆ. Այս: Երեմի դուք չը գիտէք, որտեղ ենք մնաք:
Մենք Յոհաննէս Ֆօկերատի մօտ ենք: Անկարեած դուք նրան
բաւական ճանաչում եք իմ պատմածներից. բացի այդ
այսօր այստեղ կնունք է կատարում: Դուք ճշշտ ժամանակին
եք գալիս:

ՕՐ. ԱՆՆԱ. Ախ, ոչ, ոչ: Այդ բոլորովին անկարելի է:
Մանաւանդ որ այսօր ես պէտք է քաղաքում շատ տեղեր զնամ:
ԲԻԱՌԻՆ. Այսօր բոլոր տեղերը փակ են:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ ոչինչ: Ես պէտք է միայն լինեմ ծանօթ-
ներիս մօտ: Բայց մի երեակայէք, որ դուք արդէն աղատուում
եք ինձանից: Մենք պէտք է գետ մի անգամ էլ երկար դրու-
ցենք իրար հետ: Ես գետ պէտք է ձեզ խրատ կարդամ. ա՛խ,
դուք խստմազանց: Դուք, ինչպէս անսնում եմ, առաջուայ
նման պատկերներ միայն ձեր զլիսում էք նկարում:

ԲԻԱՌԻՆ. Նախ պէտք է մարդ իր զլիսում հոգեալէս պար-
զի: Իսկ վրձնները չեն փախչի:

ՕՐ. ԱՆՆԱ. Հը, ով զիտէ:

ԲԻԱՌԻՆ. Բայց ես ձեզ հիմա չեմ թողնի, որ գնաք. լուք
ինձ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ո՞չ, խնդրում եմ, պ. Բրառուն, թողէք ինձ
հանգիստ:

ԲԻԱՌԻՆ. (Կանչում է): Հանս, Հանս:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինդրում եմ:

Յոհաննէսը մտնում է կարմրելով:

ԲԻԱՌԻՆ. Թոյլ առելք ձեզ ծանօթացնել: Իմ բարեկամ Յո-
հաննէս Ֆօկերատ—օրիորդ Աննա Մառ:

ՕՐ. ՄԱ. { (Միաժամանակ): Ես ձեր մասին անքան
ՅՈՀԱՆՆԵՍ. } շատ եմ լսել:

ԲԻԱՌԻՆ. Երեակայիր, Հանս. օրիորդն ուզում է արդէն
գնալ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Այդ իմ կնոջս և մեզ բոլորիս շատ կը վը-
տացնի: Զէք ուզում նուիրել մեզ այս երեկոն:

ՕՐ. ԱՆՆԱ. Ճշմարիտ ես չը գիտեմ... Բայց երբ դուք
ինձ ասում եք, որ ես ձեզ անհանգստութիւն չեմ պատճառի—
ուրախութեամբ ես մնում եմ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ամենաին, ոչ մի կերպ: (Օգնում է նրան հա-
նել վերեազգեսր եւ տախս է Բրառուին): Կախիր, խնդրում եմ:
Ես իսկոյն կնոջս կը կանչեմ... (Մօտենում է ննջարանի դռանը,
եւ կանչում դեպի ներս): Կէթէ: (Մտնում է ննջարանիր):

ՕՐ. ԱՆՆԱ. (Մւղելով նայելու առաջ հագուստը): Զեր
բարեկամը շատ սիրալիր է:

ԲԻԱՌԻՆ. Գուցէ մի քիչ էլ չափազանց:

ՕՐ. ԱՆՆԱ. Ախ, ինչպէս թէ:

ԲԻԱՌԻՆ. Ես կատակ եմ անում: Նա շատ լաւ տղայ է:
Միայն երբ բանը նրա գրուածքին է գալիս, այն ժամանակ նա
ուարամարս է դառնում: Ահա կը տեսնէք. եթէ դուք երե-
կոյեան մնաք այստեղ, նա իր աշխատութիւնը անպատճառ կը
կարգայ ձեզ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինչի՞ մասին է նրա գրուածքը:

ԲԻԱՌԻՆ. Ինձ համար շատ գիտնական մի բան, ինչոր
փիլիսոփայական-քննադատական-պիֆիօ-ֆիզիօգիական մի զը-
րուածք: Ես ինչ դիտեմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ ինձ հետաքրքրում է: Ես ինքս էլ, «փիլի-
սոփայութեան հետ կապ ու եմ», ինչպէս ասում են սովորաբար:

ԲԻԱՌԻՆ. Դէ, օրինրդ, եթէ այդպէս է, դուք այնքան էլ
շուտ չէք պիծնի նրանից: Եթէ դուք սկսէք հետաքրքրուել նրա
աշխատութիւնով, անասելի կերպով նրան կ'ուրախացնէք:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Դալով ննջարանից): Բրառն:

ԲԻԱՌԻՆ. Ի՞նչ է:

ՅՈՀԱՆՆԵՍ. Գնա կէթէի մօտ: Հանգստացրն նրան քիչ:
Փոքրիկի մի կողիկը ինչոր շատ է դուրս ցցուած:

ԲԻԱՌԻՆ. Ի՞նչ ես ասում:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի հարկէ, դատարկ բան է. բայց էլի գնա:
Կէթէն իդուր տեղը իր համար հոգսեր է ստեղծում:

ԲԻԱՌԻՆ. Լաւ, լաւ: Գնացի: (Մտնում է ննջարանիր):

ՅՈՀԱՆՆԵՍ. Կիսս խնդրում է ներէք, օրիորդ: Նա կը
դայ մի քանի բոպէից յետոյ: Նա պատուիրել է ինձ առայժմ
ցոյց առ ձեզ մեր պարտէզը: Եթէ ի հարկէ, դուք դէմ չէք...

ՕՐ. ԱՆՆԱ. Օ՛, մեծ ուրախութեամբ:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Ժպտալով): Մենք իսկապէս գեղեցիկ անկիւն
ունենք—այսինքն մենք միայն վարձել ենք: Այստեղ ամենա-
հրապարիչը լին է: Դուք տեսել եք Մուգգէլեան լիճը: (Նա
տախս է օրիորդին նովանցը: Երկուսն ել խօսակցելով զնում են
դեպի պատճառի դուռը): Ես ասում եմ քաղաքը: Իմ իդէալ է
ընդարձակ պարկ՝ շրջապատած բարձր պատերով: Այստեղ մարդ
կարող է ապրել՝ անարգել նուիրուած իր նպատակներին:

ՕՐ. ԱՆՆԱ. Էպիկուր:

ՅՈՀԱՆՆԵՍ. Միանգամայն իրաւացի էք, այս: Բայց հաստացնում եմ ձեզ, ուրիշ կերպ անկարելի է... Ձեզ համար զով չ' լինի:

ՕՐ. ԱՆՆԱ. Օ՛, ոչ, իս ինձ սովորացրած եմ ցրաի:

ՅՈՀԱՆՆԵՍ. Թողնում է սննային առաջ գնալ և հնալում է նրան դէպի պատշկամբը: Այսուեղ նրանք մնում են մի քանի վարկեան: Երկում է, թէ ինչպէս ՅՈՀԱՆՆԵՍը ցուց է տալիս և բացատրում օտարունուն տեսարանները: Վերջապէս երկուան էլ անհետանում են պարտիզում: Բրառնը, իսկ նրա հետեւից սէթէն, դուրս են դալիս ննջարանից:

ԲԻԱՌԻՆ. (Ծուրջը նայելով) Նրանք գնացել են:

Տիկ. Կէթէ. Համ:

ԲԻԱՌԻՆ. Ո՛չ, ոչ, ինչ վերաբերում է կողին, այդ բոլորովին բնական է:

Տիկ. Կէթէ. Իսկապէս ես բոլորովին ճնշուած արամադրութեան մէջ եմ:

ԲԻԱՌԻՆ. Ճնշուած: Ինչո՞ւ:

Տիկ. Կէթէ. (Ժպտալով): Ես ուղղակի սրտի բարախում ունեմ:

ԲԻԱՌԻՆ. Դուք դեռ ես ջղային դրութեան մէջ էք:

Տիկ. Կէթէ. Նա շատ հպարտ է:

ԲԻԱՌԻՆ. Ո՞վ:

Տիկ. Կէթէ. Այն օրիորդը:

ԲԻԱՌԻՆ. Մառը. հպարտ.—Ամենեին:

Տիկ. Կէթէ. Ինչո՞ւ չէ. եթէ ես լինէի նրա տեղ, կարող էի...

ԲԻԱՌԻՆ. Ամենեին. ոչ, ոչ: Դուք իսկապէս նրան ստորացնում էք:

Տիկ. Կէթէ. Բնդհակառակը.—Ես սաստիկ պատկառանք եմ զգում զէպի նա:

ԲԻԱՌԻՆ. Համանք... Նա լինում է երբեմն ճիշտ որ քիչ մեծամիտ, բայց հեշտ է նրան յետ սովորացնել այդ բանից:

Դադա:

Տիկ. Կէթէ. Հանէսը այստեղ մոռացել է իր ձեռագրից մի թերթիկ: Օրիորդը հասկանում է որ և է բան զրանից:

ԲԻԱՌԻՆ. Ինչպէս չէ:

Տիկ. Կէթէ. Համանք.—Ինձ նմանները դրանց պէս կըրթուած մարդկանց մէջ մի քիչ խղճակի զեր են կատարում:

ԲԻԱՌԻՆ. Ա—ախ: Իմ իմացածս էլ շատ բան չէ: Ես էլ

մեծ ուսում չեմ առել: Բայց այնուամենայնիւ ինձ չէ կարող զարմացնել այդ չնշն դպրոցական իմաստութիւնը:

Տիկ. Կէթէ. Օրիորդը, ի հարկէ, խօսում է փայլուն:

ԲԻԱՌԻՆ. Փայլուն: Ոչ: Նա խօսում է այնպէս... ինչպէս մենք բոլորս ենք խօսում: Նա շատ խելացի է—բայց այդ պատճառով...

Տիկ. Կէթէ. (Ժպտալով): Իմ աղջիկ ժամանակս կարծես մի ձպուռ էի: Մենք ամբողջ օրերով շարունակ չըթշրթում էինք զատարկ բաների մասին: Այդ գոճէ սացաւ: Իսկ հիմա ամեննեին չեմ համարձակւում խօսել և առհասարակ վախենում եմ մի բան առել (Մօհենում է դեպի պատշկամբը տանող դռան): Մայրիկ, մի ին աւելի զիր:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. (Պատշկամբից, ուր նա հացը գցում է): Ել ով է լինելու:

Տիկ. Կէթէ. Օրիորդը:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Ո՞վ:—Հա հասկացայ.—լաւ, լաւ, Կէթէ:

Տիկ. Կէթէ. (Նորից Բրառնեին, հառաչելով): Ա՛խ, հիմա ամեն բան փշացաւ: Ոյժ ես գործ դնում.—բայց ինչ օգուտ գրանից: Սրդէն շատ ուշ է: (Մօհենալով վարդի փեղին): Նայեցէք, ինչ գեղեցիկ է երկում: Դեռ վարդ են: (Մեկնում է փունջը Բրառնեին հոտուելու համար): Եւ ինչպէս թունդ են բուրում:

ԲԻԱՌԻՆ. Հրաշալի:

Տիկ. Կէթէ. (Դնում է փունջը իր տեղը): Նա ջահէլ է:

ԲԻԱՌԻՆ. Ո՞վ:

Տիկ. Կէթէ. Օր. Մառը:

ԲԻԱՌԻՆ. Զը զիտեմ քանի տարեկան է:

Տիկ. Կէթէ. Ես արդէն քսան և երկու տարեկան եմ: Այս մենք անցրել ենք մեր հասակը:

ԲԻԱՌԻՆ. Խիստ անցրել էք: (Ծիծաղում է):

Տիկ. Կէթէ. Ա՛խ, ինչպէս սահմանափակ է իմ միտքս:

Տիկ. Ֆօկերատը դռնից մտցնելով զլուխը:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Սիրկիզը, ինձ մօտ ամեն բան արդէն պատրաստ է: (Յետ է բառում զլուխը: Կանչում է պատշկամբից դեպի պարտէզը): Հայրիկ, հայրիկ:

Պարոն Ֆօկերատը և պատօրը, երկուսն էլ շատ լաւ տրամադրութեան մէջ բարձրանում են պատշկամբի սանդուղներով:

ՖՕԿԵՐԱԾ. (Բաց դրներից, պատօրի վերական ձեռին): Համանք ցանկանաց ներս մտնել և հանել ձեր զիտեմը: Հահանա: (Մրտաց ծիծաղում է):

ՊԱՍՕՐ ԿՈԼԼԻՆ. (Չեռքին բոնած գլխարկը, ձեռնափայտը և սփառ ծիմելով): Հահանա: Խոկապէս որ շատ զուարձալի է. ինձ լոեցէք: Պֆ, պֆ—շատ զուարձալի է (Ծիծաղում է):

ՖՕԿԵՐՍ. Եւ ասում են, որ այդ ճիշտ եղելութիւն է, պարոն պաստօր: (Տանում է նրա նետելից վերարկում):

ՊԱՍՕՐ ԿՈԼԼԻՆ. «Պարոն նոր-ննջեցեալ»: (Ծիծաղում է): Պֆ, պֆ—«Պարոն նոր-ննջեցեալ, գուցէ էլի մի բան էք ցանկանում»: (Ծիծաղում է. կախում է պլեղը և գլխարկը, բասակը մնում է գլխին):

ՖՕԿԵՐՍ. (Ծիծաղելով նրա նետ միասին): «Պարոն նոր-ննջեցեալ... (Դիմելով Բրաունին): Բանը պատահում է մեզ մօտ զիւղում, մի թաղման, պ. Բրաուն... Դադալի շուրջ կանդնած են յուղարկաւորները, գիտէք... (Սարսափ արտայայտելով, վոազ): Յանկարծ, մի ինչոր բան ժամ է գալիս: Գուցէ մէկն ու մէկը աթնոն է շարժում, կամ թէ մի այլ բան է շարժում: (Սարսափ արտայայտելով): Բոլորը միասին ցնցում են:—Միայն ժամհարը, հահանա, չը վախեց, երկչոսներից չէր: Մօտենում է զգուշութեամբ դադալին, հահանա, ու թխկթխկացնում: (Զայնը նրանեցնելով ժամհարի ձայնին եւ մասներով բխիրխկացնելով սեղանին): «Պարոն նոր-ննջեցեալ—Պարոն նոր-ննջեցեալ: Գուցէ էլի մի բան էք ցանկանում»:

ՊԱՍՕՐ ԿՈԼԼԻՆ. (Ծիծաղելով): Այս, լոեցէք: Պֆ, պֆ: Այդ ճիշտ է, ևս ճանաչում եմ այդ ժամհարներին:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍ. (Մտնում է): Դէ, հայրիկ, համեցէք, թէ ոչ ապուրը կը սառչի:

ՖՕԿԵՐՍ. Ուրեմն, պարոն պաստօր, համեցէք, խնդրեմ:

ՊԱՍՕՐ ԿՈԼԼԻՆ. Լոեցէք, դուք այնու ամենայնիւ ձեր ասածն արիք, (Դէն է ձգում սփառի մնացորդը մոխրամանի մեջ եւ առաջարկում կուռը տիկին Ֆօկերատին): Տիկին Ֆօկերատ:

ՖՕԿԵՐ. (Կամենալով կուռը տալ կիրկին): Բայց, ուր է Յոհաննէսը:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍ. Իսկ օրինրդը.—Դա արդէն լաւ չէ Յոհաննէսի կողմից: Հիմնալի ճաշը չէ որ...

ՖՕԿԵՐՍ. (Ուրախ): Համ, լսում էք, պ. պաստօր. Կրերաւ և զինու թասի մէջ աեղք: Հա հա հա.

ՊԱՍՕՐ ԿՈԼԼԻՆ. «Սատանան միշտ այնտեղ». Հա հա հա... ՖՕԿԵՐՍ. Երեկի այդ այն կինն էք: Մենք տեսանք այնտեղ լիք վրայ մի զոյգ: Այնպէս չը, պարոն պաստօր:

ՊԱՍՕՐ ԿՈԼԼԻՆ. Ի հարկէ, ի հարկէ: Նրանք այնտեղ նաւարկում կը լինեմ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍ. Այս, ես կարծում եմ, լաւ է՝ մենք նըստենք ճաշի:

ՖՕԿԵՐՍ. Ազ չի գալիս ժամանակին...

ԲՐԱՌԻՆ. (Որ նայում եր պատշաճից դեալի պարտեզը, վերադառնում է): Նրանք գալիս են, գալիս են:

ՖՕԿԵՐՍ. Եւ արդէն ժամանակին էր:

ՅՈՒՆՆԵՍ. Աննան բարձրանում են պատշաճը:

ՅՈՒՆՆԵՍ. Մենք ուշացանք:

ՖՕԿԵՐՍ. Հենց ժամանակին է:

ՅՈՒՆՆԵՍ. Խնդրում եմ նորէք: Մենք... Այնպէս հրաշք չը վրայ... Թոյլ կը տաք: (Ներկայացնելով): Պարոն պատօր Կոլլին: Իմ հայրս, իմ մայրս:՝

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍ. Մենք արդէն ծանօթ ենք:

ՅՈՒՆՆԵՍ. Կիսու—օրինրդ Մառ:

Կարգի են բերդամ իրանց և դիմում պատշաճը: Տիկին Ֆօկերատը թևանցուկ պաստօրի հետ, ամկին նէթէն ձեր Ֆօկերատի հետ, իսկ օր, Մառին տանում է Յոհաննէսը Մենակ և բոլորից վերջում գնում է Բրաունը:

Սենեակը մնում է զատարկ: Ննջաբանից լսում է ծծմօր մեզմ երգը.—Ենանի, նանի աւդ ի՞նչ է շնչում: Այդ ի՞նչ է այնտեղ յարդի մէջ երգը: Այնտեղ ճշում են սիրու սպիտիներ, նրանք ակլոր են և դեռ արժմում: Պատշաճը լսում է ափաների պայմուկը, յանկարծ մըտանիւտուրը: Պատշաճը լսում է ափաների պայմուկը, յանկարծ մըտանիւտը: Յոհաննէսը մնում է նէթէն, սեղանի արկղից ի՞նչ որ հանելու նրա լեռնից մտնում է Յոհաննէսը:

ՅՈՒՆՆԵՍ. Բայց Կէթէ—քեզ դեռ կարելի չէ... Քեզ դեռ կարելի չէ վազել: Թաղ, ես ինքս...

ՏԻԿ. Կէթէ. Այս, ես այնքան էլ թոյլ չեմ:

ՅՈՒՆՆԵՍ. (Կրակու եւ վառվուն): Գիտես զու: Նա մի հրաշալի էակ է: Ինչպիսի գիտութիւն և ինքնուրոյնութիւն գատառութեան մէջ: Եւ երեակայիր մի այդպիսի էակ չարչագատութեան մէջ: Եւ այդի հազիր է ծայրը ծայրին հասցնում: Դէ միշտ ես, Բրաունը մեղ միշտ պատմում էր նրա մասին: Խոկապէս մեր պարագն է և պարտականութիւնը, որ նրան համոզենք՝ մի երկու շաբաթ այստեղ ապրելու:

ՏԻԿ. Կէթէ. Եթէ դու ցանկանում ես:

ՅՈՒՆՆԵՍ. Զէ, ես չեմ ցանկանում: Այդ շատ աւելի կարելու է քեզ, քան ինձ. դու պէտք է ցանկաս: Այդպիսի մի էակից դու կարող ես շատ բան սպարել:

ՏԻԿ. Կէթէ. Դու, ճշմարիտ, երեմն շատ վատն ես, Հաննէս:

ՅՈՒՆՆԵՍ. Բայց միթէ ճիշտ չէ: Դու պէտք է տեսնզային եռանդով օգտուես ամեն մի առիթից, որ կարող է մտաւորա-

պէս քեզ առաջ տանել քո զարգացման մէջ։ Դու պէտք է ձը տես այդ բանին։ Դու պէտք է օրիորդին պինդ պահես այստեղ և չեմ հասկանում, ինչպէս կարելի է այդքան անտարբերնել։

Տիկ. Կեթի. Ես, այս, հաւածայն եմ քեզ հետ։
ՅՈՀԱՆՆԵՍ. Չեր մէջ ամենաթեթիւն կրակ չը կայ. ամենաշնչին ձեռներեցութիւն։ — Սոսկալի է։

Պատորը դրսում զնզնդացնում է բաժակը։

Տիկ. Կեթի. Ա՛խ, Հաննէս, հիմա դնա, գնա։ Պատորը կինաց է առաջարկում։ Ես իսկոյն կը գամ։ Ես, հաւածայն, համակարծիք եմ քեզ։ Զե՞ս որ մենք չը պէտք է երկուսս էլ բացակայ լինենք այստեղից, երբ...

ՅՈՀԱՆՆԵՍ. Դէ, մի նեղանար, մի նեղանար, ԿԵԺԵՇ։ (Նա համբուրում է նրա արտասուալից աչեւը եւ ըստ գնում է պատեկամբը)։

Լսում է պատորի ձայնը։ Ծծմօր խուլ երզը զեռ ևս մեզմ հըն-
չում է։ Կէթէի հետ ինչ-որ բան է պատահում, հէնց որ Յոհաննէսը դուրս
է գալիս, նա միանգամից նուազում է, թուանում և անհաստատ քա-
լուածքով գնում դէպի պատշկամբը, ձեռքով որոնելով ինուելու մի բան։
Մի քանի անդամ դիմի թեթև պատոյտ է սկսում, Վերջապէս ոյժ չու-
նենալով զնալու, նա ընկնում է աթոռի վրայ։ Նրա աչքերը անշարժ
տասուք է երեսում։ Պատորը վերջացնում է կենացը։ Բաժակները իրար են
զարկում, սէթէն հաւաքում է ոյժերը, վեր է կենում աթոռից և դիմում
պատշկամբը։

(Ար շարտառակուի)

Ե. — Ա.

ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ

Գ Բ Ա Մ Ա

Գերհար Հառապտմանի

Խ Ր Կ Ր Ո Ր Դ Գ Ո Ր Մ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Գեղեցիկ աշնանային առաւօտ է։ Տիկին Ֆօկերատը տնալին հագուս-
տում, զողնոցով և բանալիների կապոցով, պատրաստում է սեղան՝ նախա-
ճաշի համար։ Լսում է մի քանի տղամարդկանց ձախներ, որոնք երգում են։
Շնում Աստուած լաւ շնորհք կամի յայտնելու... Մի երգեցիկ միութիւն ան-
ցնում է տան մօտով։ Օրիորդ Աննա Սառ, Խաղողով լի մի կողով կանից
կախ, բարձրանում է պարտիզաց պատշկամբը։ Նա կանդ է առնում, ա-
կանջ է դնում երգեցողութեանը և յետով, ձեռքով աչքերը արեգակի լու-
սից պաշտպանելով, նայում է լճի վրալից գէպի հեռուն։ Երգեցողութիւնը
քանի գնում, նոսազ է լսում։ Աննան ներա է մտնում։ Նա հազար է կարձ
թեւերով առաւտեան և զգեստ, իսկ դլիմին ու վզին ցցած է ասեղնագործ
թաշկինակի Կրծքին։ Մի վնչիկ աշնանային գոլնզոյն տերեւներից։

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Բարի լոյս, օրիորդ։

ՕԲ. ԱՆՆԱ. (Կողովը մի կողմ է դնում, ըսապով մօտենում
է տիկին Ֆօկերատին եւ համբուրում նրա ձեռքը)։ Բարի լոյս,
մայրիկ Ֆօկերատ։

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Այսպէս կանուխ արդէն ոտքի վրայ, սի-
րեկի օրիորդ։

ՕԲ. ԱՆՆԱ. Մենք խաղող էինք քաղում, պ. Յոհաննէսը
և ես։

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Հէնց ամենալաւ ժամանակն է։ (Կողովից
խաղողի մի քանի հատապտուղների համբ տեսնելով)։ Էլ աւելի
քաղցրանալու չէ։ — Իսկ ձեզ համար ցուրտ չէ, օրիորդ։ (Մա-

ներով տօւափում է Աննայի մերկ ձեռքը): Այդպէս թեթև... ինձ թւում է, որ այսօր բաւականին զով է:

ՕՐ. ԱՆՆԱ. (Խօսակցութեան ժամանակ խնամքով հանում է ողկոյզները եւ դնում փայտի ափսի վրայ): Այն, զով է:—Բայց ինձ համար այդ ոչինչ:—Ես ցրտին սովոր եմ:—Օրն աննման է:—Լին մէջ այն ցիցերը—գիտէք այն ցիցերը, որոնցից կապում են նաւակները—այսօր վաղ առաւտեան բոլորովին սպիտակել էին եղեամից:—Այդ շատ տարօրինակ էր թւում: Առհասարակ այստեղ հիանալի է:—Կարող եմ ձեզ այժմ մի քիչ օդնել, մայրիկ ֆօկերատ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱԾ. Տուէք ինձ, ինդրեմ, շաքարամանը:

ՕՐ. ԱՆՆԱ. (Դնում է տախարամանը սեղանի վրայ: Տակաւին կորացած սեղանի վրայ եւ մի կողմ նայելով): Դուք ինձ վրայ չէք բարկանում, որ ես ձեզ՝ մայրիկ ֆօկերատ եմ կանչում:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱԾ. (Միծաղում է): Ա՛ն, ինչո՞ւ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես ինչպէս բախտաւոր եմ, որ դուք ինձ թոյլ էք տալիս այդ: (Յանկարծ եւ զերմ համբուրում է տիկին ֆօկերատի): Ա՛խ, ես ձեզնից առհասարակ այնքան չնորհակալ եմ, որ դուք ինձ թոյլ էք տալիս՝ այստեղ լինելու:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱԾ. Այդ ինչ ասելու բան է, օրիորդ Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես ինձ շատ երջանիկ եմ զգում ձեր ընտանիքում: Դուք բոլորդ այնպէս սիրալիք էք դէպի ինձ: Դուք առհասարակ բոլորդ էլ լաւ մարդիկ էք:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱԾ. Ինչպէս չէ... Դուք ձեր շորերի վրայ ամառնաթել էք բերել: (Նա վերցնում է Աննայի շորերից կպած ասրդուսայնները):

ՕՐ. ԱՆՆԱ. Ես չը գիտէի, որ մարդ կարող է այդքան երջանիկ լինել ընտանիքի մէջ: Մինչև այժմ այդ ամենը ինձ անձանօթ էր:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱԾ. (Դեռ եւս տարունակելով վերցնել սարդուսայնները): Այդ տեսակ բան չեն ասիլ, աչքով կը տաք, օրինրդ:—Սպասեցէք ահա այստեղ ևս... Կարծես իսկական թելեր լինեն:

ՕՐ. ԱՆՆԱ. Միթէ դուք հաւատ չունէք, մայրիկ ֆօկերատ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱԾ. Ո՛չ, աչ, սիրելիս: Դուք ճշմարիտ էք առւմ, ողորմած Աստուած շատ գթառատ է դէպի մեզ: Բայց այնուամենանիւ ամենը ուղիղ այնպէս չէ, ինչպէս կարող էր լինել:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես այդ չեմ հասկանում... ախր դուք բոլորդ... Ախ աչ, այդ տեսակ բան չը պէտք է ասէք:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱԾ. Ո՛չ, աչ: Դուք իրաւացի էք: Հարկաւոր չէ արտնջալ: (Փոխելով խօսքը): Այժմ շատ լաւ է, որ դուք մեղ մօտ էք: (Խորհրդաւոր): Յոհաննէսի համար էլ դուք մի բարի ոգի էք:

ՕՐ. ԱՆՆԱ. (Նվիրուած գոյնը փոխւում է: Յանկարծ եւ կրակոս): Ուրեմն իրաւ դուք ինձ մի քիչ համակրում էք:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱԾ. Ես ձեզ մինչև անգամ շատ եմ սիրում, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց աչ այնպէս, ինչպէս ես ձեզ: Ինչպէս հարազատ մօրս եմ ես ձեզ սիրում: (Դատարկ կողովը վերցնելով, կրկին պարտէ գնալու դիտաւորութեամբ): Պարոն Յոհաննէսը նոյնպէս բարի սիրտ ունի, խիստ փափուկ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱԾ. Ինչպէս թէ:

ՕՐ. ԱՆՆԱ. Հէնց ընդհանրապէս:—Երէկ փողոցում օրինակ, հանդիպեցինք մի հարբած մարդու: Այդ ժամանակ երեխաները վերադառնում էին ուսումնարանից: Զափահաս մարդիկ էլ ասենք հանդիսաւ չէին տալիս նրան: Միւգդէլեան ամբոցիկ մօտ հաւաքուել էր խուռն ամբոխ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱԾ. Այն, այն. նա այդ տանել չէ կարող: Այն ժամանակ արդէն նրան դժուար է պահել: Այդ բնաւորութիւնը նրան շատ անախորժութիւնների պատճառ է եղել:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ դուք լաւ չէք համարում, մայրիկ ֆօկերատ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱԾ. Լաւ:—Ա՛խ... ի հարկէ, ինչո՞ւ չէ: Այն, նա շատ բարի տղայ է:—Բայց եթէ լաւ մտածենք, ինչ օգուտ այդ ամենից: Ի՞նչ օգուտ այդ բոլոր բարութիւնից: Բացի այդ, որքան էլ բարի լինի, այնուամենայնիւ Աստուծոց երես է դարձրել... Այդ բոլորովին հեշտ չէ: Այդ կարող էք անշուշտ հաւատալ, օրինրդ, մի մօր համար... Ծնողների համար—որոնք, կարող եմ ասել, իրանց սրտի արիւնը չեն խնայել՝ իրանց որդուց մի բարեպաշտ քրիստոնեայ կրթելու համար: (Խնչում է, որպէս զի վրդովմունելը ծածկի): Անպիտան հարբուխ: Ամբողջ օրը ինձ տանջում է... (Գբաղուելով, փոքի արբելով, իիշ լուրինից լետոյ): Նա բարի է, այն: Այդ բոլորը շատ լաւ է և գեղեցիկ, բայց հէնց այդ է կրկնապատկում ցաւու: Եւ տեսնում էք, թէ ինչպէս նա տուժում է: Նրա գործունէութեան մէջ բնաւ աջողութիւն չը կայ: Միշտ և յափտեան անհանգատութիւն և շտապութիւն: Միշտ մի կատարեալ որսորդական տագնապ: Գէթ մի բան էլ է դուրս գար այդ բոլորից: Բայց մարդ տեսնում է, որ նա առաջ չէ գնում:—Սակայն ինչպէս էր նա առաջ: Մի երեխայ... մի զարմանալի երեխայ էր նա: Դեռ յի-

դում եմ, պաստօր Շմիդէլը... ամենքը միայն զարմանում էին: Տաններեք տարեկան հասակում երկրորդ դասարանում էր: Տանուեօթ տարեկանում աւարտեց գիմնազիան—իսկ հիմա: Հիմա համարեա բոլորը նրա առաջն են տուել, որոնք նրա կէտք չափ ընդունակ չէին, պաշտօններում շատ առաջ են գնացել:

Օր. ԱՆՆԱ. Բայց իսկապէս այդ շատ բնական է:—Այդ միայն ապացուցանում է, որ պ. Յոհաննէսը մինչև հիմա եղածից տարբերուել է ուզում: Նա չէ ցանկանում հարթած ճանապարհով գնալ: Պարոն Յոհաննէսը պատկանում է այն մարդկանց թուին, որոնք եւու ճանապարհներ են որոնում:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Բայց դրա համար ոչ մի մարդ բան չէ տալիս, օրիորդ ԱՆՆԱ: Ի՞նչ օգուտ որ նա այնքան իրան մաշում է: Հարիւրապատիկ աւելի ես կ'ուզենայի որ նա մի հասարակ գիւղացի լինէր—կամ այզեպան, կամ թէկուզ մի որ և է պաշտօնեայ, կամ մի այլ բան—միայն թէ չը լինէին նրա այդ անվերջ մանրակրիտ որոնումները... հա, օրընդդ: Ներեցէք որ փշացնում եմ ձեր զուարթ տրամադրութիւնը: Ինձ երբեմն այդպիսի մաքեր են պաշարում: Երբեմն այնպէս է լինում որ թուում է, թէ այլս անկարող ես տանել, այդ բոլորը: Իսկ յետոյ դարդ ես անում, դարդ անում ու ասում: «Աստուած ուղրմած է»:—Այն, այն՝ Ծիծաղեցէք, ծիծաղեցէք: Այդպէս ահա հին կարծիքների մարդ եմ ես և դրանցից ես յետ չեմ կանգնիլ: Նրանից, որ վերեսում է—նրանից ոչ մի ոյժ աշխարհում չէ կարող ինձ բաժանել:

Օր. ԱՆՆԱ. Այդ ես էլ չեմ ուզում: Եւ ես չեմ էլ ծիծաղում, մայրիկ ֆօկերատ: Բայց տեսնում էք. դուք ինքներդ էլ արդէն նորից ուրախացաք: Գնանք: Զէք ուզում: Պատշկամբ վրայ հրապար է:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ, ՈՇ, ոչ: Ես կը մըսեմ: Գործ էլ ունեմ: Գնացէք մինակ—և բերէք ձեզ հետ Յոհաննէսին: Նախաճաշը պատրաստ է: (Օր. Աննան զնում է):

Ծինչեռ տիկ. Ֆօկերատը սրբում է կահ-կարասիքի փոշին, լսում է թմբուկների և սրինգների ձայներ: Տիկ. Ֆօկերատը շտապում է դէպի պատոհանը: Գործիքների ձայները թուլանում են և լռում: Տիկին Կէթէն դուրս է գալիս ննջարանից առաւտեան զդեստով:

Տիկ. Կէթէ. (Յոդեած): Շատ աղմկալի է կիրակի օրերը:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Այդ մարմնամարդների մի խումբ է բերլինից, սիրելի Կէթէ: Փառաւոր մարդիկ են: Բարի լրյու, հոգիս նու... ինչպէս հանգստացար, զաւակս: Լաւ: Ուղեղն ասած՝ այնքան էլ լաւ չէ տեսք:

Տիկ. Կէթէ. Փոքրիկը երկու անգամ զարթեց: Եւ ես երկար չը կարողացայ քնել: Սպասիր, մայրիկ: Ես պէտք է լաւ կշուդատեմ... և պէտք է մտածեմ:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Զաւակս, դու պէտք է արդէն վերջ դնես և թողնես որ ծծմայրը մենակ քնի Ֆիլիպպի հետ:

Տիկ. Կէթէ. (Թէքեւ յանդիմանուրեամբ): Ա՛խ, մայրիկ, դու գիտես որ:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Բայց ինչու չը լինի այդպէս:

Տիկ. Կէթէ. Դու գիտես որ ես այդ չեմ անիլ:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Դու վերջ ի վերջոյ ստիպուած չես լինի այդպէս անել, Կէթիւն:

Տիկ. Կէթէ. (Գրգուելով): Ինչ էլ լինի, ես նրանից չեմ բաժանուի: Ֆիլիպպիկը իմ երեխան է: Այդպիսի փոքրիկ երեխային առանց մօր...

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Բայց, զաւակս, հոգիս, քաւ լիցի, ով է այդպիսի բան ասում: Կաց ես... քեզ համար մի բան կը բերեմ... սուրճ... մի կտոր հաց իւղով... կամ...

Տիկ. Կէթէ. (Սեղանի առաջ վասակարեկ նատած): Ա՛խ, հա, խնդրում եմ: (Փոքր լուութիւնից յետոյ, երբ տիկ. Ֆօկերատը հացին իւղ է խում, Կէթին շարունակում է): Իսկ Յոհաննէսը ուր է:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Նրանք խաղող են քաղում—նա և օրիորդը:

Տիկ. Կէթէ. (Ծնօտը ափի վրայ դնելով ծոր տալով ասում է): Օրիորդը շատ սիրելի է: Այդպէս չէ:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Պէտք է ասեմ, որ ես էլ եմ նրան հաւանում:

Տիկ. Կէթէ. Տեսնում ես, մայրիկ. Իսկ դու միշտ այնպէս վատ էիր խօսում ազատագրուած կանանց մասին:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Ճիշտ ես ասում: Իսկապէս ես պէտք է խօստավանուեմ...

Տիկ. Կէթէ. (Զգձգելով): Այնպէս պարզ և կանացի: Զանձրալիութեան հետքն անգամ չը կայ:—Չը նայած որ նա այնքան շատ գիտէ և շատ խելօք է: Այդ ես շատ վայելուչ եմ գտնում: Այդպէս չէ, մայրիկ: Նա բնաւ չէ ուզում - փայլել իր գիտութեամբ:—Յոհաննէսի տեղ ես այժմ շատ ուրախ եմ:—Դու չես գտնում, մայրիկ. Նա այժմ միշտ այնպէս ուրախ է:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. (Զարմացած): Այն, այն՝ ճիշտ ես ասում: Արդարեւ նա այժմ մի քիչ փոխուել է:

Տիկ. Կէթէ. Ուղեղ չէ, մայրիկ:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Գիտես ինչու, որովհետեւ նա այժմ ունի մէկը, որի առաջ նա կարող է իր ուսած բաները երեան հանել:

Տիկ. Կէթէ. Այդ շատ կարեոր է նրա համար:
Տիկ. ՖօկերՍ. Այն, այն, շատ կարելի է:

Թարգար

Տիկ. Կէթէ. Շատ բաներում ես պէտք է համաձայնուեմ օր. Անայի հետ: Նա այս օրերիս ասում էր. մենք կանացք գտնում էինք ստորացած զրութեան մէջ, եւ նա բոլորովին արդարացի է: Այդ ես հարիւր անդամ զգացել եմ:

Տիկ. ՖօկերՍ. Է՞ն, այդ ինձ չէ անհանգստացնում: Գիւմ—առհասարակ այդ բաներից նա չը պէտք է ինձ նման չին և փորձուած կնոջ հետ խօսի: Եւ այդ նա լաւ հասկացաւ, որ այդպիսի հասկացողութիւնների համար ես շատ եմ պառաւել և շատ բան է գլխավա անցել:

Տիկ. Կէթէ. Բայց նա այնուամենայնիւ ուղիղ է ասում, մայր: Արեկ պէս պարզ է, որ նա իրաւացի է:—Մենք իսկապէս իրաք մի անարգուած ցեղ ենք:—Մտածիր հէնց այն որ մեր օրէնքներում կայ մի յօդուած—այդ նա երէկ պատմեց—որով տղամարդը գեռ այժմ էլ իրաւոնք ունի իր ինկան չափաւոր կերպով մարմնական պատմի ենթարկել:

Տիկ. ՖօկերՍ. Այդ ես չը գիտեմ: Դրա մասին ես չեմ կարող ոչինչ ասել: Թէկ այդ այնքան էլ վատ չէր լինի: Բայց, սիրելի Կէթէ, եթէ ինձ սիրում ես, թնդ գու այդ նոր պատմութիւնները: Դրանք մարդկանց միայն չփոթում են: Այդ խըլում է միայն հանգստութիւնը և խաղաղութիւնը: Սպասիր, զաւակս, ես իսկոյն սուրճ կը բերեմ քեզ համար: Հա, սիրելիս, այդ է իմ կարծիքը: (Գնում է):

Տիկ. Կէթէն նստած է նախաճաշի սեղանի առաջ, ծնոտը ձեռքի վրայ դրած, արմունկները սեղանի տախտակի վրայ: Յանկարծ տան մոտով անցնում են Յոհաննէսը և օր. Աննան բարձր խօսելով և ծիծաղելով: Տիկ. Կէթէն սարսափահար է լինում, դողդում և բարձրանում է տեղից, որպէս զի կարողանայ աչքերով հետևել զուգին: Նրա հայեացքը լի է երկիվով, նա շնչում է ծանր նախ լսում է ինչպէս տիկ. Ֆօկերատը ազդում է սրճամանով: Դրանից լեռոյ իսկայն երևում է նա և գտնում է Կէթէն գեռ նոյն դիրքի մէջ սեղանի առաջ, ինչ դրութեան մէջ նրան թողել էր:

Տիկ. ՖօկերՍ. (Սուրճը ձեռին): Այ այսպէս:—Հիմա խմիր և կազդուրուիր:

Օր. Աննան և Յովհաննէսը մտնում են պատշկամբից:

Տիկ. ՖօկերՍ. Լաւ արիք որ եկաք:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Դուռը բաց բողնիլով): Թողնենք բաց: Աւ բեր արդէն սաստիկ տաքացնում է:—Օրիորդ, գուք ձեղ սաստիկ վիրաւորեցիք:

Օր. ԱՆՆԱ. (Դուրս հանելով խաղողի մի բանի երկար որբեր): Օ՛, ոչ, չնչին բան է: Շատ թաց էր, ես էլ, մկրատը ձեռքիս սահեցի և ընկայ: (Նտապով մօնենում է Կէթէին, վերցնում է նրա երկու ձեռները եւ համբուրում նակատը): Բարի լոյս, տիկին Կէթէ:—Ո՛ւու, ինչպէս սառն են ձեռները... ինչո՞ւ են սառը ձեր ձեռները: (Նիկելով տաքացնում է նրա ձեռները):

ՅՈՀԱՆՆԵՍ. (Յետելից մօնենալով համբուրում է Կէթէի բուը): Բարի լոյս, Կէթէ: (Կօմիկական զարմանելով): Ահ, Տէր Աստուած, այս ինչ է դարձեալ քո դէմքը: Սարսափելի է: Բուրովին ինչպէս մի հիւանդ ճտիկ:

Տիկ. ՖօկերՍ. Բայց գուք ցուրտ բերիք ներս: Իսկապէս պէտք է շուտով սկսել վառել:—Դէ այժմ նստեցէք: (Բոլորի համար էլ սուրճ է ածում):

Օր. ԱՆՆԱ. (Սեղանը զարդարելով խաղողի վագերով):—Մի փոքր էլ զարդարանք:

Տիկ. Կէթէ. Հրաշալի է:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Նայելով): Այժմ ինքներդ դատէք. ինչպիսի տեսք ունի օրիորդ Աննան այսօր, և ինչպէս էր նա մի եօթ օր առաջ, երբ նա եկաւ այստեղ:

Օր. ԱՆՆԱ. Այստեղ ինձ շատ լաւ է գալիս: Ես պէտք է շուտով գնամ:

Տիկ. ՖօկերՍ. Իսկոյն երեսում է գիւղական օդի աղւդեցութիւնը:

ՅՈՀԱՆՆԵՍ. Իսկ նա ով էր որ այն ժամանակ հակառակուում էր ու հակառակուում...

Տիկ. ՖօկերՍ. Տեսնես հիմա ինչ է անում հայրիկը:

ՅՈՀԱՆՆԵՍ. Երեկ սաստիկ տիրուում է առանց քեզ:

Տիկ. ՖօկերՍ. Էն, նա գործ ունի: Զմեռնացանը թէկ վերջացել է, բայց նա գրում է ինձ թէ կարող ես մնալ, մինչ որ հարկաւոր կը լինես այդտեղ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Նա է գալու քեզ տանի, մայրիկ:

Տիկ. ՖօկերՍ. Այն, երբ ես նրան գրեմ, կը գայ: (Օր. Աննին): Նա ուրախութեամբ օդտուում է ամեն մի առիթից, եւ բիխաներին նորից տեսնելու համար, իսկ այժմ էլ նաև իր թոռնիկին: Ոչ, պէտք է տեսնեիք, թէ ինչ էր անում նա, երբ սատացուեց ձեր հեռագիրը՝ թէ առողջ տղայ է ծնուել: Նա ուրախութիւնից ուղղակի գտւում էր:

Տիկ. Կէթէ. Բարի հայրիկ: Իսկապէս գու պէտք է շուտով շտապես վերադառնալ նրա մօտ: Մեր կողմից շատ եսական կը լինէր...

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Ի՞ն լաւ, թէ Աստուած սիրես... նախ և առաջ գեռ քո թշերը մի լքցուեն:

ՕՐ. ԱՆՆԱ. Զէ որ ես էլ գեռ այստեղ եմ: Ի՞նչ էք կարծում: Ես անտեսութիւն էլ գիտեմ: Եւ ի՞նչպիսի կերակուրներ կը պատրաստէի ձեզ համար: Բնդն ուռսական: Բօրշ կամ փլաւ: Բոլորն էլ ծիծաղում են:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. (Ակամայ փուրկուրեամբ): Ո՞չ, ոչ: Ի՞նչ էլ լինի, ևս չեմ գնալ:

Տիկ. Կէթէ. Եթէ իսկապէս քեզ համար ոչինչ, սիրելի մայրիկ...

Դադար:

ՅՈՀԱՆՆԵՍ. Հապա մեղրը տաս, կէթիկս:

Տիկ. Կէթէ. Ահա գալիս է Բրառնը:

Բրառնը վերարկուով, զլխարկով, հովանոցով և ճանապարհորդական պալուսակով, կոան տակին դիրք: Դէմքի վրայ ճանձրութի արտայալութիւն: Ցողնած և թուլ քայլուածք:

ԲՐԱՌԻՆ. Բարեւ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ուր և այդքան վաղ:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. (Անձեռոցիկով մի բան և բում):

ՅՈՀԱՆՆԵՍ. Մեղու է, մայրիկ: Մի խփիր, մի խփիր:

ԲՐԱՌԻՆ. Ուզում էի բերլին գնալ՝ ներկեր գնելու: Դըժքախտաբար ուշացայ գնացքին:

ՅՈՀԱՆՆԵՍ. Է՞հ, այդ քեզ յաճախ է պատահում:

ԲՐԱՌԻՆ. Ի՞նչ կայ, վաղը կը գնամ, մէկ չբ:

Տիկ. Կէթէ. (Բարձրացնում է ձեռները, կարծես մեղուն պտում լիներ երա պիտի վրայ): Մեղրի հոտ է առել:

ՕՐ. ԱՆՆԱ. Ուրիշ գնացք չը կայ: (Նայում է իր կրծքի վրայ և սպանալով ասում): Մեղուիկ, մեղուիկ:

ԲՐԱՌԻՆ. Այդ գնացքները ինձ համար շատ թանգ են: Ես գնում եմ միայն բանուորական գնացքով:

ՅՈՀԱՆՆԵՍ. Իսկ դրանք շատ կանուխ են մեկնում:—Ասա ինձ: Դու զեռ կարողանում ես նկարել:

ԲՐԱՌԻՆ. Առանց ներկերի: Ո՞չ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Բրէօ, Բրէօ: Էլի դու ծուլացար:

ԲՐԱՌԻՆ. Մի օր աւելի վաղ կամ աւելի ուշ հոչակուած, մէկ չբ... է՞հ, այդ ամբողջ նկարչութիւնն էլ առհասարակ...

ՅՈՀԱՆՆԵՍ. Աւելի լաւ է շահմատ խաղալ, այդպէս չբ:

ԲՐԱՌԻՆ. Դու այդ չես հասկանում: Քո ծովդ նաւահանգիստ չունի, սիրելիս: Դու ապրում ես առանց պառզների:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ա՞հ, միթէ այդ կարելի բան է...

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. (Վեր է բռչում եւ նշում): Պիծակ, պիծակ:

Բոլորն էլ անձեռոցիկներով խփում են տիկին Ֆօկերատի կողմը:

ՅՈՀԱՆՆԵՍ. Թռաւ գնաց:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. (Կրկին նստելով տեղը): Անպիտան արարածուած:

Բոլորն էլ նստում են:

ՅՈՀԱՆՆԵՍ. Մօտեցիր, նստիր:—Այդ ի՞նչ կայ մօտդ:

ԲՐԱՌԻՆ. Ուզում ես իմանալ: Հետաքրքրական բան է:

ՅՈՀԱՆՆԵՍ. Լաւ, նստիր և գեռ մի քիչ նախաճաշիր:

ԲՐԱՌԻՆ. (Նստում է եւ Յոհաննեսին տախի զիրքը: Յոհաննեսը բերքում է): Մեծ ուրախութեամբ: Ես հազիւ հազ կարողացայ մի բան ուտել... Բաց արա այդտեղ—Գարշինի «Նկարիչները»...

ՅՈՀԱՆՆԵՍ. (Թերքելով): Էլ ի՞նչ բան ես գտել:

ԲՐԱՌԻՆ. Հանս, քեզ համար մի բան:

ՕՐ. ԱՆՆԱ. Այն, այդ մի շատ լաւ պատմուածք է: Դուք դեռ ծանօթ չը նրա հետ:

ԲՐԱՌԻՆ. Ո՞չ: Միայն այսօր առաւօտեան անկողնումս սկսեցի կարդալ: Հէնց այդ պատճառով էր, որ չը հասայ գընացքին:

ՕՐ. ԱՆՆԱ. Հիմա դուք Բեաբինինի թէ Դէգօվի կողմըն էք:

ՅՈՀԱՆՆԵՍ. Յամենայն դէպս այժմ դու աւելի կարդալու կողմն ես քան նկարելու:

ԲՐԱՌԻՆ. Աւելի լաւ է ասես ներկայ վայրկեանում ոչ կարդալու, ոչ էլ նկարելու կողմը: Կարդա Գարշինի այդ պատմուածքը, մի լաւ գլուխտ կոտրիր վրան և կը տեսնես, որ այժմ աւելի կարենոր բաներ կան, քան աշխարհիս բոլոր նկարչութիւնները և շարահիւսութիւնները:

ՕՐ. ԱՆՆԱ. Ուրեմն դուք Բեաբինինի կողմն էք:

ԲՐԱՌԻՆ. Բեաբինինի: Օ՞օ—գիտէք... այդ ես չեմ կարող այդպէս բացորոշ ասել:

ՅՈՀԱՆՆԵՍ. Իսկապէս ի՞նչ է այդ պատմուածքի իմաստը:

ՕՐ. ԱՆՆԱ. Դուրս են բերուած երկու նկարիչներ. մէկը պարզամիտ, միւսը, այսպէս կոչուած, խորհող նկարիչ: Պարզամիտը ինժենէր էր և դառել է նկարիչ: Խորհողը թողնում է նըկարչութիւննը և դառնուած ուսուցիչ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի՞նչո՞ւ:

ՕՐ. ԱՆՆԱ. Նրան թւում է որ ներկայումս աւելի կարևոր է ուսուցիչ լինել:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի՞նչպէս է նա դալիս այդ եղբակացութեան:

ՕՐ. ԱՆՆԱ. (Վերցնում ե զիրքը, թերում): Սպասէք: —Աւելի լաւ է ես ձեզ կարդամ այդ տեղը. —Ահա. Դէղօվը, նախկին ինժենէրը, տանում է Ռեաբինին շոգեկաթսաների գործարանը: Կաթսաների մէջ աշխատող մարդիկ մի քանի ժամանակից յետոյ սովորաբար խլանում են մուրճի հարուածների սոսկալի աղմուկից: Այդ պատճառով Ռուսաստանում ուրիշ բանուորները դրանց մնուանում են խուլպալորներ: Ահա մի այդպիսի խուլին ցոյց է տալիս նրան Դէղօվը աշխատանք կատարելիս: (Նա կարդում է): «Ահա նա նստած է իմ առջև կաթսայի մութ անկիւնում, ամբողջապէս կծկուած, ցնցուիներով ծածկուած, յոզնածութիւնից չնչապառ... նրա կատարամիր դէմքի վրայ... քրտինքը հոսում է, թափուելով... նրա տանջուած, լայն և ներս ընկած կրծքի վրայ...»

ՏԻԿ. ՖՈԿԵՐԱՏ. Բայց ինչո՞ւ են նկարագրում առաւելապէս այդպիսի սարսափելի բաներ: Ոչ ոքի այդ չի ուրախացնիլ: ՅՈՀԱՆՆԵՍ. (Ժայտալով ու բնօւորեալի շոյելով իր մօր զլուխը): Մայրիկ, սիրելի մայրիկ. միթէ միշտ պէտք է ուրախանալ:

ՏԻԿ. ՖՈԿԵՐԱՏ. Այդ ես չեմ առում: Բայց արուեստը չէ որ պէտք է զուարձութիւն պատճառի:

ՅՈՀԱՆՆԵՍ. Սրուեստը շատ աւելին պէտք է տայ, քան զուարձութիւն:

ՕՐ. ԱՆՆԱ. Ռեաբինինը ես չէ զուարձանում: Նա իր հոգու խորքերում ցնցուած է և տակնուվրայ եղած:

ՅՈՀԱՆՆԵՍ. Մտաբերիր հէնց գիւղատնտեսութիւնը, սիրելի մայրիկ: Այստեղ էլ պէտք է իւրաքանչիւր տարի արօրով տակնուվրայ անել գետինը, որպէս զի այստեղ նոր հունձ բռնի:

ՕՐ. ԱՆՆԱ. Ռիաբինինի մէջ էլ, օրինակ, աճում է ինչ-որ նոր բան: Նա ասում է իրան. քանի որ գոյութիւն ունին դեռ այդպիսի տանջանքներ, յանցանք է անել մի այնպիսի բան, ինչ որ անմիջապէս նպատակ չունի նուազեցնել այդ տանջանքները:

ՏԻԿ. ՖՈԿԵՐԱՏ. Տանջանքը միշտ եղել է:

ՅՈՀԱՆՆԵՍ. Բայց ուսուցիչ դառնալու միտքը այդ դէպւում բաւական անաջող է:

ԲՐԱՌՈՒՆ. Ի՞նչո՞ւ: Միթէ այդ աւելի օգտակար չէ քան պատկերներ նկարելը կամ գրելը գրելը:

ՅՈՀԱՆՆԵՍ. Թէ ոքան բարձր ես գնահատում քո աշխա-

տանքը, այդ քո գիտենալու բանն է: Ինչ վերաբերում է ինձ, ես մնաւ մտադիր չեմ նսեմանցել իմ գործունէութիւնը:

ԲՐԱՌՈՒՆ. Դու չես ուզում խոստովանուել այդ բանում, իսկ ես խոստովանուում եմ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի՞նչ բանում: Ի՞նչո՞ւմ ես չեմ խոստովանուում: ԲՐԱՌՈՒՆ. Հէնց այն:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի՞նչ:

ԲՐԱՌՈՒՆ. Որ քո բոլոր գրութիւնները նոյնքան աննպատակ են, ինչպէս...

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի՞նչ գրութիւններս:

ԲՐԱՌՈՒՆ. Հէնց քո այդ փախովֆիզիոգիականները:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Բարկացած): Դրանց մէջ դու բան չես հասկանում:

ԲՐԱՌՈՒՆ. Իսկի չեմ էլ հետաքրքրուում:

ՅՈՀԱՆՆԵՍ. Լսիր. եթէ այդպէս է, դու ողորմելի անուսի մէկն ես, և կանգնած ես զարգացման այն աստիճանի վրայ...»

ԲՐԱՌՈՒՆ. Սյոն, այն, դարձեալ պարձեցիր քո դպրոցական իմաստութեամբ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ես թքում եմ դպրոցական իմաստութեան վրայ. դու այդ շատ լաւ գիտես: Բայց յամենայն դէպա պարզ է...

ԲՐԱՌՈՒՆ. Այդ դու հարիւր անգամ ես ասել, բայց այնուամենայնիւ գիտական մեծամտութիւնը ցցուում էր քո բոլոր ճեղքերից: Է՞հ, լաւ է առհասարակ չը խօսենք դրա մասին: Դրանք փափուկ խնդիրներ են, թողնենք ամեն մէկը վճռի ինքն ու ինքը:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ինչո՞ւ են փափուկ:

ԲՐԱՌՈՒՆ. Աւելորդ է վիճել: Դու միշտ իսկոյն այնպէս բորբոքւում ես, բարկանում ես...

ՅՈՀԱՆՆԵՍ. Զէ, չէ. արտայայտիր, սիրելիս, արտայայտիր պարզ:

ԲՐԱՌՈՒՆ. Ա'խ, անմիտ բան է: Իսկապէս աննպատակ է: Ամեն մէկը թող մտածի և վարուի, ինչպէս ուզում է:

ՅՈՀԱՆՆԵՍ. Սյոն. ուրեմն քո կարծիքով ես վատ եմ վարւում:

ԲՐԱՌՈՒՆ. Ոչ աւելի վատ, քան բոլոր ուրիշները: Դու էլ կօմպրօմիսի մարդ ես:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ներիր, եթէ ես ասածիդ ոչինչ չը պատասխանեմ: —Այդ բանը ինձ ուղղակի ձանձրացրել է: (Ընդհանելով գրգուուած): Բանն ահա ինչումն է: Դուք, բարեկամներ, արմատական փրազներ եք վեր թակում, իսկ ես մի անգամ ընդ միշտ ասել եմ, որ այդ բանում ես ձեզ հետ չը կամ. հէնց այդ պատճառով էլ ես կօմպրօմիսի մարդ եմ համարւում:

ԲԻԱՌԻՆ. Այդ գու ես այդպէս ասում, իսկ բանը այլ կերպ է. երբ մենք ուրիշներս մեր գաղափարներով համարձակ առաջ էինք քայլում, դու մեր դէմ էիր և պաշտպանում էիր բոլորը, ինչ որ հին է և անցրած իր կենաքը: Եւ այդ պատճառով էլ քեզնից հեռացրիր քո բարեկամներիդ և մնացիր առանձնացած:

ՏԻԿ. Կէթէ. (Հանգստացնելով): Յոհաննէս:

ՅՈՀԱՆՆԻՍ. Բարեկամներին, որոնց ես հեռացրի ինձնից... այդ բարեկամների վրայ, անկեղծ ասած... թքում եմ:

ԲԻԱՌԻՆ. (Բարձրանում է տեղից): Դու թքում ես նրանց վրայ: (Նայելով Աննային): Այդ որ ժամանակից, Հանս:

ՏԻԿ. Կէթէ. (Քիչ լռուրինից յետոյ): Դուք ուզում էք գնալ, պարոն թրառն:

ԲԻԱՌԻՆ. (Վիրաւորուած, անտարբեր տօնով): Այն, ես դեռ գործ ունեմ:

ՅՈՀԱՆՆԻՍ. (Բարեկամութեամբ): Յիմարութիւն մի՛ անիր: ԲԻԱՌԻՆ. Ո՛չ, լուրջ եմ ասում:

ՅՈՀԱՆՆԻՍ. Եթէ այդպէս է, գնա արա, ինչ որ անկարող ես յետաձգել:

ԲԻԱՌԻՆ. Ցտեսութիւն: (Գնում է):

Պահար:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱԾ. (Սկսում է հաւաքել ամանենքը): Զեմ հասկանում... միշտ ձեր բանն ու գործը այդ բրառուն էք չինել: Պէտք է խոստովանուեմ. ես նրան շատ էլ չեմ հաւանում: ՅՈՀԱՆՆԻՍ. (Բարկացած): Մայր: Ի սէր Աստուծոյ...

ՏԻԿ. Կէթէ. Բայց իսկապէս բրառունը քեզ հետ ազնուաբար չէ փառում, Հաննէս:

ՅՈՀԱՆՆԻՍ. Տիկիններ. ինդրում եմ մի խառնուէք իմ մասնաւոր գործերում:

Կրկն լռութիւն: Տիկ. Ֆօկերատը հաւաքում է սեղանը, Տիկին Կէթէն վեր է կենում:

ՅՈՀԱՆՆԻՍ. (Կիրկին): Ուր ես գնում:

ՏԻԿ. Կէթէ. Երեխային լողացնեմ: (Բումի ժպտալով գլուխ է տալիս օր. Աննային եւ գնում ննջարանը):

Տիկ. Ֆօկերատը ամանների մի մասը դնելով մատուցանի վրայ, ուզում է գնալ: Այդ ժամանակ դրսի դուռը մի քիչ բացում է և երկում է մի մանրավաճառ կին, որ կանչում է.

«Կանաչի կամի՞ք»:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱԾ. (Պատախանում է): Գալիս եմ: (Գնում է դրսի դուռով):

Մի ժիջ դադարից յեռյ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Վեր է կենում, լարում է իր ժամացոյցը): Այժմ—ձիշտը ժամի քանի՞ուը կը լինի: (Դիմում է Յոհաննեսին, որ նսած է մոայլ տրամադրուած): Հիմա, պարոն դօկտօր:—Կամացուկ երգում է «Brüderlein fein» եղանակը չարանճիութեամբ նայում է Յոհաննեսի վրայ: Երկուսն էլ չեն կարողանում ծիծաղները պահել:

ՅՈՀԱՆՆԻՍ. (Կրկին լուրջ, հառաչում է): Ա՛յ, օրիորդ Աննա: Դիմախտաբար այդ ամենը շատ լուրջ բան է:

ՕՐ. ԱՆՆԱ. (Չարանճիութեամբ մատով նրան սասելով): Իսկ դուք մի՛ ծիծաղէք:

ՅՈՀԱՆՆԻՍ. (Կրկին ծիծաղում է, յետոյ լուրջ): Ոչ իրաք: Դուք չը գիտէք թէ ինչ է ծածկուած բրառնի յայտնածների տակ:

ՕՐ. ԱՆՆԱ. Դուք դեռ չը լսել՝ ինչպէս եմ ես նուազում դաշնամութիւնը վրայ:

ՅՈՀԱՆՆԻՍ. Ո՛չ, օրիորդ:—Բայց ես կարծում եմ որ դուք առհասսարակ չեք նուազում:

ՕՐ. ԱՆՆԱ. Ո՛չ, ի հարկէ: Ես միայն կատակ էի անում: —Իսկ այսօր առաւտա զոօմներու ենք նաւակով:

ՅՈՀԱՆՆԻՍ. Իսկն ասած ես ոչ մի բանի հաճոյք չեմ զգում:

ՕՐ. ԱՆՆԱ. (Բարեկամաբար սասելով): Պարոն դօկտօր, պարոն դօկտօր. միթէ կարելի է այդպէս անձնատուր լինել արտմութեան:

ՅՈՀԱՆՆԻՍ. Ես չեմ հասկանում, թէ ինչպէս բրառնի պէս մի մարդ...

ՕՐ. ԱՆՆԱ. Ուրեմն դեռ ևս բրառունք: Միթէ արդարն իսուաքերը այդպիսի խոր տպաւորութիւն են թողել ձեզ վրայ:

ՅՈՀԱՆՆԻՍ. Օրիորդ: Այդ հին պատմութիւններ են, նա իր խոսքերով նորից շարժեց իմ մէջ և...

ՕՐ. ԱՆՆԱ. Պէտք է հանգիստ թողնել, պարոն դօկտօր, հին պատմութիւնները: Քանի յետ նայես, առաջ չես գնալ:

ՅՈՀԱՆՆԻՍ. Դուք կատարելապէս իրաւացի էք: Ուրեմն թողնենք այդ:—Բայց և այնպէս հետաքրիր է, թէ այդ ինչու սովորաբար խելօք մարդիկ միշտ նոյն սխան են կրկնում ամբողջ տարիների ընթացքում: Զէ որ նա բոլորովին լուրջ էր խօսում: Նրա աչքում իմ փիլիսոփայական աշխատանքը մի ոչինչ ու անպէտք բան է: և որող էք այդ երևակայել:

ՕՐ. ԱՆՆԱ. Պատահում են այդպիսի մարդիկ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Դէք է հասարակական գործիչ լինել, աղուկ հանել, իրան արմատական ձևացնել: Զէ կարելի պատուել եկեղեցում, նոյն իսկ յարգելով հարսնացուիդ, որ դաստիարակուած է եկեղեցական հոգով: Առհասարակ ոչնչ չը պէտք է ուշադրութեան առնել, իսկ եթէ մէկը ինձ նման փակուած չորս պատերի մէջ գիտնական ինդիբներով է ապրում, նա իր բարեկամների աջում մի մարդ է, որ իր իդէալներին դաւաճանել է: Միթի այդ տարօրինակ չէ, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. ԱՇ, պարոն դօկտօր, այդքան միծ նշանակութիւն մի տուէք այն բանին, ինչ որ ձեր բարեկամները ասում են: Եթէ ձեր հայեացքները կարող են ձեզ բաւականութիւն տալ,—էլ մի վրդովուէք, որ ուրիշներին նրանք չեն գուացնում: Ընդհարութները սպասում են մարդկանց ոյժերը:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ախ, ոչ, ոչ: Ի հարկէ ոչ: Ես անշուշտ այլ ես ուշադրութիւն չեմ դարձնի և ինձ չեմ տանջի այդ բաներով: Ով չէ հաւանում,—ինքը գիտէ: Ես ոչնչով չեմ կարող նրան օգնել: Թէ և այնքան էլ հեշտ բան չէ միշտ անտարբեր մնալ: Մեծանում ես ընկերներիդ հետ: սովորում ես որ քեզ գոնէ մի քիչ գնահատեն:—Եւ երբ այլ ես չես զգում այդ յարգանքը, կարծես յանկարծ ստիպուած լինես չնչել մի օդագուրկ տարածութեան մէջ:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց դուք, պ. դօկտօր, չը որ ընտանիք ունէք:

ՅՈՀ. Իրօք: Ի հարկէ: Այսինքն... Ո՞չ, օրիորդ Աննա:—Ես գիտեմ որ դուք ինձ կը հասկանաք: Դրա մասին մինչեւ այժմ ես դեռ ոչ ոքի բան չեմ ասել: Դուք ի հարկէ գիտէք ինչպէս ես կապուած եմ իմ ընտանիքի հետ: Բայց ինչ վերաբերում է իմ աշխատանքին՝ ընտանիքս բնաւ չէ հետաքրքրուում նրանով: Կէթիչնը դեռ մի քիչ համակրում է:—Այդ ի հարկէ շարժում է ինձ: Ինչ որ ես գրում եմ, նրան միշտ հիանալի է թւում: Բայց և այնպէս ես գիտեմ որ նա չէ կարող ոչ մի դասողութիւն տալ: Նրա կարծիքները չեն կարող ինձ համար օգտակար լինել: Այդ պատճառով ես ուղղակի կարծես երկնքում եմ ինձ զգում այն օրից, երբ դուք, օրիորդ Աննա, այստեղ էք: Այդ առաջին անգամն է կեանքումս պատահում որ մէկը անկեղծօրէն հետաքրքրուի իմ աշխատանքով, նրանով, ինչ որ ես ընդունակ եմ ստեղծել: Եւ այդ ինձ կրկին ոյժ և եռանդ է տալիս: Կարծես անապատի վրայ անձրեսում լինէր, կարծես...

ՕՐ. ԱՆՆԱ. Դուք բանաստեղծ էք եղել, պ. դօկտօր:

ՅՈՀ. Եւ կայ պատճառ բանաստեղծական լինելու: Բայց

դուք միալւում էք: Իմ մայրս ուղղակի ատում է իմ խեղճ ձեռագիրը և մեծ ուրախութեամբ նրան վառարանը կը նետէր: Իմ բարի հօրս համար էլ պակաս անհանոյ չէ: Ուրեմն այդ կողմից ես սպասելիք չունեմ: Ինչ վերաբերում է ընտանիքիս, ես նրանից կարող եմ միայն արգելքներ սպասել: Ասենք այդ ինձ չէ էլ զարմայնում: Բայց երբ և բարեկամներս մի չնչին ուշադրութիւն էլ չեն դարձնում իմ գործունէութեան վրայ, երբ այնպիսի մի մարդ ինչպէս Բրատոնը...

ՕՐ. ԱՆՆԱ. Ինձ զարմացնում է որ հէնց Բրառուն է ձեզ այդպիսի վիշտ պատճառում:

ՅՈՀ. Այս, Բրառունը... բանը այն է որ մենք իրար ճանաչում ենք մանկութիւնից:

ՕՐ. ԱՆՆԱ. Այսինքն. դուք ճանաչում էք նրան մանկութիւնից:

ՅՈՀ. Այս, նա էլ ինձ...

ՕՐ. ԱՆՆԱ. Նա, ձեզ: Ախ, իրաւ:

ՅՈՀ. Այս... այսինքն յայտնի աստիճան:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինձ սակայն թւում է որ դուք հիմնովին տարբեր մարդիկ էք:

ՅՈՀ. Դուք կարծնմ էք:

ՕՐ. ԱՆՆԱ. (Մի փոքր լուռքիւնից լետոյ): Պարոն Բրառունը ամեն կողմից գեռ այնպէս չը կազմակերպուած մարդ է, այնպէս... Ես չեմ ուղում ասել որ նա ձեզ նախանձում է, բայց նրան դայրայնում է... նրան հաճելի չէ որ դուք ունէք անկախուն կողնուրոյն մտածողութեան եղանակ, որ յամառութեամբ պաշտպանում էք: Այդ նրան նոյն իսկ վախեցնում է:—Նրա մէջ կան զանազան սօցիալ-էթիկական՝ կամ չը գիտեմ ինչպէս են կոչում՝ գաղափարներ, դրանցից նա պինդ բռնել է, էլ պոկ չէ գալիս, որովհետեւ առանց դրանց նա չէ կարող քայլ անել: Նա իրու մարդ՝ չունի ուժեղ անհատականութիւն, ինչպէս նկարիչներից շատերը: Նա չէ վատահանում մենակ կանգնել: Նա պէտք է զգայ իր յետեկց ամբոխի ներկայութիւնը:

ՅՈՀ. Օ՛, եթէ մէկը ինձ այդ ասէր մի քանի տարի առաջ, երբ ես քիչ էր մնում կորչէի, ճնշուած բարեկամներիս զատապարտութիւններից: Օ՛, եթէ մէկը ինձ այդ ասէր այն ժամանակ, երբ ես այնչափ սարսափելի ջախճախուած էի, երբ ես ինձ տանջում էի, կշտամբելով որ ես ապրում եմ լաւ բնակարանում, որ ես լաւ ուտառում եմ ու խմում, երբ ես վեհերութեամբ քաշուում էի ամեն մի բանուրից և միայն սրտի բարխումով էի անցնում այն շինութիւնների մօտից, ուր նրանը Տայփ, 1901.

աշխատում են... Այն ժամանակ ես կնոջս էլ շատ տաճացեցի: Ես ուզում էի ունեցած-չունեցածս բաժանել և նրա հետ միասին ապրել ինքնայօժար չքաւորութեան մէջ: Ի հարկէ, եթէ հարկ լինէր կրկին այդպիսի ժամանակներ անցկացնել, աւելի լաւ... Այն, ճշշտ եմ ասում... աւելի լաւ կը լինէր Միւզգէլեան լիճը... բայց այժմ ես այնուամենայնիւ. (Վերցնում է իր զիխարկը) ուզում եմ այդ յիմար տղային՝ Բրառնին խելքի բերել:

ՕՐ. ԱՆՆԱ. (Նայում է նրա վրայ մի առանձին ժպիտով): ՅՈՒ. Զեր կարծիքով աւելորդ է:

ՕՐ. ԱՆՆԱ. Սրբք, ինչ հարկաւոր էք գտնում: ԱՌ, դուք մհծ երեխայ:

ՅՈՒ. Օրինրդ Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Զեր սիրար, պարոն դօկտօր, ձեր թշնամին է:

ՅՈՒ. Գիտէք, երբ միտս է զալիս, որ նա այժմ յետ ու առաջ է վազվզում ու բարկանում, չեմ կարողանում հանգստանալ:

ՕՐ. ԱՆՆԱ. Միթէ լաւ է այդչափ զիջող լինել:

ՅՈՒ. (Վճռողաբար): Ո՞չ—այդ լաւ չէ: Թէ և նա ինքը առաջինը չի զալ. նա երբէք առաջի քայլը չէ արել, բայց այդ մի և նոյն է: Դուք իրաւացի էք: Եւ այդ պատճառով ես էլ նոյն պէս չեմ գնալ... այս անգամ... Բրառնի մօտ:—Ուրեմն գնանք լճում նաւարկելու:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց դուք ուզում էիք ինձ կարդալ երրորդ գլուխը:

ՅՈՒ. Զեռագիրը մենք կարող ենք վերցնել մեզ հետ:

ՕՐ. ԱՆՆԱ. Այս, լաւ: Ես իսկոյն կը հագնուեմ: (Գնում է):

ՅՈՒ. (Մօտենում է գրեթե պահարանին, հանում է իր ձեռքիրը եւ խորասուզում ընթերցանութեան մէջ):

Տիկ. Ֆօկերատը մտնում է զրսի դանից, ձեռին ոսկէ կարուածքատը երկու գրքոյներ:

Օ. ՖՕԿԵՐԱ. Հիմա կը վերցնեմ ձեր յարմար աթոռներից մէկը, կը գնեմ ակնոյներս և կը կարդամ առաւօտեան աղօթքներս: Դուրսը պատշկամբում տակը է:

ՅՈՒ. Ի հարկէ, մայրիկ: (Ոչքերը բարձրացնելով ձեռագրից): Այդ ինչ է մօտք:

Օ. ՖՕԿԵՐԱ. «Սրտի խօսքեր»: Դու խօմ զիտես իմ սիրելի լափատէրին: Իսկ այս մէկը—Գերօկի՛ «Սրմաւենու տերեները» է:—Ինչպիսի մարդ էր նա:—Տեղաւեղ նա լաւ շաղուում է պարոն դիսնականներին: Աւաղ: (Գրկում է Յովաննիսին եւ

դնում նրա գլուխը իր կրծքին, բնեօւըքեամբ): Այ դու մեծ երեխայ. Էլի նորից մտախոհութեան մէջ ընկար:

(Ուշ. (Յրուածութեամբ հեռացնելով նայեացը ձեռագրից):

Ո՞չ, մայրիկ:

Օ. ՖՕԿԵՐԱ. Ի՞նչպէս ես զգում քեզ քո նոր գրութեան մէջ, իբրև հայր:

ՅՈՒ. ԱՌ, մայրիկ, ոչինչ առանձին:—Ինչպէս միշտ:

Օ. ՖՕԿԵՐԱ. Այդ էլի ինչ պատահեց: Սկզբում դու ուրախութիւնից թոշկոտում էիր, իսկ այժմ... կրկին մի բանից դժգոհ ես:

ՅՈՒ. (Նայելով ցրուած): Ախ, շատ գոհ եմ, մայրիկ:

Օ. ՖՕԿԵՐԱ. Լսիր, դու այժմ միշտ հազնում ես լաւ զգեստգ: Օրիորդ Աննան անշուշտ չի նեղանայ, եթէ դու այս տեղ շարունակես հազնել ու մաշել քո հին շորերը:

ՅՈՒ. Մայր, թողի խաղեմ, ես խօ փոքր երեխայ չեմ:

Օ. ՖՕԿԵՐԱ. Հէնց իսկոյն բարկացար: (Աւելի պինդ զրկելով նրան, ըոլոսիր եւ բնեօւըքեամբ): Մի քիչ էլ կրօնասէր եղիր, տղաս: Արա այդ ի սէր քո ծեր մօր: Այդ ծեր Հէկելն ու յիմար Դարգինը—դրանք քեզ միայն դժբախառութիւն են պատճառում: Լսում ես: Կատարիր այդ՝ քո ծեր մօրդ ուրախացնելու համար:

ՅՈՒ. (Դեկիին նայելով): ԱՌ, բարի մարդուկներ: Զեր մասին իսկապէս կարելի է ասել՝ ներիր դրանց, Հայր, որովհետեւ չը գիտեն... Միթէ դու ծշմարիտ հաւատում ես որ շատ հեշտ բան է հէնց վերցնել և իսկոյն կրօնասէր դառնալ:

Օ. ՖՕԿԵՐԱ. (Հեռանալով): Շատ հեշտ է, շատ հեշտ: Միայն պէտք է ցանկալ, Հաննէս: Միայն փորձիր, Հաննէս: Գոնէ մի անգամ էլ է փորձիր, Հաննէս: (Գնում է պատշկամբը, հստում է այնտեղ արսուի վրայ եւ սկսում է կարդալ):

Յոհաննէս կրկին խորասուզում է իր ձեռագրի մէջ: Մանում է տիկին էլլէն նամակներով:

Օ. Կէթէ. (Կարդալով, ապա բարձրացնելով աչերը): Հաննէս: Նամակ կայ և մեր բանկիրից:

ՅՈՒ. Խնաղեմ թնդ, կէթիւէն: Այս բողէիս իմ միտքս բոլորվին այլ բանով է զբաղուած:

Օ. Կէթէ. Նա հարցնում է արդեօք ծախի...

ՅՈՒ. Ի սէր Աստուծոյ, թողի ինձ, ես անկարսղ եմ դրա մասին հիմա մտածել:

Օ. Կէթէ. Բայց շատապ բան է, Հաննէս:

ՅՈՒ. (Բոնկելով): Ահա այստեղ, այստեղ, (Զղաձգութեամբ խփում է ցուցամատով ձեռագրին) իմ գործու աւելի է շտապում:

Տ. Կէթէ. Ինձ համար թէկուզ մնայ էլ, ոչինչ: Միայն թէ վաղը առանց փողի կը լինենք:

ՅՈՒ. (Աւելի եւս գրգուած):—Ոչ, Կէթէ.—մենք իսկապէս իրար համապատասխան չենք: Եւ դեռ դուք միշտ զարմանում եք, ինչու ես երթէք հանդարտ չեմ: Հէնց որ իմ մէջ ամեն բան սկսում է կարգի գալ—իսկոյն յայտնուում ես և կոպտութեամբ խոժում, ինչպէս կառապանը իր ձեռները...

Տ. Կէթէ. Ամեննին: Հէնց նոր եկաւ նամակատարը և ես քեզ միայն այդ ասացի:

ՅՈՒ. Այս, հէնց այդպէս: Հէնց այդ էլ ցոյց է տալիս ձեր՝ բացարձակապէս հասկանալու անկարողութիւնը: Կարծես այդ նոյնը լինէր՝ ինչ մի կօշիկ կարելը: Նամակատարը գալիս է և դու ինձ միայն այդ ես ասում: Բնականաբանը: Ինչու չէ: Իսկ թէ դրանով խզում ես ահազին ջանքերով կապակցուած մաքերի մի ամբողջ շլթայ, դրա մասին դու չես էլ մտածում:

Տ. Կէթէ. Բայց պէտք է մտածել և գործնական կեանքի մասին:

ՅՈՒ. Իսկ ես ասում եմ քեզ. իմ աշխատանքը՝ նախ և առաջ: Առաջինն էլ է նա, երկրորդն էլ է նա, երրորդն էլ է նա, իսկ յետոյ միայն հասնում է հերթը և գործնականին: Աշխատիր գէթ մի անգամ այդ բանը հասկանալ, Կէթէ: Գոնէ մի քիչ ինձ օգնիր կամ բնաւ ոչինչ ինձ մի ասիր գործնականի մասին: Հոգ տար առօրևայ գործերի մասին ինչպէս կամիս: Մի գցիր ինձ վրայ...

Տ. Կէթէ. Բայց ես չեմ կարող ինձ վրայ վերցնել պատասխանատութիւնը, Հաննէս:

ՅՈՒ. Տեսնում ես, դու գարձեալ նոյնը: Միայն թէ չը լինի ոչ մի ինքնուրոյն որոշում: Այդ ինչու դուք աշխատում էք ձեզ ամեն կերպ մէկից կախուած դարձնել: Այդ ինչու անպատճառ ուզում էք անչափահաս լինել:

Տ. Կէթէ. (Ուզում է յանձնել նրան նամակը): ԱՌԻ, Հաննէս: Դէ մի բան պատասխանիր:

ՅՈՒ. Բայց ես հիմա անկարող եմ, Կէթէ:

Տ. Կէթէ. Ուրեմն երբ գամ դրա համար, Հաննէս: Զէ որ, երբ օրիորդը այստեղ է, ես չեմ կարող...

ՅՈՒ. Այդ ուղղակի այնպէս մանր ու տիսմար բան է... Զը զիտեմ ինչու քաշուել: Զեմ՞ հասկանում... Այդ հոգու մանրութեան նշան է,—էն,

Տ. Կէթէ. Ցեսնեմ թէ ինչ կ'անէիր, ևթէ ևս այդ բանի մասն սկսէի խօսել օրիորդի մօտ:

ՅՈՒ. Միշտ օրիորդը, օրիորդը: Հանգիստ թող օրիորդ Աննային: Նա մեղ բնաւ չէ խանգարում:

Տ. Կէթէ. Ես չեմ էլ ասում որ նա մեղ խանգարում է: Բայց չէ կարող նրա համար շատ էլ հետաքրքրական լինել:

ՅՈՒ. ԱՌԻ, Կէթէ, Կէթէ... Այդ տանջանք է: Միշտ փողային հաշիներ, միշտ երկիւղ, կարծես վաղը արդէն մենք պէտք է սոված մնանք: Այդ սարսափելի է: Իսկապէս այդ բոլոր այնպիսի տպաւորութիւն է թողնում որ կարծես քո գըլուխը և քո սիրաը ամբողջապէս և միմիայն փողային հոգսերով լինէին լրցուած: Ահա և կնոջ մասին ստեղծած իդէալը... Ի՞նչը կարելի է վերջապէս սիրել նրանում:

Տ. Կէթէ. Իմ մասին ես չեմ էլ հոգում: Բայց ինչ կը լինի Ֆիլիպպիկի հետ, եթէ... Եւ դեռ դու ինքդ ասացիր որ դու չես կարող յօյս դնել վաստակի վրայ: Ուրեմն հարկաւոր է խընայողութիւն անել:

ՅՈՒ. Ի հարկէ: Դու միշտ ի նկատի ունես քո ընտանիքի շահերը, իսկ ես ընդհանուրի շահերի մասին եմ մտածում: Ես առհասարակ ընտանիքի լաւ հայր չեմ: Ինձ համար գլխաւորը այն է որ ես արտայայտեմ, ինչ որ կայ իմ մէջ: Ինչպէս մի Պետական լծի տակ, այդպէս եմ ես ինքս ինձ թւում: Եւ այդ երեխ ինձ մի ժամանակ կործանելու է:

Տ. Կէթէ. Յոհաննէս: Ինձ համար զարհուրելի է այդպիսի բաներ լսել քեզնից:

ՅՈՒ. Օրիորդ Աննան բոլորովին իրաւացի է: Խոհանոցն ու մանկանոցը ահա ամենալաւ դէպքում ձեր հորիզոնը: Այդ սահմաններից գուրս գերմանուհու համար ոչինչ գոյութիւն չունի:

Տ. Կէթէ. Բայց և այնպէս մէկն ու մէկը պէտք է կերակուր պատրաստի և երեխաներին պահի: Օրիորդի համար լաւ է այդպէս խօսել: Ես էլ աւելի մեծ ուրախութեամբ կը նստէի և գրքեր կը կարդայի:

ՅՈՒ. Կէթէ: Դու չը պէտք է դիտմամբ ինքդ քեզ ստորացնես: Այդպէս խօսել մի էակի մասին, որ այնքան բարձր է կանգնած, ինչպէս օրիորդ Աննան...

Տ. Կէթէ. Բայց եթէ նա այդպիսի բաներ է ասում:

ՅՈՒ. Ինչպիսի բաներ:

Տ. Կէթէ. Մեր գերմանուհիներիս մասին—այդպիսի յիմար բաներ:

ՅՈՒ. Նա ոչ մի յիմար բան չասաց: Ընդհակառակը: Այս վարկեանում ես նոյն իսկ չէլ ուղենալ կրկնել թէ ինչպէս

լաւ էր նա քո մասին խօսում: Ես չեմ ուզում այդպիսով քոյ ամաչացնել:

Տ. Կէթէ. Այնուամենայնիւ նա խօմ ասաց գերմանուհին և ներիս մտաւոր նեղ հորիզոնի մասին:

ՅՈՆ. Ապացուցիր որ նա սխալում է:

Տ. Կէթէ. (Արտասուելով ինանդոս): Ոչ, Հաննէս... դու թէս բարի ես—բայց երբեմն... երբեմն այնպէս սանն ես լինում, այնպէս դաժան—այնպէս անսիրտ:

ՅՈՆ. (Մի քիչ անկի նանգիս): Դէ հիմա էլ անսիրտ տառայ: Ինչով, Կէթէ:

Տ. Կէթէ. (Հեկեկալով): Որովհետեւ դու ինձ... տաճում ես... դու շատ լաւ գիտես որ...

ՅՈՆ. Ի՞նչ ես գիտեմ, սիրելի Կէթէ:

Տ. Կէթէ. Դու գիտես որքան քիչ եմ ես ինձից բաւական: Դու այդ գիտես—բայց... Բայց դու բնաւ չես խղճում ինձ: Միշտ ամեն բանով ինձ խայթում ես:

ՅՈՆ. Բայց Կէթիսէն ինչով, ինչպէս թէ:

Տ. Կէթէ. Փոխանակ ներոզամիտ լինելու դէպի ինձ փոխանակ մի քիչ ամրացնելու իմ հաւատը դէպի ինքս ինձ... Ոչ, դու ինձ միշտ նուաստացնում ես, միշտ նուաստացնում... միշտ ստորացնում: Ես ամեննեին չեմ երևակայում թէ մի երես լիք բան եմ և լայն հորիզոններ ունեմ: Բայց ես խօմ զուրկ չեմ զգացմոնքներից:—Ի հարկէ ես մի լուսատու չեմ: Ընդհանրա պէս ես արդէն վազուց է նկատում եմ որ ես համարեա աւելորդ եմ:

ՅՈՆ. (Ուզում է բոնել նրա ձեռք, Կէթէն խլում է ձեռք նրանից): Դու աւելորդ չես: Այդ երբէք ես չեմ ասել:

Տ. Կէթէ. Դու հէնց նոր այդ ասացիր: Բայց նոյն խոկ եթէ դու այդ չասէիր, ես այդ ինքս զգում եմ:—Ես քո ինչիդ եմ, քանի որ չեմ հասկանում քո աշխատութիւնը: Խոկ երեխան... հա ի հարկէ: Նրան ես կաթ եմ տալիս, պահում եմ մաքուր... բայց այդ կարող է մի աղախին էլ անել, և յետոյ... յետոյ այլ ես ոչնչով չեմ կարող ես նրան օգնել: (Կրկին սասիկ լալով): Ես օրիորդ Աննայի մօտ շատ աւելի լաւ կը դաստիարակուէր:

ՅՈՆ. Դու էլ լաւ... բայց, բայց սիրելի Կէթիսէն:

Տ. Կէթէ. Ես միայն այնպէս եմ ասում: Բայց այդ ծշմարիտ է: Օրիորդը շատ է ուսել, շատ գիտէ: Խոկ մենք, մենք ու զորմելի հաշմանդամներ ենք: Ի՞նչպէս կարելի է ուրիշի համար նեցուկ լինել, երբ ինքը երբէք...

ՅՈՆ. (Լի մնօւրեամբ եւ սիրով, ուզում է գրկել Կէթէն): Կէթիսէն, ոսկէ, ոսկէ դու ստեղծուածք: Դու այնպիսի մի սիրու

ունես, ինչպէս հէքիաթների բարի հոգիները. Խորունկ, շատ խորունկ սիրու ունես, իմ աննմանս: Ո՛, դու իմ քաղցրինկ, իմ հրեշտակ: (Կէթէն նրում է նրան իրանից, խոկ նա բորովում է): Ես անպիտանի մէկը կը լինեմ, եթէ... երբեմն ես լինում եմ կոպիտ և չար: Ես քեզ արժանի չեմ, Կէթէ:

Տ. Կէթէ. Ա՛հ, ոչ—ոչ Հաննէս: Այդ դու այնպէս ասում ես միայն այժմ...

ՅՈՆ. Ուղիղ եմ ասում Կէթիսէն:—Թոնդ սրբկայի մէկը լինեմ, եթէ ես...

Տ. Կէթէ. Թոնդ ինձ Հաննէս: Ես պէտք է մտածեմ:—Խոկ նամակը, նամակը:

ՅՈՆ. Ա՛հ, յիմար Կէթիսէն, ինչի մասին պէտք է մտածես:

Տ. Կէթէ. Շատ բաների մասին: Թոնդ, թող ինձ:

ՅՈՆ. (Զերմագին): Ա՛հ, գէն գցիր այդ նամակը: Դու իմ քաղցրիկ, իմ անուշիկ կինս, դու իմ նազելիս:

Տ. Կէթէ. Ո՛չ, Հաննէս, ոչ: (Իրանից հեռացնում է նրան):

ՅՈՆ. Բայց այդ ի՞նչ է պատահել քեզ:

Տ. Կէթէ. Կաց, Հաննէս, նայիր, տես: (Ցոյց է տալիս նրան նամակը): Նա հարցնում է, ծախել արդեօք:

ՅՈՆ. Ո՞ր թղթերը:

Տ. Կէթէ. Մանարանի ակցիաները:

ՅՈՆ. Միթէ տոկոսները հերիք չեն անում:

Տ. Կէթէ. Ի՞նչ ես խօսում: մենք այս ամիս դարձեալ մօտ հազար մարկ աւել ենք ծախսել:

ՅՈՆ. Ի՞նչ ես ասում, Կէթէ: Այդ ուղղակի անհաւատալի է թուում: Սիրելիք, մի քիչ էլ ինայող եղէք:

Տ. Կէթէ. Ինձ մօտ բոլորը նշանակուած է, Հաննէս:

ՅՈՆ. Մի և նոյն է, ես բան չեմ հասկանում հաշւներից:

Տ. Կէթէ. Դու շատ ես բաժանում, Հաննէս: Եւ այդպէս անա հալում է մեր դրամագլուխը: Ուրեմն ծախի նա ակցիաները:

ՅՈՆ. Այն, այն—ընականաբար.—բայց սպասիր: Առհասարակ այդ բոլորը չնչին բաներ մն. ուր ես գնում:

Տ. Կէթէ. Պատասխան գրելու:

ՅՈՆ. Կէթէ:

Տ. Կէթէ. (Նուռ զալով դռան մէջ): Ի՞նչ է, Հաննէս:

ՅՈՆ. Եւ դու ուղիւմ ես այդպէս գնալ:

Տ. Կէթէ. Ի՞նչ կայ որ:

ՅՈՆ. Ես ինքս էլ չը գիտեմ ինչ:

Տ. Կէթէ. Ի՞նչ ես ուղում:

ՅՈՀ. Կէթխէն, ես չը գիտեմ, ի՞նչ պատահեց քեզ հետ:
Տ. Կէթէ. Ոչինչ, Հաննէս, ոչինչ:
ՅՈՀ. Դու ինձ այլ ևս չես սիրում:
Տ. Կէթէ. (Խոնարհում է գլուխը եւ բացասական կերպով
շարժում):

ՅՈՀ. (Գրկելով Կէթէին): Չես յիշում, Կէթէ, մենք քեզ
հետ միանգամ ընդ միշտ պայմանաւորուել ենք իրարից գաղա-
նիք չունենալ: Ամենաչնչին գաղանիք անգամ: (Աւելի ալիս
գրկելով նրան): Դէ ասա տեսնեմ:—Դու ինձ այլ ևս չես սի-
րում, Կէթխէն:

Տ. Կէթէ. Ախ, Հաննէս. Դու այդ արդէն գիտես:
ՅՈՀ. Եթէ այդպէս է, ի՞նչ է պատահել քեզ:
Տ. Կէթէ. Ինքդ այդ գիտես:
ՅՈՀ. Ի՞նչ բան է: Ես ոչինչ չը գիտեմ: Գաղափար ան-
դամ չունեմ:

Տ. Կէթէ. Եթէ ես կարողանայի մի նշանակութիւն ունե-
նալ քեզ համար:

ՅՈՀ. Բայց դու հէնց ունես այդ:
Տ. Կէթէ. Ո՛չ, ոչ:
ՅՈՀ. Ուրեմն, ասա տեսնեմ...
Տ. Կէթէ. Այդ հարցում ոչինչ չես կարող անել, Հաննէս,
բայց... Ես քեզ չեմ գոհացնում:

ՅՈՀ. Դու ինձ գոհացնում ես: Դու լիովին ինձ գոհա-
ցնում ես:

Տ. Կէթէ. Այժմ ես այդպէս ասում:
ՅՈՀ. Այդ իմ խորին համոզմունքն է:
Տ. Կէթէ. Հիմա, այս վայրկեանում:
ՅՈՀ. Բայց ինչու ես եղրակացնում որ...
Տ. Կէթէ. Այդ ես տեսնում եմ:
ՅՈՀ. Կէթխէն, միթէ ես առիթ եմ առել քեզ...
Տ. Կէթէ. Ո՛չ, երբէք:

ՅՈՀ. Հիմա տեսնում ես: (Աւելի ես բնիւրեամբ գրկելով
նրան): Այդ բոլորը անմիտ ցնորդներ են: Վատ մտածմունքներ,
Կէթխէն, որոնց պէտք է քեզնից հեռու քշես, հոգիս: (Զերմ
համբուրում է նրան):

Տ. Կէթէ. Ախ, Եթէ այդ միայն անմիտ ցնորդներ լինէին:
ՅՈՀ. Հաւատան ինձ:
Տ. Կէթէ. Իսկ ես, Հաննէս, այսպէս սասաթի եմ քեզ սի-
րում: Խօսքերով արտայատել չեմ կարող թէ ինչպէս շատ: Ինձ
ՅՈՀ. Բայց, Կէթխէն:

Տ. Կէթէ Ասասուած իմ, ներիր ինձ այդ:—Փոքրիկ, սիրուն,
զուածալի զաւակս: (Փարարւում է Յոհաննէսի վզով): Դու իմ
սիրելի, իմ բարի...

Լ. Ա. գրկախառնուրինեւր:

Օր. Աննան հաղնուած՝ նաւով զբոնելու համար, բաց է անում պա-
տշկամբի դուռը:

ՕՐ. ԱՆՆԱ. (Կանչում է): Պարոն դօկտօր: Ախ, ներեցէք:
(Ցես է բառով գլուխը):

ՅՈՀ. Խակոյն, խակոյն, օրիորդ: (Վերցնում է իր ձեռա-
գիրը): Մենք գնում ենք նաւարկելու, Կէթխէն:—Այլ ևս ոչ մի
վատ մտածմունք. խօսք տուր ինձ: (Համբուրում է հրաժետի
համար, վերցնում զլիսարկը, տուռ է գալիս զնալու): Գուցէ դու-
էլ մեզ հետ կը գաս, Կէթխէն:


Տ. Կէթէ. Ես չեմ կարող անից դուրս գալ, Հաննէս:

ՅՈՀ. Ուրեմն ցտեսութիւն: (Գնում է):

Տ. Կէթէ. (Սեւեռած նայում է նրա յետերց նման մի
մարդու, որ տեսնում է քէ ինչպէս չխանում է հրաշալի մի տեսիլ:
Նրա աշխերը լցուում են արտասունով):

b.—Ա.

(Կը շարունակուի)



ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ^{*)}

Դ Բ Ա Մ Ա

Գերհարտ Հառապտմանի

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ծամանակը՝ առաւտեան մօտ ժամի 10 է։ Գրասեղանի վրայ դեղասում է լամպը Տիկ։ Կէթէն նստած է սեղանի առաջ՝ խորասուզուած հաշիւների մէջ։

Դուրսը, պատշկամբում, մէկը մաքրում է կօշիկները։ Կէթէն կէր բարձրանում է և լարուած սպասում, հրառնը մտնում է։

Տիկ։ Կէթէն. (Դիմաւորելով նրան): Ա՛խ։—Այդ դուք էք։ Այդ շատ սիրալիր է ձեր կողմից։

ԲԲԱՌԻՆ. Բարի լրյա ի՞նչ խայտառակ եղանակ է։

Տիկ։ Կէթէն. ի՞նչպէս մութ է այսօր։ Եկէք այստեղ։ Վառարանում կրակ կայ։—Տիկին Լէմանը ձեզ հաղորդեց։

ԲԲԱՌԻՆ. Այն, նա ինձ մօտ էր։

Տ. Կէթէն. (Նախլնքաց հանգիս արտայայտութեան նակառակ՝ արտասովոր կենդանութեամբ եւ զղային եռանդով): Ապա սէք։ Ես ձեզ համար սիրար բերեմ։

ԲԲԱՌԻՆ. Ոչ, չորհակալ եմ։—Ոչ, ոչ։ (Նտապում է Կիրէն յետելից եւ հասնում նրան, երբ սա ճիզ է քափում գրեթե պահանջից վայր բերել սիգարենով արկղը):

Տ. Կէթէն. Ես կը ցանկայի, որ դուք ձեզ բոլորովին յար մար զգայիք։

ԲԲԱՌԻՆ. (Նայելով Կիրէնին): Բայց ես ծխելու ցանկութիւն չունեմ։

Տ. Կէթէն. Արէք այդ ինձ հաճոյք պատճառելու համար, Ես շատ սիրում եմ ծխախտուի հոտը։

ԲԲԱՌԻՆ. Եթէ այդպէս է, համեցէք... (Կացնում է սիրար):

Տ. Կէթէն. Դուք պէտք է առաջուայ նման բոլորովին չը քաշուէք։—Իսկ այժմ, ախ դուք չար մարդ։ Ինչու ամբողջ մի շաբաթ չեկաք մեղ մօտ։

ԲԲԱՌԻՆ. Ես կարծում էի այլ ևս հարկաւոր չեմ Հանսին։

Տ. Կէթէն. Բայց ինչպէս դուք կարող էք...։

ԲԲԱՌԻՆ. Նա այժմ ունէ օրիորդ Աննա Մառը։

Տ. Կէթէն. Եւ ի՞նչպէս կարողանում էք այդ ասել։

ԲԲԱՌԻՆ. Նա հօ թքում է իր բարեկամների վրայ։

Տ. Կէթէն. Դուք հօ գիտէք նրա գիւրագրգիռ բնաւորութիւնը։ Զէ որ նա լրջութեամբ չառաց այդ։

ԲԲԱՌԻՆ. Սակայն և այնպէս։ և ես շատ լաւ գիտեմ, թէ ով է նրա վրայ ազդում այդ ուղղութեամբ։ Առհասարակ, այդ Մառը կարող է խելօք անձնաւորութիւն լինել, բայց մի բան հաստատ է։ Նա յամառ է ու եսական, անխնայ, երբ մի նպատակի է ձգտում։ Իմ առաջ նա երկիւղ է կրում։ Նա լաւ գիտէ, որ ինձ չէ կարող խարել։

Տ. Կէթէն. Բայց ի՞նչ նպատակ կարող է նա ունենալ...։

ԲԲԱՌԻՆ. Հանսը նրան հարկաւոր է, ով գիտէ, ինչ բանի համար ես խանգարում եմ նրան։ Իմ աղղեցութիւնը նրա սրտովը չէ։

Տ. Կէթէն. Բայց ես իսկապէս բոլորովին չեմ նկատել, որ...։

ԲԲԱՌԻՆ. (Բարձրանալով): Ես զօռով չեմ ստիպում ինձ հաւատալ։ Հանսի խնդիրքավ միայն եկայ այստեղ։ Եթէ աւելորդ եմ, կը հեռանամ կրկին։

Տ. Կէթէն. (Արագ եւ ազդու): Աննան այսօր գնում է։

ԲԲԱՌԻՆ. Միթէ։ Ուրեմն նա գնում է։

Տ. Կէթէն. Այն։ Եւ այդ պատճառով, պարսն Յրառւն, ես ուղում էի ձեզ ինդիրեկիւ...։ Հաննէսի համար սարսափելի կը լինէր, եթէ նա այժմ յանկարծ մնար մենակ։ Դուք պէտք է առաջուայ նման մեղ յաճախէք, պարոն Յրառւն։ Յիշաչար մի եղէք դէպի նա, մի նեղացէք նրա կոշտութիւնից։ Դուք հօ ճանաշում էք նրան։ Զէ որ մենք գիտենք, թէ իսկապէս որչափ նա բարի է։

ԲԲԱՌԻՆ. Ես, ճիշտ է, շատ վիրաւորուղ չեմ, բայց...։

Տ. Կէթէն. Լաւ, ուրեմն մնացէք մեղ մօտ։ Հէսց այսօր։ Ամբողջ օրով։

ԲԲԱՌԻՆ. Վերջապէս ես կարող եմ գնալ և կրկին գալ։

Տ. Կէթէն. Բայց այնպէս, որ դուք այստեղ լինէք նրա մեկնելու ժամանակ։ Այս, կը տեսնէք թէ ինչպէս այժմ մեղ մօտ լինի։ Ես ևս սովորեցի շատ բան ըմբռնել։ մենք կ'անցկացնենք շատ հանգիս և հիանալի ձմեռու։—Հա, մի բան էլ էի ձեզ

հարցնելու (կատակի ձեւով): Ես ուղում եմ վող վաստակել:—Եպայն, լուրջ: Միթէ մենք ևս ստեղծուած չենք աշխատելու համար, մենք կանայքս:

ԲԻՌԱՌԻՆ. Այդ ինչպէս յանկարծ այդպիսի մի գաղափար ծագեց ձեր մէջ:

Տ. Կէթէ: Այդ ինձ զուարձութիւն է պատճառում, պարո՞բրառն:

ԲԻՌԱՌԻՆ. Փող վաստակել—հեշտ է ասել:

Տ. Կէթէ. Հէնց, օրինակի համար, ես կարող եմ ձենապակու վրայ նկարել: Այս սերվիզը իմ նկարածն է, կամ իթայդ էլ չեղաւ... ասեղնագործել: Դիցուք սպիտակեղէնի վրա գեղեցիկ նշանագրեր հանել:

ԲԻՌԱՌԻՆ. Բայց դուք անկասկած միայն կատակ էք անում Տ. Կէթէ. Էհ, ով գիտէ:

ԲԻՌԱՌԻՆ. Քանի որ դուք ինձ ոչ մի բացարձութիւն չետալիս, ես իսկապէս չը գիտեմ...

Տ. Կէթէ. (Ոգեւորուելով): Դուք կարող էք լուսութիւն պահպանել:—Ա՛յս, ոչ: Կարծ ասած, մարդկանց մէջ կան պահանջներ: մենք բոլորս էլ այնպիսի բնաւործութիւններից չենք, որոնք կարողանում են հաշուով ապրել:

ԲԻՌԱՌԻՆ. Գոնէ Հաննար:

Տ. Կէթէ. Ա՛յս, ոչ... այսինքն չը պէտք է դրա համար շատ տանջուել: Միայն պէտք է հոգալ որ բաւականութիւն անի:

ԲԻՌԱՌԻՆ. Երբ դուք յոյս ունեք այնքան շատ վաստակել: Հիմիկուց կարելի է ասել որ դուք կը լինին ձեր ջանքերը:

Տ. Կէթէ. Գուցէ տարին չորս հարիւր թալեր...

ԲԻՌԱՌԻՆ. Չորս հարիւր թալեր: Հազիւ թէ:—Սակայն ի՞նչու հէնց չորս հարիւր:

Տ. Կէթէ. Ինձ այդքան է հարկաւոր:

ԲԻՌԱՌԻՆ. Կրկին մէկը օգտուել է Հանսի անսահման բարութիւնից:

Տ. Կէթէ. Ոչ, ամենաին ոչ:

ԲԻՌԱՌԻՆ. Գուցէ պէտք է այդ օրիորդ Աննային օգնել:

Տ. Կէթէ. Ոչ, ոչ, ոչ: Ի՞նչեր էք մտածում: Ի՞նչպէս ձեր միտքը եկաւ այդ:—Այլիս ոչինչ չեմ ասել: Ոչ մի խօսք, պարո՞բրառն:

ԲԻՌԱՌԻՆ. (Վերցնելով գլխարկը): Յամենայն դէպս ես անկարող եմ այդ բանում ձեզ օգնել: Այդ իսկապէս կը լինէր...

Տ. Կէթէ. Դէ լաւ, լաւ: Թողնենք այդ բանը: Բայց դուք կը վերադասնաք:

ԲԻՌԱՌԻՆ. (Պատրաստուելով գնալ): Ի հարկէ, բնականաբար՝

—իսկ ձեր մտադրութիւնը իսկապէս լուրջ է, արկին Կէթէ:

Տ. Կէթէ. (Ուզում է ծիծաղել, աշխերում երեւում է արտասուլ): Ա՛յս, ոչ, ես միայն կատակ արի: (Ուժգին զլխով է անում եւ կիսակատակ նեւով ասում): Գնացէք, գնացէք: (Զը կարողանալով այլեւս զայել իր յուզմաները, վազում է ննջարան):

ԲԻՌԱՌԻՆ. (Մտախոն նեռանում է):

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Ձեռին լոբիով լի սկաւառակի վրայ): Այդ շատ լաւ եղաւ, հիմա կրկին կը տիրի մեղ մօտ խաղաղութիւն:—Այդպէս չէ, Կէթէ:

Տ. Կէթէ. (Խոնարհուելով հաշիւների վրայ): Թո՞ղ ինձ, ես պէտք է մտածեմ, մայրիկ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ա՛յս, հա:—Քեզ էլ չեմ խանգարիլ:—Ո՞ւր է նա գնում, իսկապէս:

Տ. Կէթէ. Կարծեմ, Ցիւրիկ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Շատ էլ լաւ է անում: Այնտեղ նրան աւելի յարմար է:

Տ. Կէթէ. Ի՞նչպէս թէ, մայրիկ: Կարծեմ նա քեզ դիւր էր գալիս:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ի՞ի, չէ, չէ, նրան ես չեմ հաւանում. նա ինձ համար չափազանց մօղեռն է:

Տ. Կէթէ. Բայց մայրիկ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Եւ առհասարակ այդ ի՞նչ բանի նման է: Զահէլ աղջիկ երեք օր է ման է գալիս ծակ թեքով:

Յոհաննէսը գլխարկով, պատշկամբից, շտապ դիմում է իր առանձնասենեկը:

Տ. Կէթէ. Հաննէս:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ես եմ:

Տ. Կէթէ. Ես էլ գամ երկաթուղու կայարանը:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Թօրուելով ուսերը): Այդ դու գիտես: (Մըսնում է առանձնասենեակը):

Փոքր դադար:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Էլ ի՞նչ պատահեց նրան: (Վեցացնում է լոբի պեղելը եւ տեղից վեր կենում): Իսկն ասած արգէն ժամանակ է որ այստեղ կրկին վերականգնի խաղաղութիւն:—Առանց այն էլ արդէն մարդիկ սկսել են խօսել այդ մասին:

Տ. Կէթէ. Ի՞նչի մասին:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ես ոչինչ չը գիտեմ: Ես միայն ասում եմ որ... Եւ զբջապէս այդ բոլորը փող արժէ:

Տ. Կէթէ. Ա՛խ, մայրիկ, արժէ այդ մասին խօսելը. միթէ մէկ չէ՝ երեք թէ չորս հոգու համար պատրաստել:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Զէ, մի ասիր, կէթիւն, փշամնքներից հաց է կազմում:

ՅՈՒԱՆԻԿԱԾ մտնում է, նստում, ոտը ոտի վրայ է գցում և թերթում է մի գիրք:

ՅՈՒԱՆԻԿԱԾ. Անամօթ, լիրը պաշտօնեայ: Եւ դա գեռ կայարանի տեսուչ է կոչւում. խմում է, խմում, ամբողջ օրը խմում: Եւ միննոյն ժամանակ ինչպէս կոպիտ է... է... է...:

Տ. Կէթէ. Ե՞րբ է մեկնում ամենայարմար գնացքը: Մի բարկանար, Հաննիկ:

ՅՈՒԱՆԻԿԱԾ. Առհասարակ այս զզուելի մի փոս է: (Աղմուկով փակով է գիրքը եւ ցատկում տեղից): Ես ևս չեմ մնում այստեղ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ի՞նչ ես ասում, տղաս, չէ որ դու չորս տարով ես բռնել բնակարանը:

ՅՈՒԱՆԻԿԱԾ. Ուրեմն ես պէտք է հիմա այստեղ կորչեմ, որովհետեւ դժբախտութիւն ունեցայ մի յիմարութիւն անել և չորս տարով պայմանաւորուել բնակարանի համար:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Դու ինքդ էիր միշտ ցանկանում ապրել գիւղում: Հիմա հազիւ կէս տարի այստեղ ես, կրկին դժգոհ ես:

ՅՈՒԱՆԻԿԱԾ. Շվէյցարիայում էլ գիւղ կայ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Իսկ երեխան: Ի՞նչ էք անելու նրա հետ: Ուզում էք նրան էլ ձեզ հետ երկրից երկիր քաշքշել, ի՞նչ է:

ՅՈՒԱՆԻԿԱԾ. Շվէյցարիայում աւելի առողջարար է ապրել, քսու այստեղ նաև ֆիլիպիկի համար:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Սիրելիս, ինչպէս տեմնում եմ դու շուտով կը պատրաստուես լուսինն էլ գնալ: Է՞հ, արէք ինչ ուզում էք, ի՞նձ, պառաւիս վրայ, ի՞նչ հարկ կայ ուշադրութիւն դարձնել: (Հեռանում է դրսի դռնով):

Փոքր դադար:

ՅՈՒԱՆԻԿԱԾ. (Հառաջում է): Պարոններ, զգայշ եղէք, ասում եմ ձեզ:

Տ. Կէթէ. Այդ որտեղից զլուխդ եկաւ Շվէյցարիա գնալ:

ՅՈՒԱՆԻԿԱԾ. Այն, այն, հեզ կերպարանք շինիր: (Նրա ձեւով արտասանելով): «Այդ որտեղից զլուխդ եկաւ Շվէյցարիա գնալ»: Լսիր, ես շատ լաւ եմ հասկանում, թէ ինչ է թագնուած այդ խօսքերի տակ: Ես լաւ գիտեմ, թէ դու ինչ ես մտածում: Ճիշտ ես իմացել. ես սրտանց կ'ուզենայի լինել այստեղ, որտեղ

օրիորդ Աննան է: Այդ բոլորովին բնական է: Այդ կարելի է նոյն իսկ ասել բացարձակ:

Տ. Կէթէ. Հաննէս—դու այսօր բաւական տարօրինակ ես: Այնպէս տար որինակ... աւելի լաւ է ես հեռանամ:

ՅՈՒԱՆԻԿԱԾ. (Արագութեամբ): Ես ինքս էլ կարող եմ հեռանալ: (Դուրս է զալիս պատշաճամբը):

Տ. Կէթէ. (Հառաջելով եւ զլուխը շարժելով շենջում է): Օ՛, Տէր իմ, Տէր իմ...

Օրիորդ Աննան մտնում է, դնում է աթոռի վրայ՝ գլխարկը, պայուսակը և վերաբիուն:

ՕԲ. ԱՆՆԱ. Ես պատրաստ եմ: (Դիմելով Կերէին): Դեռ ևս ժամանակ կայ.—Ի՞նչքան է մնում...

Տ. Կէթէ. Առնուազն երեք քառորդ:

ՕԲ. ԱՆՆԱ. Ա՛խ:—Ի՞նձ համար ձեզ մօտ շատ լաւ էր, և ահա արդէն պէտք է մեկնել:

Տ. Կէթէ. Այն, ժամանակը անցնում է:

ՕԲ. ԱՆՆԱ. Այժմ ես պէտք է բալորովին փակուեմ Ցիւրիխուում: Պարապել, պարապել, ուրիշ ոչինչ չեմ ուզում տեսնել:

Տ. Կէթէ. Քեզ հետ իւղուհաց կը վերցնես:

ՕԲ. ԱՆՆԱ. Ո՛չ, չնորհակալ եմ: Ուտել չեմ ուզում: (Կարի լուսրիւն): Միայն շուտ անցնէին այդ առաջին օրերը, ողջոյնները: Ուզզակի անտանելի է: Բոլոր այդ բարեկամները և հարցու փորձերը, ըրրը: (Դողում է ինչպէս ցրտից):—Դու մի-մի անգամ ինձ կը զրես:

Տ. Կէթէ. Օ՛, ի հարկէ: Միայն թէ մեզ մօտ քիչ նորութիւններ են լինում:

ՕԲ. ԱՆՆԱ. Կը նուիրեն ինձ քո պատկերը:

Տ. Կէթէ. Ի՞նչո՞ւ չէ, ուրախութեամբ: (Որոնում է գրաւդանի մի արկղում): Բայց սա հինն է:

ՕԲ. ԱՆՆԱ. (Քննութեամբ շոյում է նրա ծոծրակը: Գրերէ կարեկցաբար): Իմ բարակ պարանոցիկ:

Տ. Կէթէ. (Թեու փետուիլ, յետ է դանեսմ): Վետակի հիգնութեամբ): Ասենք նրա վրայ եղած զլուխն էլ շատ ծանր չէ, Աննա:—Ահա և պատկերս: (Տալիս է Աննային մի լուսանկար):

ՕԲ. ԱՆՆԱ. Շատ աջող է, շատ աջող: Գուցէ ունես և քո մարդու պատկերը:—Ես ձեզ բոլորիդ շատ սիրեցի:

Տ. Կէթէ. Զը զիտեմ՝ կայ թէ ոչ:

ՕԲ. ԱՆՆԱ. Ա՛խ, սերել կէթիւն, փնտոիր, փնտոիր:—Մէկը կայ:—Այն:

Տ. Կէթէ. Մէկը դեռ մնացել է:

ՕՐ. ԱՆՆԱ. Կարող եմ ես վերցնել:
Տ. Կէթէ. Այն, Աննա, վերցրու:

ՕՐ. ԱՆՆԱ. (Շտապ բազցնում է լուսանկարը): Իսկ այժմ —այժմ ես ձեղնից շուտով կը մոռացուեմ:—ԱՌԻ. Կէթիէն, Կէթիէն: (Լալով ընկնում է նրա վզով):

Տ. Կէթէ. Ո՞չ Աննա... ես միշտ... ի հարկէ, Աննա, ես միշտ յիշելու եմ քեզ և...

ՕՐ. ԱՆՆԱ. Ինձ սիրելու

Տ. Կէթէ. Այն, Աննա: Այն:

ՕՐ. ԱՆՆԱ. Ասա ինձ միայն, սիրում ես դու ինձ:

Տ. Կէթէ. Ինչու ես կասկածում:

ՕՐ. ԱՆՆԱ. Դու մի քիչ էլ ուրախ չես, Կէթէ, որ ես գնում եմ:

Տ. Կէթէ. Ի՞նչ ես ուզում դրանով ասել:

ՕՐ. ԱՆՆԱ. (Բոլորովին բաց բողնելով Կէրէին): Այն, այն: Այդ լաւ է որ ես գնում եմ: Յամենայն դէպս: Մայր Ֆօկերատին էլ այլս դիւր չէ գալիս իմ ներկայութիւնը:

Տ. Կէթէ. Այդ բանին ես չեմ հաւատուի:

ՕՐ. ԱՆՆԱ. Կարող ես ինձ հաւատալ: (Նստելով սեղանի մօս): Ինչի՞ համար է այդ ամենը: (Ինքինիք մոռանալով դուրս է հանում բազցրած լուսանկարը եւ մտախոհ նայում նրան): Ո՞ր պիսի խոր կնճիռ ունի նա բերանի շուրջը:

Տ. Կէթէ. Ո՞վ:

ՕՐ. ԱՆՆԱ. Հաննէսը:—Ուղղակի թախիծի կնճիռ: Այդ առաջ է գալիս միայնակ լինելուց: Ով մինակ է, նա պէտք է շատ տանջուի ուրիշներից:—Ի՞նչպէս ծանօթացաք դուք:

Տ. Կէթէ. ԱՌԻ, այդ եղաւ...

ՕՐ. ԱՆՆԱ. Նա դեռ ուսանող էր:

Տ. Կէթէ. Այն, Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Դու դեռ շատ ջահէլ էիր և դու ասացիր այսից:

Տ. Կէթէ. (Կարմրելով եւ սփորուած): Այսինքն, ես...

ՕՐ. ԱՆՆԱ. (Համարեա տանջուելով): ԱՌԻ, Կէթիէն, Կէթիէն: (Բազցնում է լուսանկարը եւ վեր կենում): Դեռ ժամանակ կայ:

Տ. Կէթէ. Դեռ շատ:

ՕՐ. ԱՆՆԱ. Շատ: ԱՌԻ, Աստուած: (Նստում է դաշնամուրի առաջ): Դու չես նուագում: (Կէրէ շարժում է զլուխը): ԶԲԱ էլ երգում: (Կէրէն կրկին շարժում է զլուխը): Իսկ Հաննէսը սիրում է երաժշտութիւն: Ո՞չ:—Ես նուագում էիր և երգում առաջ: Հիմա վաղուց է որ թողել եմ: (Յանկարծակի տեղից վեր կենա-

լով): Միենայն է: Ինչ կարելի էր վայելել, վայելուեց: Պէտք է գոհ լինել: Իրերի վրայ տարածուած է մի ինչ որ չողի, ինչ որ նշառութիւն: այդ է ամենից լաւը: Այդպէս չէ, Կէթէ:

Տ. Կէթէ. Այդ ես չը գիտեմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Այն ամենը, ինչ քաղցրութեամբ է բուրում, իսկապէս քաղցր չէ:

Տ. Կէթէ. Կարելի է այդպէս է:

ՕՐ. ԱՆՆԱ. Իսկութեամբ այդպէս է:—ԱՌԻ, ազատութիւն, ազատութիւն: Պէտք է ազատ լինել ամեն կողմից: Զը պէտք է ունենալ ոչ հայրենիք, ոչ ընտանիք, ոչ բարեկամներ:—Հիմա պէտք է որ ժամանակը լինի:

Տ. Կէթէ. Դեռ ոչ, Աննա:

Փոքր դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես ծիւրիխում կը լինեմ շատ կանուխ: Ամբողջ եօթ օր առաջ:

Տ. Կէթէ. Հա:

ՕՐ. ԱՆՆԱ. Միայն թէ շուտ սկսուէին պարապմունքները: (Յանկարծ հեկեկալով փարարում է Կէրէի վզով): ԱՌԻ, Աստուած, անձկութիւնից ու վշտից սիրոս կտրատում է:

Տ. Կէթէ. Խեղճ, խեղճ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Շտապ ազատուելով նրա գրկից): Բայց ես պէտք է գնամ: Պէտք է:

Փոքր դադար:

Տ. Կէթէ. Աննա—հիմա որ դու գնում ես—միթէ չես ուզում: Ինձ խորհուրդ տալ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Տիրութեամբ, կարեկից ծալիսով): Սիրելի Կէթիէն:

Տ. Կէթէ. Դու այդ հասկացար... դու այնպէս բարերար ազգեցութիւն ունեցար նրա վրայ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ազգեցութիւն ունեցաց: Իսկապէս:

Տ. Կէթէ. Այն, Աննա:—Եւ լսիր—ինձ վրայ նոյնպէս: Ես պէտք է քեզնից շատ բաների համար չնորհակալ լինեմ: Եւ ես այժմ հաստատ վճռել եմ... խորհուրդ տուր ինձ, Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես չեմ կարող քեզ խորհուրդ տալ: Ես վախենում եմ քեզ խորհուրդ տալ:

Տ. Կէթէ. Դու վախենում ես:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես քեզ շատ եմ սիրում, շատ եմ սիրում, Կէթիէն:

Տ. Կէթէ. ԱՌԻ, Կէթէ ես կարողանայի մի բան անել քեզ համար, Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ գու չես խիզախիլ անել—չես կարող անել:

Տ. Կէթէ. Բայց գուցէ... գուցէ ես գիտեմ թէ ինչից ես տանջուում:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինչից եմ տանջուում, անխելք աղջիկ:

Տ. Կէթէ. Ես կարող էի ասել, բայց...

ՕՐ. ԱՆՆԱ. Լիրում-լարում, ինչից պէտք է տանջուեմ: Գնա, գնա: Եկել եմ այստեղ, կրկին հեռանում եմ: Ոչինչից ոչինչ էլ չի պատահեր: Տես, կրկին երեաց սիրելի արել: Եկ վերջին անգամ գնանք պտտենք այգին: Ինչ էլ լինի, հարիւրաւոր և հազարաւոր մարդիկ աւելի վատ են ապրում—կամ... Մի բան լիշեցի—ես պէտք է իսկոյն մի երկու խօսք գրեմ:

Տ. Կէթէ. Այդ կարող ես այստեղ անել: (Տեղ է բաց անում գրասեղանի վրայ): Բայց ոչ: Թանաքը և զրիչը այնտեղ են, Հաննէսի սենեակում: Նա այնտեղ չէ: Գնա այնտեղ, Աննա: (Նա բողնում է Աննային դոնով եւ մնում մենակ):

Փոքր դադար:

ՅՈՒ. (Ներս է մնում դրսից: Աւելի անհանգիս հան առաջ): Դարձեալ սկսեց անձրենլ:—Մենք պէտք է կառը պատուիրէինք:

Տ. Կէթէ. Հիմա շատ ուշ է այդ անել:

ՅՈՒ. Այն, դժբախտաբար:

Տ. Կէթէ. Բրառունը այստեղ էր:

ՅՈՒ. Այդ ինձ չէ հետաքրքրում: Ի՞նչ էր նա ուզում:

Տ. Կէթէ. Նա կրկին յաճախելու է մեզ և ամեն ինչ ձեր մէջ լինելու է ինչպէս առաջ:

ՅՈՒ. (Կարն ծիծաղում է): Ծիծաղելի է: Այդ պէտք է ինձ հիացնի:—Գուցէ գեռ կը համանաք, եթէ ուղարկենք:—Ա՛խ, առհասարակ...

Տ. Կէթէ. Կառք կանչելու, Հաննէս: Մինչ կայարանը հօ հեռու չէ:

ՅՈՒ. Բայց սաստիկ ցեխ է, հազիւ կարելի է անցնել: Առ հասարակ դժուար է երեակայել աւելի վատ եղանակ ձանապարհորդելու համար:

Տ. Կէթէ. Այդ ոչինչ. Կուպէում է նա նստելու:

ՅՈՒ. Նա երրորդ կլասում, որ ամբողջապէս լրցուած է և բացի այդ՝ թաց ուսերով:

Տ. Կէթէ. Նա ի հարկէ կը նստի կանանց կուպէում:

ՅՈՒ. Գոնէ առուր նրան մեծ պլէդը:

Տ. Կէթէ. Այն, այն: Արդարեւ: Ես ինքս էլ մտածեցի դրա մասին:

ՅՈՒ. Ա՛խ, առհասարակ բոլոր բանը այնպէս անսպասելի շուտ պատահեց:

Տ. Կէթէ. (Չէ պատախանում):

ՅՈՒ. Նա մնշուշտ ուրախութեամբ կը մնար մի երկու օր եւ:

Տ. Կէթէ. (Փոքր լուռեփիւնից յետոյ): Զէ որ գու նրան առաջարկեցիր:

ՅՈՒ. (Աւելի խիս): Այն ես, բայց ոչ գուք: Ոչ գու և ոչ մայրս: Դուք այն ժամանակ լրել էիք և նա այդ ի հարկէ նկատեց:

Տ. Կէթէ. Ա՛խ, այդ... Ոչ... ես չեմ կարծում որ, Հանս...

ՅՈՒ. Իսկ եթէ հրաւիրելու ժամանակ երկուսը կանգնած են—ձկների նման լրու—ի հարկէ կը կորչի ամեն մի ցանկութիւն մնալ և ակամայ կը գերադասի մերժել:—Ճիշտն ասած՝ ինձ համար շատ ցաւալի է որ մենք նրան վնադում ենք այսպիսի մի գիշեր ու վատ եղանակին:

Տ. Կէթէ. (Մօտենալով նրան երկյուս բներութեամբ): Ոչ, Հաննէս: Այդպէս սիսալ մի նայիր բանի վրայ: Եւ մի մոտածիր միշտ այդպէս վատ իմ մասին: Վոնդելու մասին խօսք անդամ չը կայ, Հաննէս:

ՅՈՒ. Դուք բաւականաչափ նրբազդաց չեք: Դուք կարծես կոյր էք: Ինձ վրայ այդ այնպիսի տպաւորութիւն է թողնում, որ կարծես թէ մենք ուղղակի աթոռը զնում ենք դռան առաջ... Ուղղակի: «Բաւական է որքան մնացիր, հիմա զնա:—Հիմա զնա, ուր կամիս հեռացիր, կորիր ծանալարհը հարթ է քո առաջ»... Ահա այդպէս է ինձ թւում, Կէթէ: Բաժանուելիս էլ ամենաշատը մի սառն ափսոսանք և աւելի ոչինչ:

Տ. Կէթէ. Ոչ, Հաննէս: Մենք աշխատեցինք նրան մի քիչ էլ ապահովացնել:

ՅՈՒ. Եւ դու կարծում ես որ նա այդ կ'ընդունի: Եւ յետոյ այդ մեր արածը գեռ շատ քիչ է: Փողը չէ կարող քաւել մեր անսիրելութիւնը:

Տ. Կէթէ. Բայց, Հաննէս, մի անգամ հօ նա պէտք է զնայ:

ՅՈՒ. Այդպէս խօսում են ֆիլիստէրները, Կէթէ: Նա այստեղ ապրում էր, նա մեր բարեկամը դպաւ, և այժմ, ասում են ֆիլիստէրները՝ մենք պէտք է բաժանուենք: Այդ ես չեմ հասկանում: Այդ մի անիծուած անմտութիւն է, որ ամեն տեղ կտրում է մարդու ճանապարհը, որ ամեն տեղ փչացնում է նրա կեանքը:

Տ. Կէթէ. Ուրեմն դու ուղում ես, որ նա գեռ մնայ այստեղ:

ՅՈՆ. Ես բնաւ ոչինչ չեմ ուզում: Ես միայն այնքանն եմ ասում, որ այդ... որ մեր մտածելու եղանակը ուղղակի այնպէս ողորմելի է և նեղսիրտ ինչպէս ամեն մի ֆիլիստէրական մտածողութեան եղանակ: Եւ եթէ ինձնից կախուած լինէր—որքան ես գիտեմ—եթէ ես ձևականապէս կաշկանդուած չը լինէի ամեն տեսակ չնչին յարաբերութիւններով, ես կ'իմանայի այլ կերպ վերջացնել այս բաները, ես խիղճս այլ ձեռվ կը պահպանէի, ես այլ կերպ կը վերաբերէի դէպի ինձ, քան այժմ: Հաւատացէք ինձ:

Տ. Կէթէ. Բայց գիտես գու, Հաննէս,—ինձ թւում է—իսկապէս շուտով—այստեղ ես աւելորդ կը լինեմ:

ՅՈՆ. Այդ ես չեմ հասկանում:

Տ. Կէթէ. Եթէ դու—ինձ հետ միայն—գուն չես:

ՅՈՆ. Տէր Աստուած: Հայր երկնաւոր: Ոչ—իսկապէս—արդարեւ—գիտես դու—այդ էր ինձ պակաս: Իմ ջղերս էլ հօ նաւի պարաններ չեն: Այդ այլ ես տանել այժմ ես անկարող եմ: (Գնում է պարտէզ):

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Ներս է բերում մի գաւաք բուլիօն, դնում է սեղանի վրայ): Այս էլ օրիորդի համար:

Տ. Կէթէ. (Յուսահատութիւնից կոտրուած դիմում է նեկեղալով տիկին Ֆօկերատին, փարարում է նեծլլտալով եւ բորփելով նրա վզով): Մայրէկ—մայրէկ. Ես պիտի փախչեմ—փախչեմ այստեղից—փախչեմ այս տնից—փախչեմ բոլորից:—Այդ չափազանց է, չափազանց... Մայրէկ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Աստուած սիրես, զաւակս—այդ ինչ է—ինչպէս... ո՞վ համարձակուեց քեզ...

Տ. Կէթէ. (Փոխուելով, զայրացած): Ո՛չ, ես այնքան էլ դէն ընկած չեմ որ ինձ դուրս շրաբտեն: Եւ թոյլ չեմ տալ ինձ դուրս շրաբտել: Մայրիկ, ես խոկոյն ճանապարհ եմ ընկում: Նաւով—դէպի Սմերիկա—միայն փախչել, փախչել այստեղից—դէպի Անզիփա—ուր ոչ ոք ինձ չէ ճանաչում, ուր...

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Բայց զաւակս—դէպի Ամերիկա—ողորմած Աստուած: Սակայն ինչ պատահեց քեզ: Դու ուզում ես փախչել քո մարդուց, քո երեխայից. Ֆիլապիկը պէտք է առանց մօր մեծանայ: Այդ անկարելի բան է:

Տ. Կէթէ. Ա՛խ, ինչ բան է «մայր»: Նրա մայրը մի յիմար, կարձամիտ անձնաւորութիւն է: Ինչին է նրան հարկաւոր ինձապէս մի յիմար, սահմանափակ անձնաւորութիւն: Ես այժմ գիտեմ, որքան յիմար և սահմանափակ եմ ես: Նրանք այդ ինձ ասում էին ամեն օր: Նրանք ինձ այնչափ չնչին ողորմելի դարձ-

րին, որ ես այժմ ինքս ինձ զզուելի եմ: Ոչ, ոչ. հեռու այստեղից, հեռու:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Բայց կէթիւէն, ինքդ մտածիր... մարդուցդ ու երեխայիցդ... Աղաջում եմ քեզ ի սէր Աստուածոյ, ի սէր Քրիստոսի:

Տ. Կէթէ. Առհասարակ երբ և իցէ նա պատկանել է ինձ: Սկզբում նա պատկանում էր իր բարեկամներին, այժմ Աննային: Ինձ հետ միայն՝ նա երբէք գոն չէ եղել: Ես անիծում եմ իմ կեանքս: Ես ձանձրացայ այս անիծեալ գոյութիւնից:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Նոյնպէս իրանից դուրս զալով, սաստիկ ոգեւորուելով կարծես յանկարծակի պարզում և նրա մեխում ամեն ինչ: Նրա աշենը յառած եւ փայլուն, նրա այսենը փոփոխակի գունաւում եւ կարմրում են): Տեսնում էք, Տեսնում էք: (Ցոյց է տալիս մատով տարածութեան մէջ): Տեսնում էք այժմ: Տեսնում էք: Ի՞նչ էի ես ասում: Տեսնում էք: Այն տունը, ասացի ես, որտեղից գթասէր Աստուածը հալածուած է, մի գիշերուայ մէջ փլում է: Տեսնում էք: Մի մոլորուէք: Հիմա տեսնում էք: Ի՞նչ էի ես ասում: Նախ աստուածուրաց, ապա չնացող, ապա... կէթիւէն:

Տ. Կէթէ. (Ուժասպառ մաքառելով) Ո՛չ, մայրէկ: Ո՛չ, ոչ, մայրէկ: Ես... Ես...

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Կէթիւէն.—հաւաքիր ուժերդ, գնանք: Մէկը գալիս է: Ե՛կ գնանք: (Կէրէի նետ նեռանում են նեցարանը):

Յոհանննէսը մտնում է պատշկամբից: Տիկին Ֆօկերատը բաց է անում ննջարանի դուռը:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ա՛խ, այդ դու ես, Հաննէս: (Ներս է մտնում, բոլոր ոյժով, աշխատում է նեւել իր չափազանց յուզմունքը: Չեւացնում է քի մի բան փետում է սենեակում): Հաննէս:

ՅՈՆ. Ի՞նչ է, մայրիկ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ոչինչ: (Մինչ Յոհանննէսը հարցական ոայեցնով նայում է նրան): Ի՞նչ ես այդպէս նայում:

ՅՈՆ. Միայն ինձ թուաց, որ կարծես դու... Ես պէտք է ասեմ որ չեմ հաւանում, երբ դուք այդպէս հետևում էք ինձ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Տղաս, տղաս, քեզ համար լաւ է, որ ձմեռ է գալիս: Դու այնպիսի դրութեան մէջ ես... Առաջ դու այդպէս վատ չէիր վերաբերում դէպ ինձ: Ամենից առաջ դու պէտք է հանգստութիւն ունենաս:

ՅՈՆ. Այն, այն. ի հարկէ: Դուք միշտ աւելի լաւ գիտէք քան ես ինքս, թէ ինչն է ինձ համար լաւ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Մանաւանդ որ կէթէն էլ դու բոլորովին չէ կազդուրուել:

ՅՈՆ. Աննան հօ իսկապէս մի մեծ նեղութեւն նրան չը պատճառեց:

Տ. ՖՕԿԵՐՍ. Ինչքան չը լինի: Ես ինքս պարաւ տեղովս ուրախութեամբ ամեն բան կ'անէի, բայց ծերացած ուկոներս երբեմն չեն դիմանում:

ՅՈՆ. Եւ այդ բանը անելու բնաւ կարիք չուրիս, այդ ևս քեզ հարիւր անգամ եմ ասել: Տան մէջ մենք բաւական թուով ծառաներ ունենք:

Տ. ՖՕԿԵՐՍ. Բայց օրիորդը վերջապէս պէտք է հօ դարձեալ իր պարապմունքները սկսի:

ՅՈՆ. Այդ նրա գործն է:

Տ. ՖՕԿԵՐՍ. Ո՛չ, ես բոլորովին չեմ հասկանում: Ամեն բան սահման ունի: Հերիք է: Նա բաւական երկար այստեղ մնաց:

ՅՈՆ. Իսկապէս ինչ ես դու ուզում: Այդ բոլորը ինձ այնպէս տարօրինակ է թուում... ես ուղղակի չեմ հասկանում:

Տ. ՖՕԿԵՐՍ. Դու ուզում ես այդ Մասին յորդորել էլի մնալ և...

ՅՈՆ. Հենց այդպէս եմ անելու: Եւ անպատճառ այդպէս եմ անելու: Անպատճառ... Մի բան ունես զրա գէմ, մայր:

Տ. ՖՕԿԵՐՍ. (Սպառնալից դիմով): Յոհաննէս, Յոհաննէս:

ՅՈՆ. Ո՛չ, մայրիկ: Իսկապէս այնպէս է բանը որ... Աստուած իմ, կարծես ոճիր է կատարուել, ինչ է: Այդ արդէն ոչ միայն...

Տ. ՖՕԿԵՐՍ. (Համոզեցուցիչ, բայց բարեւտուքեամբ): Տղաս: Խելացի եղիր: Լսիր ինձ հանգստութեամբ: Ախր ես քո մայրն եմ: Զէ որ ես քո լաւն եմ յանկանում: Առնասարակ մարդ չի լինի, որ ինձնից աւելի շատ քեզ բարի ցանկայ: Լսիր, ես ի հարկէ գիտեմ, որ դու աղիւ բնաւորութիւն ունես—բայց մենք թոյլ մարդ արարածներ ենք, Հաննէս, և Կէթէն կասկածանքով է նայում—և...

ՅՈՆ. (Ծիծաղելով): Մի նեղանար, մայրիկ, բայց ես չեմ կարող չը ծիծաղել: Իսկապէս ուրիշ բան չէ մնում անել, քան ծիծաղել: Մայր, ախր ուղղակի ծիծաղելի է:

Տ. ՖՕԿԵՐՍ. Ա՛խ, երեխայ, երեխայ: Աւելի ուժեղներն են ընկել այդպիսի թակարդներ: Յաճախ այդ նկատում են այն ժամանակ, երբ արդէն շատ ուշ է:

ՅՈՆ. Ա՛խ, մայր իմ: Եթէ իսկապէս դուք ուզում էք որ ես խելքս չը կորցնեմ—ի ոէր Աստուծոյ այդպիսի խօսակցութիւններով ինձ մի տանջէք: Ինձ մի շփոթէք, ինձ մի յուսահատեցրէք: Մի շնչէք ականջիս բաներ, որ... մի ձգէք այն-

պիսի յարաբերութիւնների մէջ, որոնք ինձնից հեռու են: Թախանձադին խնդրում եմ ձեզնից, պարոններ:

Տ. ՖՕԿԵՐՍ. Դու պէտք է վերջապէս զիտենաս, ինչ ես դու անում, Հաննէս: Ես միայն ասում եմ քեզ զգնչ եղիր:

Տիկ. Ֆօկերատը գնում է ննջարան: Օր. Աննան գալիս է:

ՕՐ. ԱՆՆԱ. (Նկատելով Յոհաննէսին): Պարոն գօկտոր: (Մօսենում է արողին, որի վրայ դրած են երա իրեր եւ վերցնում է անձեւից պատապանող վերակուն, որպէս զի նազնի): Դէհ, այժմ զնանք:

ՅՈՆ. (Վազում է երա մօս եւ օգնում երան հազնուել): Ուշեմն այնուամենայնիւ գնում էք:

ՕՐ. ԱՆՆԱ. (Կոնկում է վերակուն): Ի՞չի մասին որ ասացիք, շուտով ինձ կ'ուղարկէք:

ՅՈՆ. Սյդ ես չեմ մոռանալ: Գիտէք, օրիորդ Աննա, ես մի քիչ աւելի հանգիստ կը լինէի, եթէ դուք թոյլ տայիք մեզ բարեկամական իրաւունքի վրայ հիմնուելով...

ՕՐ. ԱՆՆԱ. Ինձ վիրաւորում էք, պարոն գօկտոր:

ՅՈՆ. Դէ լաւ, այլ ես դրա մասին չեմ խօսիլ: Բայց դուք պիտի ինձ խստանաք—դիմել ամեն մի կարիքի գէպքում: Որ իրաւունք ունենան ուրիշները օդնել... այդ մենք բնաւ չենք ուղենալ:

ՅՈՆ. (Մօսենում է ննջարանի դրան եւ կանչում): Մայր, Կէթէ:

Կէթէն և առ. Ֆօկերատը մտնում են:

ՕՐ. ԱՆՆԱ. (Համբուրում է ս. Ֆօկերատի ձեռը): Անսահման չնորհակալ եմ: (Կէրին եւ Աննան ջերմ համբուրում են): Դու իմ բարի, իմ սիրելի... տես, զրիր հա:

Տ. ՖՕԿԵՐՍ. Բարի ճանապարհ:

Տ. Կէթէ. Լաւ.—բախտաւոր... (Լաց է լինում)... Բախտաւոր ապրես, թնդ... (Հեկեկանից չէ կարողանում շարունակի):

Յոհաննէս տանում է Աննայի պայտասակը, Կէթէն և առ. Ֆօկերատը ճանապարհ են դնում նրանց մինչև պատշկամբը: Այնտեղ նրանք հանդիպում են բրաունին, որ հրամեց է տալիս Բաժանում են: Տ. Ֆօկերատ, Կէթէ և Բրաուն մնում են պատշկամբի վրայ: Կէթէն թաշկինակով է անում: Յետոյ վերադառնում են դրանք սենեակը:

Տ. ՖՕԿԵՐՍ. (Միխրաբելով հանդար լացող Կէրին): Է՞հ,

զաւակս, զաւակս: Մի վշտանար այդպէս: Աննան այդ կը տանի,
նա ջահէլ է:

Տ. Կէթէ. Ինչպէս սրտաշարժ էին նրա աչքերը: Ախ, շատ
վատութիւններ է նա կրել:

Տ. ՖՕԿԵՐՍ. Մէնք բոլորս էլ վարդերի վրայ չմնք քայ-
լում, կէթէ:

Տ. Կէթէ. Ախ, որչափ շատ է վիշտն ու տանջանքն աշ-
խարհիս վրայ: (Գնում է ննջարանը):

Փոքր դադար:

Տ. ՖՕԿԵՐՍ. Բուլիօնին էլ ձեռք չէ տուել: (Վերցնում է
բար դուրս տանելու համար: Կանգնում է բրաունի առաջ): Պա-
ճիշտ եմ ասում... բաւական չարչարանք կրեցի: (Մի բանի բայլ
է անում, բայց յանկարծ վրան բուլութիւն է գալիս եւ սիփուած
է նսել): Հիմա ևս այդ զգում եմ—բոլոր անդամներս ցաւում
են: Կարծես փշրուած լինեմ:

ԲԻԱԼԻՆ. Միթէ մի բան պատահեց, տիկին ֆօկերատ:

Տ. ՖՕԿԵՐՍ. Ես ուղում եմ գոհ լինեմ: Այն, ես չեմ ու-
ղում ոչնչ ասել, միայն թէ դեռ դրանով վերջանայ: Ողորմած
Աստուած մատով մնզ սպառնաց—և ես նրան հասկացայ... Դուք
էլ ասենք նոյնպէս անաստուածի մեկն էք: Այն, այն, բայց հա-
ւատացէք պառաւ, փորձուած կնոջ, պ. Բրառուն, Առանց նրան
հեռու չես գնալ: Շուտ կամ ուշ կը սայթաքը ուես և կ'ընկնես:
(Փոքր դադար): Գնամ տեմնեմ... (Ուզում է վեր կենալ, բայց դեռ
շատ է ուժասպառ): Այսպէս է լինում: Ով զիտէ արդեզք դրամից
մի բան չը պատահի (Ալյանջ է դնում դեպի դրամից դուռ): Այդ
է—Ախ հա: Մեղ մօտ լուացք է լինելու: Աղախինները թոշում
են լուացքը:—Այժմ հանգստութիւն կը տիրի, այժմ կրկին կա-
րկի կը լինի գործով զբաղուել: (Փոքր դադար): Տեսնում էք
ինչպէս Յոհաննէսը... Տեսնում էք ուր է տանում, երբ մարդ
ապաւինում է իր սեփական ոյժերին: Այդ բոլորը մեծահնչիւն
խօսքեր են թէ «ես ունեմ գործի կրօն»: Եւ կրկին ահա երեսում
է թէ ինչ է դուրս գալիս, Ողորմած Աստուածը միայն վշում է
և իսկայս քանդուում են մեր թղթէ տնակները:

ՅՈՒ. Տղերք, նա մնում է:

Տ. ՖՕԿԵՐՍ. (Չը հասկանալով): Ո՞վ է—Հաննէս—մնում:

ՅՈՒ. Նա մնում է էլի մի երկու օր, մայր: Բնականաբար
օրիորդ Աննան:

Տ. ՖՕԿԵՐՍ. (Կարծես կարուածահար եղած): Օրիորդ
Աննան մն... բայց ուր է նա:

ՅՈՒ. Նա իր սենեակում է, մայր: Բայց ես չեմ հասկա-
նում...

Տ. ՖՕԿԵՐՍ. Ուրեմն այդպէս:

ՅՈՒ. Ճնորհ արէք ինդրեմ և անհեթեթ վեռուն բաներ մի
ստեղծէք: Այդ...

Տ. ՖՕԿԵՐՍ. (Վեր է կենում եւ հրամայաբար): Հաննէս:
Լսիր ինձ: (Ազդու): Ես քեզ ասում եմ. այդ կինը այսոնեղ այլ
ևս բան չունի անելու: Այդ կինը անպատճառ պէտք է թողնի
հեռանայ մեր անից: Ես անպայման այդ պահանջում եմ:

ՅՈՒ. Մայր, այս ում տան ենք մենք:

Տ. ՖՕԿԵՐՍ. Օ՛, դու... այդ ես գիտեմ: Այդ ես շատ լաւ
գիտեմ: Այս մի մարդու տուն է, մի մարդու... որ մոռացել է
իր պարտաւորութիւնը, որ... և յետոյ դու ինձ յիշեցնում ես,
որ ես այստեղ... ի հարկէ, ի հարկէ... ես կարող եմ այդ... այդ
անձի համար տեղս բաց անել:

ՅՈՒ. Մայր, դու այնպիսի տօնով ես խօսում օրիորդ Ան-
նայի մասին, որ ես չեմ կարող տանել:

Տ. ՖՕԿԵՐՍ. Խսկ դու այնպիսի տօնով ես խօսում մօրդ:

Կետ որ մեղանչում է չորրորդ պատուիրանի գէմ:

ՅՈՒ. Մայր, ես կ'աշխատեմ ինձ զապել, բայց մի քիչ էլ ի
նկատի ունեցէք իմ հոգեկան դրութիւնը: Թէ ոչ կարող է այս-
պիսի բան պատահել... Դուք կը ստիպէք ինձ անել այնպիսի
բան, որ յետոյ ես անկարող կը լինեմ ուղղել:

Տ. ՖՕԿԵՐՍ. Ո՞վ ինքը իր վրայ ձեռք է բարձրացնում, նա ա-
նիծուած է միշտ և յաւիտեան:

ՅՈՒ. Մի և նոյն է: Ուրեմն... պէտք է կրկնակի զգոյշ
լինէք:

Տ. ՖՕԿԵՐՍ. Ես ձեռներս լուանում եմ: Ես հեռանում
եմ, գնում բոլորովին:

ՅՈՒ. Մայր:

Տ. ՖՕԿԵՐՍ. Ես կամ այդ անձնաւորութիւնը:

ՅՈՒ. Մայր, դու անկարելին ես պահանջում: Ես հազիւ
կարողացայ նրան համոզել մնալ: Հիմա ինչ է, ես պէտք է գնամ
նրա մօտ և... Աւելի շուտ ես ինձ գնդակահար կ'անեմ:

Տ. ՖՕԿԵՐՍ. (Յանկարծակի ննջարանուրեամբ): Լաւ—այն
ժամանակ ինքս կը գնամ նրա մօտ: Ես ուղղակի կը յայտնեմ

նրան իմ կարծիքը... Օ՛, նենգամիտ կօկէտ: Այդ... նա է քեզ գցել իր ցանցը:

ՅՈՀ. (Կորում է նրա նախապարհը): Մայր, դու չես գնալ նրա մօտ: Նա իմ պաշտպանութեան տակ է, և ես կը կարողանամ նրան պաշտպանել կոպիտ վիրաւորանկըներից:—Ում դէմ էլ որ լինի:

ԲԻԱՌԻՆ. Հաննէս, բայց Հմննէս...

Տ. ՅՈԿԵՐՍ. Լաւ, լաւ: Ես արդէն տեսնում եմ—որ այդ շատ հեռու է քեզ տարել: (Հեռանում է դրսի դռնով):

ԲԻԱՌԻՆ. Սակայն Հաննէս, ինչ է քեզ պատահել:

ՅՈՀ. Թողէք ինձ հանգիստ—դուք՝ հոգի աւերողներ:

ԲԻԱՌԻՆ. Խելքի եկ, Հաննէս: Իմ անունս Բրաուն է: Ես մտադրութիւն չունեմ քեզ բարոյական քարոզներ ասել:

ՅՈՀ. Պարոններ, դուք պղծում էք իմ գաղափարներս: Դա հոգեկան բռնութիւն է: Դրանից ես սարսափելի տանջւում եմ:

ԲԻԱՌԻՆ. Հաննէս, այժմ դու չես կարող լոել: Այդ բանը այնպիսի ընթացք ստացաւ որ դու յայտնի չափով ստիպուած ես խօսել: Աշխատիր մի քիչ էլ աւելի սառնարիւն վիճել:

ՅՈՀ. Էլ ինչ էք ուղղում իմանալ: Ինչում էք ինձ մեղացոյցներ բերելու մեր անմեղութեան համար: Այդ չի թոյլ գոյ գամ:

ԲԻԱՌԻՆ. Լսիր ինձ, Հաննէս: Ես իրերի վրայ նայում եմ բացարձակապէս սթափ աչքով:

ՅՈՀ. Թէ ինձնից հարցնես, նայիր ինչպէս քո ցանկութիւնն է: Միայն ոչ մի խօսք քո հայեացքների մասին, որովհետեւ իւհաւասար:

ԲԻԱՌԻՆ. Հաննէս, դու պէսք է համաձայնուես, որ դու կրակի հետ ես խաղում:

ՅՈՀ. Բոլորովին չեմ կարող համաձայնուել: Իմ յարաբերութիւնները դէպի Սննան աղատ է ձեր դատապատճից:

ԲԻԱՌԻՆ. Դու հօ չես ուրանալ որ դու որոշ պարտաւորութիւններ ունես դէպի քո ընտանիքը:

ՅՈՀ. Դու հօ չես ուրանալ որ ես որոշ պարտաւորութիւններ ունեմ և դէպի ինքս ինձ: Տեսնում էք, դուք մի գլուխ մեծ խօսում էիք—և այժմ երբ ես առաջին աղատ քայլն եմ ա-

նում, դուք արդէն վախենում էք, դուք արդէն խօսում էք պարտաւորութիւնների մասին, դուք արդէն...

ԲԻԱՌԻՆ. Ես բնաւ չեմ ուզում այդ ասել: Ի՞նչ բան է պարտաւորութիւն: Դու միայն պէտք է պարզ յայտնես: Այսաւեղ հարցը այն է որ կամ Աննան կամ քո ընտանիքը:

ՅՈՀ. Լսիր, դու կարծես գտուել ես: Ինչո՞ւ դուք բոլոր ուժով աշխատում էք ընդհարումներ առաջացնել, որոնք գոյութիւն չունեն: Բոլորովին արդարացի չեն ձեր ասածները: Ես ընտրութիւն անելու կարիք չունեմ: Այն ինչ ինձ միացնում է Աննայի հետ՝ նոյն չէ, ինչ որ ինձ միացնում է Կէթէի հետ: Մէկը միւսին չօշափում: Վերջապէս, սատանան տանի, ամիր դա բարեկա- մութիւն է, որ հիմնուած է նրա վրայ, որ մենք հոգեպէս իրար նման ենք, որ մենք իրար նման ենք զարգացել: Այդ պատճա- նման ենք, որ մենք իրար այնտեղ ես, ուր մեզ ուրիշները ուղղ մենք հասկանում ենք իրար այնտեղ ես, ուր դուք ինձ այլ ես չեք հասկանում: այլ ես չեն հասկանում, ուր դուք ինձ այլ ես չեք հասկանում: Այն օրից երբ նա այստեղ է, ես ապրում եմ կարծես նորից հածուած: Ես կրկին գտայ զուարթութիւն և յարգանք դէպի ին- ծնուած: Ես կրկին գտայ զուարթութիւն և յարգանք դէպի ին- քը ինձ: Ես զգում եմ ստեղծագործական ոյժ, ես զգում եմ որ քը ինձ: Ես զգում եմ ստեղծագործական ոյժ, ես զգում ան իմ այդ բոլորը կատարուեց նրա չնորհիւ: Ես զգում եմ որ նա իմ զարգացման համար մի պայման է: Իրեն բարեկամուէի է նա ինձ հարկաւոր, հասկանում ես դու: Միթէ չեն կարող տղամարդը և կինը նաև բարեկամներ լինել:

ԲԻԱՌԻՆ. Հաննէս, մի բարկացիր վրաս, իսկապէս դու ոչ մի անգամ զործի վրայ չը նայեցիր սթափ աչքով:

ՅՈՀ. Մարդիկ, դուք չը գիտէք, թէ ինչ էք անում, ա- ՅՈՀ. Մարդիկ, դուք չը գիտէք, թէ մի ողորմելի շարլօնով, որ սում եմ ես ձեզ: Դուք դատում էք մի ողորմելի սիրում էք, ինձ մի ես զցել եմ ոտաներիս տակ: Եթէ դուք ինձ սիրում էք, ինչ է կատար- խանգարէք: Դուք հասկացողութիւն չունեք, թէ ինչ է կատար- խանգարէք: Դուք հասկացողութիւն կան, այժմ, ձեր յարձակումներից ուում իմ մէջ: Որ վասնդներ կան, այժմ, ձեր յարձակումներից յետոյ, ես ինքս էլ գրեթէ հաւատում եմ: Բայց ես ունեմ կամք, ապահովելու ինձ համար այն, ինչ ինձ համար կեանքի պայման ապահովելու անցնելու: Ես կամք ունեմ, այդ դու հաս- է, առանց սահմանը անցնելու: Ես կամք ունեմ, այդ դու հաս- կանում ես:

ԲԻԱՌԻՆ. Այդ քո հին պակասութիւնն է, Հաննէս: Դու ու- զում ես միացնել այնպիսի բաներ, որոնք բնաւ չեն միացնուի: գում ես միացնել այնպիսի բաներ, որոնք բնաւ չեն միացնուի: Իմ կարծիքով միայն մի համարաւորութիւն կայ—զնալ Աննայի հետ, հասկացնել նրան իրերի գրութիւնը և ինդրել նրան հե-

ռանալ այստեղից:

ՅՈՀ. Վերջացրիր: Ինչ ասելու էիր ասացիր: Որ քեզ հա-

մար բոլորովին պարզ մինի անէ այդ կէտը և իզուր խօսքեր չը

կորցնես, դէ իմացիր: (Փայլատակող աչքերով եւ տեսելով իւրա-
խնչիւր խօսք): Ա. յ ն, ինչ դուք ու զում էք, չի պատա-
հի:—Ես այս չեմ, ինչ որ մի քիչ առաջ էի, Բրառն: Ես ունեմ
մի բան ինձ վրայ տարածուած, որ ինձ զեկավարում է: Դուք
և ձեր կարծիքները այլևս ոչ մի ոյժ չունեք ինձ վրայ: Ես ինքս
ինձ գտայ և կը լինեմ ինքս ինձնից կախուած: Ես ինքս՝ հակա-
ռակ ձեղ բոլորիդ: (Ետապ գնում է պարապելու սենեակը):

Բրառնը թօթում է ուսերը,

b.—Ա.

ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ

ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ^{*}

Դ Բ Ա Մ Ա

Գերհարտ Հառապտմանի

Զ Ո Ր Ռ Ո Ր Դ Գ Ո Ր Ռ Ո Ղ Ա Խ Թ Ի Ւ

Ժամանակը՝ ճաշից յետով, չորսից մինչև հինգը, Սեղանի առաջ նստած են Կէթէն և տիկին Ֆօկերատ, Կէթէն զբաղուած է երեխալի շապիկ կարելով, տիկին Ֆօկերատը՝ ձեռագործով, Կէթէն սաստիկ նիհարել է: Անցնում է մի քանի վայրկեան, Յոհաննէսը ներս է մտնում իր պարապմունքի սեւակից, առ դիմարկլ դեռ լիովին չի ծածկել, ամառուայ վերարկուն կիսահաղած, մտաղիր է դուրս դնալու:

ՅՈՀ. ԱՅՆԱՆ ՊՆԱԳ:

8. ՖՕԿԵՐԱԾ. (Բարձր հառաչելով): Հէնց նոր ՊՆԱԳ:

ՅՈՀ. (Մօտենալով Կիրէին համբուռում է Երա ճակատը):

8. ՖՕԿԵՐԱԾ. Այս, այդ յիմար դեղերը, շատ կ'օգնեն ինչ-

ՅՈՀ. Այս մայր, մայր:

8. ՖՕԿԵՐԱԾ. Ես լրում եմ:

ՅՈՀ. Կէթէ, Այս, այս, ես ընդունում եմ: Առհասարակ հիմա

ՅՈՀ. Իսկապէս այսօր դու աւելի լաւ տեսք ունես:

8. Կէթէ. Այս, աւելի լաւ եմ:

ՅՈՀ. Քեզ լաւ պահպանիր: Աղիհօ: Մէնք շուտով կը վերադառնանք:

8. Կէթէ. Հեռու էք ՊՆՈՒՄ:

ՅՈՀ. Ո՞չ, ՊՆՈՒՄ ենք անտառը: Ցանոսութիւն: (Դուրս է գալիս պատշկամբը):

Փոքր դադար: Լսում է երկաթուղու ՊՆՈՒՄ և ապա հեռաւում հնչում է կայարանի ՊՆՈՒՄ:

***) ՏԵՇ ՇՄԱՐՁԱ ՆԵ 3, 4, 5, 6.**

8. ՖՕԿԵՐԱԾ. Լսում է կայարանի ՊՆՈՒՄ:

8. Կէթէ. Քամին է բերում ձայնը, մայրիկ: (Թողնում է գործը եւ մտածուների մէջ ընկնում):

8. ՖՕԿԵՐԱԾ. (Թուուցիկ հայեացք ձգելով): Էլ ինչի մասին սկսեցիր մտածել, Կէթէ-բալիկ:

8. Կէթէ. (Նարունակելով իր կարը): Այս, ամեն բանի մասին:

8. ՖՕԿԵՐԱԾ. Օրինակ ինչ բանի:

8. Կէթէ. Օրինակի համար կան արդեօք մարդիկ, որոնք զգալու բան չունեն:

8. ՖՕԿԵՐԱԾ. Ի հարկէ ոչ, Կէթին:

8. Կէթէ. (Սկեսուրին ցոյց տալով կարուածքը): Կարել ահա այսպէս, շուրջը, մայրիկ: (Վերցնում է տապկի վերեւի եւ ներեւի ծայրերից եւ հաւում): Ես կարծում եմ երկայնութիւնը բաւական է:

8. ՖՕԿԵՐԱԾ. Այս, շատ կարճ պէտք չէ: Աւելի լաւ է մի քիչ երկայն: Երեխաները շուտ են մեծանում:

Երկուսն էլ եռանդով աշխատում են: Փոքր դադար:

8. Կէթէ. (Կարելով): Ես երբեմն իմ վատ տրամադրութեամբ Հաննէսին շատ վշտացրել եմ: Նա էլ յաճախ ինձ բաւական վիշտ է պատճառել: Բայց մարդ ինչ կարող է անել իր բնաւորութեան դէմ: ահա դժբախտութիւնը ինչում է: (Կարեն եւ դառնութեամբ): Չափից աւելի վստահ էինք: Ոչ մի բանի վրայ հեգնութեամբ: Այս շապիկը (Հառաչում է):—Այս շապիկը գիտես ինձ ուշք չէինք դարձնում: անկելանցում ապրում էր մի պառաւ աղանձ է յիշեցնում: անկելանցում ապրում էր մի պառաւ աղանձ... նա ինքը իր համար կարել էր շատ առաջուց պատան և խին... նա ինքը իր արկում: Մի անգամ նա ինձ ցոյց տուեց այդ պահում էր իր արկում: Մի անգամ նա ինձ ցոյց տուեց այդ պատանը: Այս ժամանակ ես բոլորովին մելամաղձու դառայ:

8. ՖՕԿԵՐԱԾ. Խելացնոր պառաւ:

Փոքր դադար:

8. Կէթէ. (Կարը շարունակելով): Փոքրիկ Զիդէրը լաւ տղայ է: Երէկ ես նրան կանչեցի այստեղ և ցոյց էի տալիս նըրան պատկերներ: Իսկ նա յանկարծ ինձ հարցնում է. ճիշտ չէ, իսկ շերեփկոթիւկը (միջատ) մօրպօյը Կէթէ, թիթեռը մարդ է, իսկ շերեփկոթիւկը նրա կինը:

8. ՖՕԿԵՐԱԾ. (Բարեհուսութեամբ ժպտալով):

8. Կէթէ. Շատ օյինբազն է: Ապա չօշափում էր կոպերս և հարցնում: Պրանց տակ աչքերը քննում են:

ախր Կէթէն հալուում մաշչուում է: Խսկ եթէ պառկի, այն ժամանակ... այն ժամանակ ես չը գիտեմ, էլ ի՞նչ կը լինի: Հիմա էլ ստիպուած է շարունակ պառկել շորերով անկողնուում: Հէնց այժմ կրկին նա պառկել է: Ես այլ ես չեմ կարող, չեմ կարող, պարոն Բրառուն, ինձ վրայ վերցնել պատսախանատութիւն: (Սիպուած է ինչել):

ԲՐԱՌՈՒՆ. (Նայելով հեռագրին): Պարոն Ֆօկերատը ժամի վեցի գնացքնդ է գալիս: Հիմա ժամի քանիսն է:

Տ. ՖՕԿԵՐՈՒՏ. Դեռ հնդի էսը չը կայ:

ԲՐԱՌՈՒՆ. (Մի բանի վայրին էլ մտածելուց յետոյ): Այս

Տ. ՖՕԿԵՐՈՒՏ. (Ոնմիտրար շարժում է գլուխը): Ոչինչ:

ԲՐԱՌՈՒՆ. Եւ Աննան հեռանալու մտադրութիւն անդամ չի ցոյց տալիս:

Տ. ՖՕԿԵՐՈՒՏ. Ոչ—ոչ մի անդամ Եւ Յոհաննէսը, կարբաց վերջի վերջոյ նա անուում էր այն, ինչ նրան անուում էին: Խսկ ոչ նայուում է, ոչ էլ լսում: Միայն այդ անձնաւորութիւնն պարոն Բրառուն: Ախ, Աստուած: Ի՞նչ անել: Ամբողջ գիշերներ չը գիտեմ ի՞նչ անել:

Թաղար:

ԲՐԱՌՈՒՆ. Խսկապէս ես էլ չը գիտեմ արդեօք լաւ է որ գրգուփ... Եւ յետոյ... յետոյ նա ուզուում է օրիորդի առաջ ցոյց կերպ ինքը կ'ազտուի կրկին:

Տ. ՖՕԿԵՐՈՒՏ. Ինձ էլ էր այդպէս թւում: Հէնց այդ է կրկին թողի ինձ համոզել: Այդ էր պատճառը որ ես այստեղ նուում: Հիմա չի կարելի դրա մասին ձայն ծպտուն անդամ հաղիմիմ:

ԲՐԱՌՈՒՆ. Տիկին Կէթէն այդ մասին Հանսի հետ ոչինչ չի

Տ. ՖՕԿԵՐՈՒՏ. Խօսել է, մի անդամ—ամբողջ գիշեր զարւ Կէթէն չափազանց համբերով է: Նա գեռ բռնուում է Հանսի

կողմը, երբ ես մի բան եմ ասուում: Նոյն իսկ այդ... այդ կնոջ... այդ արարածին ինչպէս հարկին է չի հասկանուում: Երան երբեմն գեռ պաշտպանուում է:

Փոքր դադար:

ԲՐԱՌՈՒՆ. Արդէն ես ինքս ինձ հարց եմ տալիս—արդեօք լաւ չը լինի որ ես խօսեմ օրիորդ Աննայի հետ:

Տ. ՖՕԿԵՐՈՒՏ. (Արագութեամբ): Այս, գուցէ այդ լաւ լինի:

ԲՐԱՌՈՒՆ. Ես մինչև անդամ ուզուում էի նրան գրել... Բայց ամենից կարևոր այն է, տիկին Ֆօկերատ, որ եթէ պ. Ֆօկերատը իր կողմից խառնուի—այդ կարող է իմ կարծիքով չափազանց փշացնել գործը:

Տ. ՖՕԿԵՐՈՒՏ. Ի հարկէ, ի հարկէ: Բայց աւել ի՞նչ է մնում ինձ անել իմ սրտնեղութեան մէջ: Ախ, եթէ գուք... եթէ գուք իսկապէս յանձն առնէիք օրիորդի հետ խօսել: (Լսում են Աննայի իւնիանենի ձայները): Ախ, Տէր Աստուած: Ես այժմ չեմ կարող նրան տեսնել: (Հեռանում է դրա դռնով):

ԲՐԱՌՈՒՆ. (Յապաղում է, Յետոյ մինչեւ նրանց մտնելը, նոյն պէս հեռանում է դրա դռնով):

ՕՐԻՈՐԴ ԱՆՆԱՆ մտնում է պատշկամբից:

ՕՐ. ԱՆՆԱ. (Վայր է դնում զիխարկը: Խօսում է բաց դռան միջով Յոհաննենի հետ, որ դեռ շարունակում է մեալ դրսում պատշկամբի վրայ): Հետաքրքիր բան կայ, պարոն գոկտօր:

ՅՈՀ. Երեխ մի բան է պատահել: Մի պօլիցիական նաւակը նստեց: (Ներս է մտնում): Երեխ կրկին մի գժրախտութիւն պատհեց:

ՕՐ. ԱՆՆԱ. Մելամաղձային նախազգացնում միայն: ՅՈՀ. Այստեղ յաճախ են պատահուում այդպիսի գէպքեր: Այդ մի շատ վտանգաւոր ջուր է:—Այդ ի՞նչ է ձեր ձեռքին, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. «Կատուի թաթեր», պարոն գոկտօր: Այդ բոյց ես կը վերցնեմ ինձ հետ իրեւ իշտատակ:

ՅՈՀ. Այսինքն երբ որ ճանապարհ ընկնէք այստեղից: Բայց այդ այնքան էլ շուտ չի լինի:

ՕՐ. ԱՆՆԱ. Կարծնում էք: Փոքր դադար, որի ընթացքում երկուսն էլ սենեակում, դանդաղ լետ ու առաջ են անում, ամեն մէկն առանձին:

ՕՐ. ԱՆՆԱ. Ակսել է արդէն շուտ մթնել:

Յուլիս, 1901.

ՅՈՒ. Եւ ցուբու է, հէսց որ արել մայր է մտնում: Ճրագը վառեմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինչպէս կամիք:—Կամ մի քիչ հանգստանանք մթնշողում: (Նստում է):

ՅՈՒ. (Նմանապէս նստում է, Սննայից նեռու, առաջին պատճած արողի վրայ): Մի ժիշտութիւնից յետոյ): Մթնշնդի:—Այդ ժամանակ գալիս են հին յիշողութիւններ:

ՕՐ. ԱՆՆԱ. Հեքիաթներ, այնպէս չէ:

ՅՈՒ. Այս, հեքիաթներ էլ:—Ախ, հրաշալի հեքիաթներ են լինում:

ՕՐ. ԱՆՆԱ. Օ, ի հարկէ:—Եւ գիտէք, սովորաբար ինչպէս են վերջանում լաւագոյնները:—Յետոյ ես հագայ բիւրեղեայ ունաման:—և յետոյ խփեցի մի քարի:—և յետոյ նա «ծնդաց»—և յետոյ նա երկու կտոր եղաւ:

ՅՈՒ. (Կարճ լուստրինից յետոյ): Իսկ այդ միթէ մելամաղձային նախաղացում չէ:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ ես չեմ կարծում: (Վեր է կենում, դանդաղ մօտենում է դաշնամուրի առաջ դրած արողին, նստում է եւ շնչում ձեռների վրայ):

ՅՈՒ. (Նմանապէս վեր է կենում, դանդաղ մի հանի բայլ անում եւ կանգնում Աննայի յետւից): Միայն մի երկու ամանակ խփէք: Պատճառէք ինձ հաճոյք: Եթէ ես միայն մի քառ բոլորովին պարզ հնչիւններ լսեմ, այդ արդէն ինձ կը գուհացնի:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես չը գիտեմ նուագել:

ՅՈՒ. (Մերկ յանդիմանուրեամբ): Ախ, օրիորդ Աննա, —ինչիտեմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց ես ամբողջ վեց տարի է ձեռք չեմ տուել դաշնազարկերին: Առաջին անգամ կրկին այս գարնանից սկսեմբայն:—Այնպիսի տիտուր, անմիխթար երգեր, որոնք լսել եմ

ՅՈՒ. Գուցէ դուք մի այդպիսին կ'երգէիք: Մի այդպիսի տիտուր, անմիխթար երգ...

ՕՐ. ԱՆՆԱ. (Ծիծաղում է): Ահա տեսնում եք, դուք արդէն ինձ ծաղրում եք:

ՅՈՒ. Ինչպէս տեսնում եմ, օրիորդ, դուք չեք ուզում ինձ հաճոյք պատճառել:

Փոքր դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. Այս, ճիշտ է, պ. դոկտոր, ես մի անպիտան, քմահաճ արարած եմ:

ՅՈՒ. Ես այդ չեմ ասում, օրիորդ Աննա:

Փոքր դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. (Բարձրացնում է դաշնամուրի զլուխը: Դնում է մատները դաշնազարկերի վրայ: Խորհում է): Եթէ ես մի ուրախ բան իմանայի...

ՅՈՒ. (Նստում է մի հեռու անկիւնում, զլուխը առաջ ուղղած, ուները իրաւ վրայ գցած, յենուել է ծնկերի վրայ արմունկով եւ ձեռքը դրել ականջին):

ՕՐ. ԱՆՆԱ. (Ձեռները գրկում, խօսում է դանդաղ եւ ընդհատումներով): Իսկապէս մի նշանաւոր ժամանակ ենք մնաք ապահուածում: Ինձ թւում է որ կարծես ինչ որ հեղձուկ, ճնշող մի բան բում: Ինձ թարմ հոսանք, ասենք քանակորդ դարից, ներս է թափամարմ հոսանք, պարունակութիւնը կարծիք գումարում:—Դուք ես նոյնը չեք զգում, պարո՞ն դոկտոր:—Օրինակի համար, Բրաունի նման մարդիկ մեզ վրայ այնպիսի տպաւորութիւն են թողնում, ինչպէս բուերը լոյս ցերեկով:

ՅՈՒ. Զը գիտեմ, օրիորդ: Բրաունի վերաբերմամբ այդ բուլորովին ճիշտ է: Բայց ես դեռ չեմ կարողանում համակուել կենացրովին ճիշտ է: Բայց ես դեռ չեմ գիտեմ...

ՕՐ. ԱՆՆԱ. Ես չեմ խօսում մեր անհատական ժականութեամբ: Ես չեմ լսում մասին: Մեր անձնական փոքրիկ ճակատագերը բոլորովին մի կողմը թողնենք, պարո՞ն դոկտոր:

Դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. (Վեցնում է դաշնամուրի վրայ մի ակիօրս եւ շարունակում է նրան): Յետո՞յ:

ՅՈՒ. (Երբ հնչիւնները մարում են): Յետո՞յ:

ՕՐ. ԱՆՆԱ. Պարո՞ն դոկտոր:

ՅՈՒ. Զը կամնում նուագել:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես կամնում էի ձեզ մի բան ասել—բայց դուք չը պէտք է զայրանաք. դուք պէտք է բոլորովին հանգիստ

և խոհեմ ձեզ պահէք:

ՅՈՒ. Ինչումն է բանը:

ՕՐ. ԱՆՆԱ. Գիտէք, իմ ժամանակը լրացել է: Ես պէտք է ճանապարհուեմ:

ՅՈՀ. (Խոր հառաջում է, վեր և կենում տեղից եւ դանդաղ ժայլում է յետ ու առաջ):

ՕՐ. ԱՆՆԱ. Պարուն Յոհաննէս. մենք սկսում ենք ընկնել թոյլ բնաւորութիւններին յատուկ սխալների մէջ: Մենք պէտք է ուշք դարձնենք աւելի ընդհանուր վշտերի վրայ: Մենք պէտք է սովորենք աւելի հեշտութեամբ տանել մեր անձնականը:

Փոմր դադար:

ՅՈՀ. Ուրեմն դուք վճռել էք դնալ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Մեղմ, բայց վնուղպար): Այս, պարոն Յոհաննէս:

ՅՈՀ. Այսուհետեւ ես տասնապատիկ մենակ եմ ինձ զգալու:

Դադար:

ՅՈՀ. Այս, դոնեա այժմ չը խօսենք այդ մասին:

ՕՐ. ԱՆՆԱ. Պէտք է ձեզ մի բան էլ ասեմ: Ես արդէն իմաց եմ տուել որ շաբաթ կամ կիւրակի օրը տանը կը լինեմ:

ՅՈՀ. Արդէն իմաց էք տուել... Բայց, օրիորդ, ինչու էք այդքան շտապում:

ՕՐ. ԱՆՆԱ. Շատ պատճառներով:

Դադար:

ՅՈՀ. (Սելի արագ եւ յուզուած բայլելով): Միթէ պիտի անիծուած պայմանականութիւններին: Միթէ մարդիկ պարզ յարաբերութիւնների մէջ, որնցից երկու կողմն էլ միայն շահ- Միթէ կորուստ է ծնողների համար, երբ նրանց որդին աւելի խոր է դառնում: Միթէ կորուստ է մի կոկայ համար, երբ նրա մարդը հոգեպէս աճում է և զարգանում:

ՕՐ. ԱՆՆԱ. (Բարութեամբ սասելով): Պարոն դօկտօր, պա- րն դօկտօր, չար ափքեկտ:

ՅՈՀ. (Հանդար): Լաւ, միթէ ես իրաւացի չեմ, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Այս, և ոչ... Դուք դատում էք այլ կերպ, քան ձեր ծնողներն են դատում: Ձեր ծնողները այլ կերպ են դատում, ոչինչ չի կարելի ասել:

ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿԻ

ՅՈՀ. Բայց այդ հո ահելի է—ահոելի է մեզ համար... ոչ պակաս միւսների համար:

Դադար:

ՅՈՀ. Այս, բայց դուք ինքներդ էիք միշտ ասում, որ չը պէտք է թոյլ տալ որ ակնածութիւնը գէպի ուրիշները մեզ վրայ տիրանայ, չը պէտք է մարդ իրան կապուած դարձնի:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց երբ մարդ արդէն կապուած է:

ՅՈՀ. Լաւ, ես կապուած եմ: Աւաղ, բայց դուք... ինչու պէտք է դուք, ուրիշների կողմը բռնէք:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես սիրեցի նրանց:

Դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. Դուք յաճախ ինձ ասել էք որ նախազգում էք տղամարդու և կնոջ մէջ մի նոր, աւելի բարձր յարաբերութեան ձեեր:

ՅՈՀ. (Զերմութեամբ եւ յափտակութեամբ): Այս, այդ ես նախազգում եմ, այդ կը լինի, աւելի ուշ, մի օր: Այս ժամանակ ոչ բռնի առաջին տեղը, այլ մարդկայինը: Այլ անասունը չի ամուսնանալ անասունի հետ, այլ մարդը մար- դու բարեկամութիւն, ահա հիմքը, որի վրայ բարձրացրած կը լինի այդ տեսակ սէրը: Անլուծանելի, հրաշալի, ուղղակի մի հրաշակերտ: Բայց ևս գուշակում եմ նոյն իսկ աւելին: ա- մի հրաշակերտ: Բայց ևս կուշակում եմ նոյն իսկ աւելին... (Ընդհատում է իրան եւ դի- ւելի ևս բարձր, ճոխ, աղատ բան... Ընդհատում է իրան եւ դի- ւելի Աննային):—Եթէ ևս կարողանայի պարզ տեսնել ձեր գէմ- քը, այժմ,—ես ձեզ ժպտալիս կը տեսնէի: Այդպէս չէ:

ՕՐ. ԱՆՆԱ. Պարոն դօկտօր... Ոչ, այս անգամ չը ծիծաղեցի: Բայց ուղիղ ասած—այդպիսի խօսքեր՝ որոնցից մարդ հեշ- տութեամբ հարբում է... սովորաբար իմ մէջ յարուցանում են խոչոր երգիծանք:—Բայց հէնց ընդունենք որ իսկապէս ինչ-որ նոր, բարձր բան կար—մեր յարաբերութիւնների մէջ:

ՅՈՀ. (Վետացած): Դուք երկրացում էք: Պէտք է ես ձեզ թուեմ տարբերութիւնը: Օրինակի համար գտնում էք դուք որ և է այլ բան կէթէի նկատմամբ, քան սրտագին մի սէր: Միթէ կառակը, ևս աւելի թուլացնել է: Ըսդհա- կառակը, նա աւելի խոր ու աւելի լիքն է դառել:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց, ուր է բացի ինձնից մի այլ մարդ, որ ձեզ կարողանար հաւատալ:—Եւ միթէ գրանից տիկին կէթէն պակաս է տանջուելու:—Ես չէի ուղիսալ խօսել մեր մասին:— Դիսուք —բոլորովին ընդհանուր առմասն—մէկը գտաւ յարաբե- րի կատարեալ ձեւ: Զէ որ այդ յարաբե-

բութիւնները առժամանակ դեռ միայն զգացւում են—դա չափազանց քնքոյշ, մատաղ մի բոյս է, որ պէտք է փայփայել ու փայփայել—համաձայն չք ինձ հետ, պարոն դօկտօր:—Թէ այդ փոքրիկ բոյշենք կարող նրան տեսնել մեծացած, նրա պտուղները ուրիշների համար են սահմանուած: Պահպանել ապագայ սերունդների կարող էի մտածել, որ մէկն ու մէկը իր պարտականութիւնը կը համարի այդ անել:

ՅՈՀ. Եւ դրանից դուք ուզում էք հետեցնել, որ մենք պէտք է բաժանուենք:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես չէի ուզում մեր երկուսիս մասին խօսել: Բայց, քանի որ դուք արդէն խօսք բացիք... այն. մենք պէտք է բանում էր... վայրկեաններով... այդ այժմ այլ ևս չեմ ուզում: Ես ճիշտն ասած, կին նպատակը թուաց շատ աննշան, չնչին մեզ համար—շատ սովորական:—Այդ ուզղակի այնպէս է, որ կարծես է և յետոյ ձորում ամեն ինչ այնքան նեղ ու մօտ է գտնում:

Թագար:

ՅՈՀ. Իսկ եթէ ոչ մի գոյութիւն դրանից չի փանդւում:
ՕՐ. ԱՆՆԱ. Այդ անկարելի է:

ՅՈՀ. Բայց եթէ կէթէն այդ ոյժը ունենար: Եթէ նա կարդար բարձրանալ այդ գաղափարների բարձունքը:
ՕՐ. ԱՆՆԱ. Եթէ կէթէն կարողանար—ապրել իմ կողքիս
—այն ժամանակի... այն ժամանակ—ապրել իմ կողքիս հաւատ ընծայել: Իմ մէջ... մեր մէջ կայ մի բան, որ թշնամի է այդ ազնուացրած, երաղական յարաբերութիւններին և որ վերջի վերջոյ, պարոն դօկտօր, մեզ գերազանցում է: Հիմա չք կամ մենում վառել ճրագը:

Տ. ՖՈԿԵՐՍ. (Մտնում է նախասենեակից, նրազը ձեռին: Խօսում է ուղղելով խօսենք դեպի յես, նախասենեակի): Այս-
ոնդ դեռ մուժ է: Նախ և առաջ ես կը վառեմ լամպը: Մի քիչ էլ դեռ մացեք դրսում, պարոն Բրաուն, ես ուզում եմ այնպէս անել, որ...

ՅՈՀ. (Հազում է):

Տ. ՖՈԿԵՐՍ. (Վախեցած): Այդ ով է այստեղ:
ՅՈՀ. Մենք, մայր:
Տ. ՖՈԿԵՐՍ. Դու, Յոհաննէս:

ՅՈՀ. Մենք, օրիորդ Աննան և ես—Այդ ով է դրսում:

Տ. ՖՈԿԵՐՍ. (Բաւական դժգոհ): Է՞է, Հաննէս, Միթէ չէիր կարող ճրագ վառել: Այնքան էլ լաւ չէ... Այդպէս մթութեան մէջ... (Վառում է լամպը: Օրիորդ Աննան եւ Յոհաննէսը իրանց տեղից չեն շարժում):

Տ. ՖՈԿԵՐՍ. Հաննէս:

ՅՈՀ. Ի՞նչ, մայր իմ:

Տ. ՖՈԿԵՐՍ. Զես կարող դալ ինձ հետու ես բան ունեմ քեզ ասելու:

ՅՈՀ. Մայր, միթէ չի կարելի ալատեղ ես:

Տ. ՖՈԿԵՐՍ. Եթէ դու աւելորդ ժամանակ չունիս ինձ համար, ասս ուզղակի:

ՅՈՀ. Ախ, մայր... ի հարկէ ես պատրաստ եմ, գնանք: Ներեցէք, օրիորդ: (Գնում է տիկին Ֆօկերատի նես՝ պարապելու սեակը):

ՕՐ. ԱՆՆԱ. (Վեցնում է մի քանի մեղմ ակիօդներ: Յետոյ երգում է զայռուած ձայնով): «Բանտարկութեան մէջ մինչև մահ ժամանջուած, մեռար դու երիտասարդ, կոռուի մէջ քո ազգի հատական մար վայր գրեցիր քո գլուխը»: (Լուս է: Պարոն Բրաունը ներս է մտնում):

ՕՐ. ԱՆՆԱ. (Երջում է պտտող արոոի վրայ): Բարի երեկոյ, պարոն Բրաուն:

ԲՐԱՈՒՆ. Ես չէի ուզում ձեզ խանդարել: Բարի երեկոյ:

ՕՐԻՈՐԴ:

ՕՐ. ԱՆՆԱ. Դուք այժմ շատ սակաւ էք երկում:

ԲՐԱՈՒՆ. Ախ, միթէ:

ՕՐ. ԱՆՆԱ. Յաճախ է հարց լինում ձեր մասին: Անկասկած ոչ ԲՐԱՈՒՆ. Այդ ով է հարցնում իմ մասին: Անկասկած ոչ

Համար:

ՕՐ. ԱՆՆԱ. Պարոն Յոհաննէսը: Ոչ:—Տիկին կէթէն:
ԲՐԱՈՒՆ. Տեսնում էք:—Իսկն ասած, ես... Ախ, այժմ այդ բոլորը երկրորդական բան է:

Թագար:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինձ թւում է, որ մենք այսօր գտնուում ենք մի այնպիսի տրամադրութեան տակ որ մենք իրար պէտք է պատմէինք մի որ և է ուրախ բան: Այդպիսի մի բան չը գիտէք: Անկդօտ կամ մի...
ԲՐԱՈՒՆ. Ոչ, իսկ եմ ասում, ոչ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես հաւատացած եմ, որ դուք չեք էլ հասկանում թէ ինչ է ծիծաղը:

Թադար:

ԲԲԱՌԻՆ. Ես իսկապէս ևկել եմ, օրիորդ, մի լուրջ հարցի մասին ձեզ հետ խօսելու:

ՕՐ. ԱՆՆԱ. Դժուք—ի՞նձ հետ:

ԲԲԱՌԻՆ. Այս, օրիորդ Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. (Վեր է կենում): Դէ ինդրեմ: Ես լսում եմ: (Սօսենում սեղանին, բաց է անում իմմօրտէլ (գառնադմակ) ծաղիկների փունջը եւ սկսում ջոկջոկիլ ու նորից կապել):

ԲԲԱՌԻՆ. Այն ժամանակ ես գտնւում էի ծանր հոգեկան յուզման մէջ: Ես ալիսարկում եմ այն ժամանակը, երբ մենք միմեանց հետ ծանօթացանք Պարիզում: Իսկապէս այդ դատարկ բաներ էին: Վերջ ի վերջոյ միթէ նոյնը չէ. մարդ նկարում է ունենալով թէ չունենալով գաղափար: Արուեստը շուայլութիւն է—իսկ ներկայումս ծառայել շուայլութեան՝ ամօթալի է թէկուզ ինչ հանգամանքներում էլ վերցնէք: Այն ժամանակ յամենացն գէպս ձեր ծանօթութիւնը ինձ օգնեց դուրս գալ այդ խառնաշփոթ գրութիւնից: Եւ—հէնց այդ էի ուզում զլիսաւորապէս ասել որ ես այն ժամանակ սովորեցի ձեզ յարգել և գնահատել:

ՕՐ. ԱՆՆԱ. (Նարունակելով կարգի բերել ծաղիկները, թերեւակի): Այն ինչ ասում էք այնքան էլ սիրալիր չէ—բայց շարունակէք:

ԲԲԱՌԻՆ. Եթէ այդպիսի խօսքեր ձեզ վիրաւորում են, օրիորդ,—ափսոսում եմ... չը գիտեմ ինչ անեմ, մոքերս շփոթում են:

ՕՐ. ԱՆՆԱ. Շատ ցաւում եմ, պ. Բրաուն:

ԲԲԱՌԻՆ. Ինձ համար տաժանելի է և անախորժ: Պէտք էր թողնել որ հանգամանքները ընթանային իրանց կարգով: Եթէ միայն այդ հանգամանքները սարսափելի ծանր հետեանքներ չունենային: Բայց չի կարելի հօ...

ՕՐ. ԱՆՆԱ. (Կամացուկ երգում է ինքն իր համար, «մանիր, մանիր, աղջիկ»): Կատուի թաթեր:—Ես լսում եմ, պարոն Բրաուն:

ԲԲԱՌԻՆ. Երբ նայում եմ ձեզ վրայ, օրիորդ, իսկապէս ես չեմ կարողանում զապել զզազմունքներս... կարծես դուք բնաւ ձեզ հայիս չեք տալիս... կարծես դուք չեք նկատում հանգամանքների ամրող երկիւղալի լրջութիւնը:

ՕՐ. ԱՆՆԱ. (Երգում է. «Տեսաւ տղան մի վարդ կանգնած»):

ԲԲԱՌԻՆ. Վերջապէս մարդիկ իմդ ունեն: Ինչ արած, օրիորդ: Ես ստիպուած եմ դիմել ձեր խղճի դատաստանին:

ՕՐ. ԱՆՆԱ. (Փոքր լուրիթինց լետոյ, սառն եւ թերեւակի): Գիտէք ինչ ասաց Լուս Տասերորդ պապը խղճի մասին:

ԲԲԱՌԻՆ. Այդ ես չը գիտեմ, և իսկն ասած այս վայկենում այդ ինձ քիչ է հետաքրքում, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Եա ասաց որ խիղճը մի չար գաղան է, որ զիսում է մարդուն իրան՝ իր դէմ:—Բայց ինդրեմ շարունակէք, ինդրեմ: Ես ամրողջապէս ականջ եմ դառնում:

ԲԲԱՌԻՆ. Ես չը գիտեմ, սակայն իսկապէս շատ պարզ բան է: Այդ դուք էլ պէտք է տեսնէք—որ հարցը մի ամբողջ ընթառիչի կեանքի և մահուան մասին է: Ինձ թւում է որ բաւատանքի կամ է մի հայեացք երիտասարդ տիկին Ֆօկերատի վրայ, միայն կամ է մի հայեացք որ այլ ևս ոչ մի կասկած չը մնայ: Ինձ թւում է որ...

ՕՐ. ԱՆՆԱ. (Այժմ լրջօրէն): Ա'խ ահա ինչ: Յետոյ, շարունակէք, շարունակէք:

ԲԲԱՌԻՆ. Այս, և... այն ...և ձեր յարաբերութիւները դէպի Յոհաննէսը...

ՕՐ. ԱՆՆԱ. (Բողոքելով): Պարոն Բրաուն.—Մինչեւ այժմ թողնելով էի, կարծելով որ իմ պարագս է լսել բարեկամիս բարեկամին: Ինչ որ այսուհետև էք դուք խօսելու, խօսելու էք քամու մէջ:

ԲԲԱՌԻՆ. (Կարճ տուարած լուրիթին: Ապա տրզում է, վեցնում գլխարկն ու վերարկուն եւ հեռանում մեսուլ արտայատելով որ արաւ ինչ կարելի եր):

ՕՐ. ԱՆՆԱ. (Հենց որ Բրաունը դուրս է գալիս, փունջը դէն է տայի տարտում, եւ յուզուած մի բանի անզամ յես ու առաջ է տայի լում: Աւելի հանդարտում է եւ խմում է զուր):

Տիկին Ֆօկերատը մտնում է դրաի դռնից:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Վախճիւլով նայում է տուրզը եւ հաւասարութիւնում մենակ են՝ տապալի մօտենում է Աննային): Ես տիանալով որ նրանք մենակ են՝ տապալի մօտենում է Աննային: Ես այնպէս վախճանում եմ Հաննէսի համար. դուք ի հարկէ գիտէք այնպէս վախճանում եմ Հաննէսի համար. դուք ի հարկէ գիտէք թէ ինչ սարսափելի ցաօկոտն է Հաննէսը: Իսկ այժմ իմ սրտիս վրայ մի բան է ճնշում ես այլ ևս չեմ կարող ծածկել, որիորդ Աննա: (Նայում է Աննայի վրայ սրտաւրծ, պաղատող կերպարանելով):

ՕՐ. ԱՆՆԱ. Ես գիտեմ թէ ինչ էք դուք ուզում:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Պարոն Բրաունը խօսել է ձեզ հետ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Ուզում է ասել այս, ձայնը չի հնազանդում նա ուժով զապում է սկսուող լացն ու նեկելանքը):

Տ. ՖՈԿԵԲԱԾ. (Հոգատար ձեւով պտտելով նրա շուրջը): Օրիորդ Աննա, սիրելի օրիորդ, չը պէտք է վճառուել, Օ, Յիսուս Քրիստոս, միայն թէ Հաննէսը չը մտնէր: Ես չը զիտեմ թէ ինչ եմ անում: Օրիորդ, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ովնչ, ոչնչ... արդէն անցաւ Մի անհանգատացէք իմ մասին, տիկին Ֆօկերատ:

Տ. ՖՈԿԵԲԱԾ. Դուք էլ էք իմ մեղքս դալիս: Այլապէս ես պէտք է տմարդ լինէի: Կեանքի մէջ դուք շատ վատութիւններ էք կրել: Սյդ բոլորը խոր կիրապով ցաւեցնում է սիրտս: Բայց Յոհաննէսը այնուամենայնիւ աւելի: մօտ է ինձ համար: Այդ հօ ես չեմ կարող փոխել եւ դուք, օրիորդ, դեռ այնքան ջահէլ էք, այնքան ջահէլ: Զեր հասակում ամեն բան շատ հեշտ է տանում:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինձ շատ ցաւեցնում է որ բանը այդքան հեռու գնաց:

Տ. ՖՈԿԵԲԱԾ. Երբէք ես այսպիսի բան չեմ արած: Ես չեմ կարող յիշել որ ես մէկին հիւրամեծարութիւն ցոյց տուած չը լինեմ: Բայց ես ուրիշ ճանապարհ չը գիտեմ: Այդ եւը վերջինն է մեղ բոլորիս համար:—Այս վայրկեանում ես չեմ ուզում դատել: Ես ուզում եմ ձեզ հետ խօսել ինչպէս մի կին կնոջ հետ—և ինչպէս մայր ուզում եմ ես ձեզ հետ խօսել: (Արտասուրից խեղդուող ձայնով): Իրբէ իմ Յոհաննէսի մայրը ես դիմում եմ ձեզ (Բոնում է Աննայի ձեռքը): Տուէք ինձ իմ Յոհաննէսին: Վերադարձրէք տանջուած մօրը իր զաւակին: (Ընկենում է արոնի վրայ եւ Աննայի ձեռքը արտասուրով բցում):

ՕՐ. ԱՆՆԱ. Սիրելի, սիրելի տիկին Ֆօկերատ: Այդ... խորապէս ինձ ցնուում է:—Բայց միթէ մի բան կարող եմ ձեզ վերադարձնել: Միթէ մի բան ես ձեզնից խլել եմ:

Տ. ՖՈԿԵԲԱԾ. Աւելի լաւ է այդ մի կողմ թողնենք: Ես չեմ ուզում քննել, օրիորդ: Ես չեմ ուզում քննել, թէ ով է մեղաւորը: Ես միայն այսպահս գիտեմ: Իմ որդիս իր կեանքում երբէք վատ հակումներ չէ ունեցել: Ես այնքան վստահ էի նրա նկատմամբ—որ նոյն իսկ այսօր չեմ կարողանում հասկանալ... (Լաց է լինում): Այդ չափից անց ինքնավստահ բան էր, օրիորդ Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինչ էլ և ասէք, տիկին Ֆօկերատ, ես չեմ կարող պաշտպանուել ձեր դէմ:

Տ. ՖՈԿԵԲԱԾ. Ես չէի ուզենալ ձեզ վշտացնել: Երկինք վկայ, ես չէի ուզում ձեզ զառնացնել: Ես ձեր ձեռքում եմ:

Ես միայն կարող եմ ձեզ աղաչել և աղաչել իմ սրտիս սոսկալի ցաւի մէջ: Թողէք Յոհաննէսին պատ—մինչև դեռ ամեն բան կորած չէ—մինչեւ որ Կէթէի սիրտը չէ խորտակուած իսպառ կղճացէք նրան:

ՕՐ. ԱՆՆԱ. Տիկին Ֆօկերատ: Դուք չափազանց ինձ ստորացնում էք... Ես ինձ այնպէս եմ զգում որ կարծես ես ծեծրացնում լինիմ, և... Բայց ոչ—ես ուզում եմ ձեզ միայն պարզ ուած լինիմ: Ես այդ վճռուած բան է որ ես գնում եմ: Եւ եթէ հարցը այն է ասել. վճռուած բան է որ ես գնում եմ: Եւ եթէ հարցը այն է որ...

Տ. ՖՈԿԵԲԱԾ. Հիմա ինչ պէտք է ասէք, օրիորդ: Այս, լեզուս չի շարժում: Բայց որոշ հանգամանքներից ստիպուած... լեզուս չի շարժում: Բայց որոշ հանգամանքներից ստիպուած... Եթէ կարելի է հէնց հարկաւոր է որ այդ կատարուի շուտով... Եթէ կարելի է հէնց այժմ...

ՕՐ. ԱՆՆԱ. (Հաւաքում է իրերը, որ ինը դրել կր):
Տ. ՖՈԿԵԲԱԾ. Ուրիշ ընտրութիւն չունեմ, օրիորդ:

Փոքր դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. (Իրերը ձեռքին, դանիպալ խլուածեով դիմում է դէպի դրսի դռուը: Տիկին Ֆօկերատի առաջ կանգ է առնելու): Դուք դեռ կատաձգեմ:
Դուք դեռ կարող էք մտածել, որ ես կը յետաձգեմ:

Տ. ՖՈԿԵԲԱԾ. Տէր ընդ ձեզ, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Մնաք բարով, տիկին Ֆօկերատ:

Տ. ՖՈԿԵԲԱԾ. Հաննէսին կամքէք ինչ որ մենք խօսեցինք:

ՕՐ. ԱՆՆԱ. Անհանգիստ մի եղէք, տիկին Ֆօկերատ:

Տ. ՖՈԿԵԲԱԾ. Աստուած ձեզ պահպանի, օրիորդ Աննա:

Աննան հեռանում է դրսի դռնով: Տիկին Ֆօկերատը աղատ շոնչ է քաշում և շտապով դիմում է ննջարանը: Պատշկամբի վրայ երեսում է կուպուր կապուր: Ներս է մտնում ձեր Ֆօկերատը շինէլը հազին, թաշշեալ գլխարկով: Նրա լեռներից երկաթուղու կալարանի բեռնակիրը կասպացներով:

Տ. ՖՈԿԵԲԱԾ. (Չափազանց զոհ): Այսպէս—Ոչ չը կայ: Դրէք իրերը ահա այստեղ: Սպասէք: (Որոնում է դրամակալի պօքտմօնէ մէջ): Ահա քո ջանքերի համար:

ԿԱՊՈՅՑ ԿՐԿՆՈՑՍԻՈՐԸ*) Շատ չորհակալ եմ:

Տ. ՖՈԿԵԲԱԾ. Այ մարդ, մի քիչ սպասէք: (Որոնում է վերականգներում): Յիշում եմ ինձ մօտ դեռ կար երկու օրիորդի գրապաններու: Ձիւղեր՝ զրեից... Ահա, (Տալիս է երան մի նակ՝ «Արմաւենու ձիւղեր» զրեից... Ահա, (Տալիս է երան մի նակ՝ «Գրեյլիներ»): Մի բարեպաշտ մարդ է այդ զրել և ձշպիտ բանի գրեյլիներ): Մի բարեպաշտ մարդ է այդ զրել և ձշպիտ բանի գրեյլիներ): Մի բարեպաշտ մարդ է այդ զրել և ձշպիտ բանի գրեյլիներ): (Սեղմում է պատահարներ են, թող երջանկութիւն բերի ձեզ: (Սեղմում է

*) Թեմնակիրը:

«Փորուած բենակիրի ձեռքը. Սա չը զիսէ ինչ ասել եւ հեռանուի է յուռ»):

ՅՈԿԵՐԱԾ. (Հանում է վերարկուն և զիսարկը, նայում է տուշը, ուրախութիւնից գփում է ձեռները, մօտենում է ննջարանի դռան և լսում: Եթբ դրան յետելից լսում է աղմուկ, վազկվագ հեռանում է և բագ կենում վառարանի լետւ):

Տ. Կէթէ. (Մտնում է ննջարանից, տեսնում է կապոցները, վերարկուն եւ զլխարկը): Վահ, Տէր Աստուած, այդ... այդ... հայրեկի իրերն են:

ՅԵԿԵՐԱԾ. (Պատուղ բամու նման դուրս է պրծնում վա-
ռարանի յետեւից, միաժամանակ ծիծաղելով եւ լազով, ամեն ինչ
արտակարգ ցայտուն՝ ձեւով։ Նա գրկում է եւ մի հանի անգամ
համբուրում Կերեկն)։ Դատրիկս, Կէթէ բալիկս (Համբուրում է)։
Ի՞նչպէս էք։ Ի՞նչ էք անում։ Բալորդ էլ առողջ ու զուարթ էք։
(Համբոյր)։ Ո՞չ, դուք չէք կարող երևակայել... (Բաց բողնելով
Կերեկն)։ Դուք չէք կարող ճեղ երևակայել, թէ ինչպէս բախ-
տաւոր էի ես այն օր։ (Ծիծաղով)։ Ի՞նչ է անում արքայազնը,
հա-հա-համա։ Ի՞նչպէս է նորին բարձրութեան քէֆը, հա-համա։ Նո-
րին բարձրութիւն արքայազն Շնուաի, հա-հա-հա-համա։ Ա՞հ,
փառք Աստուծոյ, որ ես վերջապէս այստեղ եմ։ (Մի քիչ
յոգնած)։ Գիտե՞ս—(Հանում է ակնօցները եւ սրբում ապակիները)։
Երկար մենակութիւնը այնքան էլ ախորժելի չէ։—Հա-համա։
Մարդ մենակ իրան լաւ չէ զգում, պէտք է միշտ երկուսով
լինել, հա-հա-հա-համա։—Հապա, հապա—ես յետոյ գիտես նրան
գործ, նեղութիւն մանաւանդ աղքի հետ։ Աղք, հա-հա-համա, այդ
ոսկի է գիւղատնտեսի համար։ Այս նորերումն եկել էր մեզ
մօտ պաստօր Պֆայֆէռ, որ վրգովում էր, թէ ինչու մեր տան
առաջ աղքահորեր ենք պահում։ (Ծիծաղում է)։ Բայց ես նրան
ասացի. սիրելի պատօր, ասայի՛ նրան, այդ էլ մեր ոսկէ հո-
րերն են, հա-հա-հա-համա։ Հապա ուր է իմ պառաւ, իմ թանկա-
զին տանտիկինս—և իմ Հաննէսը։ (Ոււադրութեամբ զննելով
Կերեկն)։ Զը գիտնմ, գուցէ լամպն է այդպէս անում։ Դու
կարծես զեռ ես բայորովին այնպէս չես, ինչպէս պառած. Կէթեկն։

8. ԿԵԹԵ. (Դժուարութեամբ ծածկելով իր յուզմունեք): Ա՞ս,
—հայրիկ, ես ինձ բոլորովին... (Փարարուելով նրա վզով): Ես
այնքան ուրախ եմ որ ոռու եկար...»

ՖՈԿԵՐԱԾ. Ես երիկ քեզ մի քիչ մախառի. ԿՇՇԵՒ:

Տիկին Ֆօկերատ երեսում է դրսի դասն մէջ։

ՖՈԿԵՐԱՏ. (Կրկին ուրախութիւնից իրան կորցնելով): Կռւ-

Հաւ-հաւ-հաւ-հմ: Ահա և նա (Լոելեայն նա եւ իր կինը բնել-
սմ են միմեանց զիրկը. լալիս են եւ ծիծալում):
Տ. Կէթէ. (Չը կառղանալով իրան պահել յուգումից—նե-

Տ. ԳՕԿԵՐԱԾ. (Կարեն յապալասիրյ յ յ յ
ԿԱՄԵԼԻ է:

ՖՈԿԵՐԱՏ. Այցելուն:

§. ՅօԿԵՐԱՏ. Այս, օրինադը:

ՖՈԿԵՐԱԾ. Համ.—ըստ օրինակ:

8. ՖՈԿԵՐԱԾ. Դու հօ ձանաշում սա. օրդու է առաջին առաջարկ առաջարկ է ինձ առ այս գնացել է. Հա, ահ

ԹօԿԵՐԱԾ. Ես կարծում էր, որ այս պատճենը կապոցները։ Սրա մի պատեղ և ուտելեղէններ։ (Զակոնիկելով կապոցները)։ Սրա մի հոգ է։ Չուաններ չեմ բերել այս անգամ։ Դեռ զարհուրանքը կմ յիշում վերջին անգամ պատահածը։ Այստեղ—Հանուէսի համար սեփական պատրաստած պանիք։ Այդ բոլորը պէտք է չուտ տանել մասունք։ Ահա և խոզի ապիստած բուդ։ Գիտես, Մարթինչ քնքոյց բան է, կարծես կարմրախայտ լինի։—Բայց դու ինչ չես ասում։ Առողջ ես դու։

8. ԹօԿԵՐԱԾ. Այս, հայրիկությաց—ես չը դում պատճենական առաջ մի բան է ծանրացած։ Խոկապէս ես չէի ուզում քեզ ասել բայց—ես... դու իմ ամենահաւատաշրիմ կենակիցն ես։ Ես մենակ այլ ևս չեմ կարող բոլորը տանել։ Մեր որդին... մեր օւժնեածուն։ Քիչ մնաց որ...

ՖՈԿԵՐԱ. (Թոշելով տեղից եւ վախեցա).
ՖՈԿԵՐԱ. (Թոշելով տեղից եւ վախեցա).
Ի՞նչո՞ւ ի՞նչո՞ւ ասմ:

ինչ է պատահել մեր Հաննէսին: Ի ոչ ու չ
առաջ գոյն առև մի անհանդստացիր: Աստուծ

8. ԹօԿԵԲԱԾ. Բայց գու և
Եւ ու ամեն ամեն բան բարի վախճան ունեցաւ։ Մըրկ

օգնութեամբ այժմ ասս է այս անդից:

ԴԵ ՎԵՐՅԱԿԱՆ ՅՈՒՆԻՏԱՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՖՈԿԵՐԻ U.S. (Խոր ցնցուած): Մարթա: Եղիշ ՀՀ

զիդ մինել։ Տառապ իւս է, որ գիտեմ թէ որքան հեռու է գնաց

տանուելու:—իմ որդին—օ ուր
տականութիւն և պատիւ:

S. ՖՈԿԵՐԱԾ. ԱՌԱ, այ մարդ, Ի՞նչ է, ու

նես, դու պէտք է նախ ինքդ քննես: Ես հօ չը գիտեմ.
ՖՕԿԵՐԱԾ. (Անց ու դարձ է անում, գունատ, մրմնջալով)
Եղիցի կամք Քո, Եղիցի կամք Քո...

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Կամացուկ լացում է):

ՖՕԿԵՐԱԾ. (Կանգնում է նրա առաջ եւ խուլ ձայնով)
Մարթա, պէտք է մի տեղ մեղք լինի ծածկուած:—Պէտք է խոր
հել:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Մենք այդ լոելեայն թոյլ տուինք: Մեր զա-
ւակները աւելի և աւելի հեռացան Աստուծուց և ուղիղ ճանա-
պարհից:

ՖՕԿԵՐԱԾ. Այո, դու իրաւացի ես: Հէնց այդ է պատճառը:
Հէնց դրա համար ենք մենք այժմ պատժւում: (Բոնում է կնոջ
երկու ձեռքը): Բայց եկ աղօթենք Աստուծուն խոր հնազանդու-
թեամբ—ցերեկ և զիշեր: Եկ աղօթենք Աստուծուն, Մարթա:

Ե.—Ա.

(Աերջը յաջորդ համարում)

ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ

Դ Բ Ա Մ Ա

ԳԵՐԻԱՏ ՀԱՊԱՎՏՄԱՆԻ

Հ Բ Ն Գ Ե Ր Ո Ր Գ Գ Ո Ր Շ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Նոր գէպքերը համարեա անմիջապէս կապում են չորրորդ զործողութեան
մէջ պատահածներին: Սենեակը դասարկէ, վառած լամպը դեռ մոռւ
է սեղանի վրա:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Դրսի դոնից մտնում է հապճեպ եւ լի բար-
կուրեամբ): Մայր: (Բացում է ննջարանի դռւոր): Մայր:
Տ. ՖՕԿԵՐՍ. (Դուրս է գալիս ննջարանից): Ել ինչ պա-
տահեց, տղայ: Մի աղմկիր այդպէս: Ֆիլիպպիկին կը զար-
թեցնես:

ՅՈՀ. Մայր, կ'ուզենայի իմանալ թէ ով քեզ իրաւունք
տուեց—հեռացնել իմ անից հիւրերին:

Տ. ՖՕԿԵՐՍ. Բայց, տղայ... այդ իսկի մաքովս էլ չի ան-
ցել: Ես ոչ ոքի չեմ հեռացրել:

ՅՈՀ. (Բարկացած յետ ու առաջ բայելով): Մայր, դու
ստում ես:

Տ. ՖՕԿԵՐՍ. Եւ դու թոյլ ես տալիս քեզ այդ ասել մօրդ
երեսին, Հաննէս:

ՅՈՀ. Ես պէտք է այդ քեզ ասեմ, որովհետեւ այդ այդպէս
է: Օրիորդ Աննան պատրաստում է զնալ և...

Տ. ՖՕԿԵՐՍ. Նա քեզ ասաց որ ես նրան անից մերժեցի:
ՅՈՀ. Հարկ չը կար որ նա ինձ ասի: Այդ ես ինքս էլ գի-
տեմ:

Տ. ՖՕԿԵՐՍ. Ի՞նչ գիտես, տղաս:

ՅՈՀ. Նա զնում է: Դուք այնքան խօսեցիք, խօսեցիք ո՞ր

վերջապէս հասաք ձեր նողատակին, Բայց ես քեզ ասում եմ. Ես
կը պառկեմ դռան առաջ: Ես կը վերցնեմ ատրճանակը, (վե-
ցնում է զրբերի պահարանից մի տարհանակ):—Ահա, կ'ուղղեմ
այսպէս զլիխոս: Եւ երբ նա զնայ, ես խկոյն կ'արձակեմ, երդ-
ում եմ կեանքովս:

Տ. ՖՕԿԵՐՍ. (Վախեցած եւ զիմեր կորցրած կամենում է
բոնել երա ձեռքից). Հաննէս... Թող, թող այդ ի սէր Աստուծոյ:
ՅՈՀ. Ես քեզ խօսք եմ տալիս:

Տ. ՖՕԿԵՐՍ. (Կանչում է): Հայրիկ, հայրիկ, շուտ արա, եկ:
Հեշտութեամբ կարող է արձակուել և... հայրիկ. Եկ խելքի բեր
տղիդ:

Եկ Ֆօկերատը ներս է մտնում ննջարանից:

ՅՈՀ. Հայր: (Յանկարծ սրափուելով, վայր է զցում ատրճա-
նակը):

ՖՕԿԵՐՍ. Այս... այդ ես եմ—և այդպէս... այդպէս է
վիճակուած ինձ քեզ հաղիպել:

ՅՈՀ. Այս ինչ է նշանակում, մայր:

ՖՕԿԵՐՍ. (Մօտենալով նրան, լուրջ եւ հանդիսաւոր ձեւով
ասում է): Որ դու պէտք է խելքի դաս, որդի—ահա ինչ է այդ
նշանակում:

ՅՈՀ. Ի՞նչը քեզ բերաւ այսուել:

ՖՕԿԵՐՍ. Աստուծոյ կամքը, Աստուծոյ կամքը բերաւ ինձ
քեզ մօտ:

ՅՈՀ. Մայրս քեզ հրաւիրեց:

ՖՕԿԵՐՍ. Այս, Հաննէս:

ՅՈՀ. Ի՞նչո՞ւ:

ՖՕԿԵՐՍ. Որ քեզ իբրի բարեկամ օգնեմ, այու:

ՅՈՀ. Բայց միթէ ես կարօտ եմ օգնութեան:

ՖՕԿԵՐՍ. Այս, Հաննէս, որովհետև դու թոյլ ես: Մի թոյլ
մարդ, ինչպէս մենք ամենքս, այս:

ՅՈՀ. Եւ եթէ ես այժմ թոյլ եմ, ինչով ես ուզում ինձ
օգնել:

ՖՕԿԵՐՍ. (Մօտենում է նրան, բոնում երա ձեռները): Ե՞ս
պէտք է քեզ ասեմ թէ ինչքան ենք բոլորս քեզ սիրում, այս:

Եւ ապա պէտք է քեզ նաև ասեմ, որ Աստուծած գթառատ է
գէպի մեղաւորը, այս, գէպի այն մեղաւորը, որ կը զղջայ:

ՅՈՀ. Ուրեմն ես մեղաւոր եմ:

ՖՕԿԵՐՍ. (Առաջուայ բնեօւըքեամբ): Մեծ մեղաւոր, այս—
Աստուծոյ առաջ:

ՅՈՀ. Բայց ինչ մեղք եմ ես գործել:

ՖՈԿԵՐԱԾ. Ով ցանկութեամբ է նայում, կնոջ, ասաց Քրիստոս, այս, իսկ դու աւելին ես արել, այս, այս:

ՅՈՀ. (Նարքում է անում, կարծես ուզում է ականջները փակել): Հայր...

ՖՈԿԵՐԱԾ. Մի փակուիր, Հաննէս: Տուր ինձ ձեռքդ, ինչպէս մեղաւորը մեղաւորին, և ընդունիր ինձ: Ընդունիր ինձ իբրև մի մարտակցի:

ՅՈՀ. Հայր, ես պէտք է քեզ ասեմ որ ես այլ գետնի վրայ եմ կանգնած քան դու:

ՖՈԿԵՐԱԾ. Դու կանգնած ես մի զառիվայր գետնի վրայ:

ՅՈՀ. Ի՞նչպէս կարող ես դու այդ ասել, հայր: Դու հօ չես ճանաչում իմ ճանապարհը:

ՖՈԿԵՐԱԾ. Օ, ի հարկէ. այդ մի լայն ճանապարհ էր ի կորուստ: Ես լուելեայն ճետնում էի քեզ: Այն, և բացի ինձնից նաև աւելի մի Բարձր իշկ—Աստուած: Եւ որովհետև ես այդ գիտէի, ուստի ձգձգում էի կատարել իմ պարագը, այս: Բայց այսօր ես զալիս եմ քեզ մօտ Նրա անունից և ասում քեզ. Յետ կաց. դու կանգնած ես անդունդի առաջ:

ՅՈՀ. Ես պէտք է քեզ ասեմ, հայր... քո խօսքերը բարի են և անկեղծ մոտածուած, բայց—նրանք իմ մէջ արձագանք չեն գտնում: Քո անդունդներից ես չեմ վախենում. բաց կան այլ անդունդներ, և որ դուք ինձ չը գլորէք այստեղ—ահա դրանից դուք զգուշացէք:

ՖՈԿԵՐԱԾ. Ոչ, Հաննէս..., ոչ...

ՅՈՀ. Ուզիդ չէ թէ ով կը նայի կնոջ վրայ ցանկութեամբ նա լուծում է ամուսնութիւնը: Ես մաքառեցի և մաքառեցի...

ՖՈԿԵՐԱԾ. Ոչ, Հաննէս: Ոչ: Ես յաճախ եմ քեզ խորհուրդներ տուել, և նրանք միշտ քեզ օգուտ են տուել: Այսօր ես քեզ ասում եմ, քեզ մի խաբիր, վերջ դիր: Մտածիր քո կնոջ մասին, քո ֆիլիպպիկի մասին, և նմանապէս մի քիչ մտածիր և քո ծեր ծնողների մասին: Մի բազմացնիր...

ՅՈՀ. Բայց չը պէտք է ինքու իմ մասին էլ մտածեմ, հայր:

ՖՈԿԵՐԱԾ. Դու միայն վճռիր և կը տեսնես թէ ինչպէս ազատ և թեթև կը զգաս քեզ:

ՅՈՀ. Իսկ եթէ այդպէս չը լինի:

ՖՈԿԵՐԱԾ. Ապակնիր ինձ և այդպէս կը լինի:

ՅՈՀ. Իսկ եթէ... Իսկ օրիորդ Աննան:

ՖՈԿԵՐԱԾ. Աշխարհիս զաւակները, Հաննէս, հեշտ են մօռանում...

ՅՈՀ. Իսկ եթէ նա հեշտ չը մոռանայ:

ՖՈԿԵՐԱԾ. Այն ժամանակ նշանակում է Աստուծոյ կամքն էր այդպէս:

ՅՈՀ. Դէ, հայր... ես այլ հայեացք ունեմ: Մենք իրար չենք հասկանում: Եւ ի հարկէ այդ ինդիրներում երբէք իրար չենք հասկանայ:

ՖՈԿԵՐԱԾ. (Դեռ լս կարելոյն բարեհոգութեամբ): Այսուել... այստեղ խօսքը բոլորովին հասկանալու մասին չէ: Դու սիալ ես ըմբռնում հանգամանքը, այս, այս: Հանգամանքը բոլորովին այլ է: Այդ դու էլ առաջ շատ լաւ գիտէիր: Բանը այն չէ... բանը իմ հասկանալ չը հասկանալը չէ:

ՅՈՀ. Մի նեղանար, հայր, բայց ինչում է բանը:

ՖՈԿԵՐԱԾ. Հնագանդութեան մէջ է, ես կարծում եմ, այս:

ՅՈՀ. Այսինքն դու կարծում ես որ ես պէտք է անեմ ամեն բան, ինչ որ դու ուզում ես, թէկուզ այդ ինձ անարդար թուի անգամ:

ՖՈԿԵՐԱԾ. Ես քեզ անարդար բան խորհուրդ չեմ առաջ: Շատ ցաւում եմ, որ ստիպուած եմ քեզ ասել... ստիպուած եմ քեզ մի քանի բան յիշեցնել, այս: Մենք քեզ մեծացրինք ոչ առանց հոգատարութեան և անկուն գիշերների: Մենք քեզ իննամեցինք և ոչ մի զոհաբերութիւն չը իննայցինք, երբ դու հիւանդ էիր, իսկ դու քո տղայութեանդ ժամանակ յաճախ ես հիւանդացել, Հաննէս, այս: Մենք ամեն ինչ արել ենք յօժարութեամբ և ուրախութեամբ:

ՅՈՀ. Այս, հայր, և այդ բոլորի համար ես շատ շնորհակալ եմ ձեզից:

ՖՈԿԵՐԱԾ. Այդ միայն խօսքեր են. գործ, գործ եմ ես ուզում տեսնել: Բարեպաշտ, մաքուր, հնագանդ մարդ եղիր, այս, ահա որն է խոկական շնորհակալութիւնը:

ՅՈՀ. Ուրեմն քո կարծիքով ես ապերախտ եմ. ես արժանի չեմ ձեր ջանքերին:

ՖՈԿԵՐԱԾ. Դու գեռ յիշում ես, ինչպէս էիր երեխայ ժամանակդ միշտ աղօթում—մահճակալում, այս—երեկոյ և առաւօտ:

ՅՈՀ. Ինչի մասին, հայր:

ՖՈԿԵՐԱԾ. Ախ, Տէր Աստուած, աղօթում էիր դու, աղաչում եմ քեզ, օգնիր ինձ լինել բարեպաշտ մանուկ: Իսկ եթէ ես չը դառնամ...

ՅՈՀ. Աւելի լաւ է ինձ վերցրու երկրից: Ուրեմն դու կարծում ես որ աւելի լաւ կը լինէր, եթէ դուք ինձ թաղէիք դեռ այն ժամանակ:

ՖՈԿԵԲԱԾ. Եթէ դու շարունակում ես ընթանալ զառիվայր ուղիով... այո... եթէ քո սիրտը մնում է յամառ...

ՅՈՀ. Այո, ես էլ եմ կարծում որ այդ աւելի լաւ կը լինէր:

Փոքր դադար:

ՖՈԿԵԲԱԾ. Ուշքի եկ, որդեակ, յիշիր նրանց, Հաննէս, այն, նրանց, որոնք քեզ յարդորել են. յիշիր պաստօր Պֆէյֆէրին, քո բարեպաշտ ուսուցչին և խոստովանահօրը: Յիշիր...

ՅՈՀ. (Դուրս գալով իրանից): Հայր. թող ինձ հանդիսատիմ այդ ուսուցիչներով, եթէ չես ուզում որ ծիծաղեմ: Մի յիշեցնիր ինձ այդ ոչխարապլուխների հասարակութիւնը, որ դաստիարակելու տեղ հանել է ծուծը իմ ոսկորներից:

Տ. ՖՈԿԵԲԱԾ. Օ՛, երկնային Հայր:

ՖՈԿԵԲԱԾ. Լոհիր, Մարթա, լոիր: (Յոհաննեսին): Քո ուսուցիչները և մենք այդ վերաբերմունքին չենք արժանի:

ՅՈՀ. (Բղաւելով): Դուք ինձ սպանեցիք:

ՖՈԿԵԲԱԾ. Դու յանցանք ես գործում, Հաննէս:

ՅՈՀ. Ես գիտեմ թէ ինչ եմ ասում. դուք ինձ սպանեցիք:

ՖՈԿԵԲԱԾ. Սյդակէս ես վարձատրում մեր սէրը:

ՅՈՀ. Զեր սէրը ինձ սպանեց:

ՖՈԿԵԲԱԾ. Ես այլ ես քեզ չեմ հասկանում:

ՅՈՀ. Այդ ես ինքս էլ գիտեմ, հայր: Դուք երբեք ինձ չեք հասկացէլ և երբէք էլ չեք հասկանալ:

Փոքր դադար:

ՖՈԿԵԲԱԾ. Լաւ, լաւ, Հաննէս: Ես վերջացրի: Ես չը գիտէի որ բանը այդքան հեռու է գնացել: Ես յոյս ունէի, բայց իմ միջոցները սպառուեցան: Այստեղ միայն Աստուած կարող է դեռ օդնել: Գնանք, իմ պառաւ Մարթա, մենք այժմ աւելի բան չունենք այստեղ վիճակու, այո: Մենք պէտք է մի այլ տեղ թագնուենք և սպասենք. մինչև որ ողորմած Աստուած մնդ կը կանչէ: (Նորից դիմում է Յոհաննեսին): Բայց, Հաննէս. մի բան ես պէտք է քեզ ասեմ. մի թաթախիր ձեռներդ արեան մէջ: Լսում ես: Այդ մեղքն էլ մի վերցրու քեզ վրայ: — Սրդեօք լաւ մտածել ես և Կէթէի մասին: Դու գիտես որ մենք վախենում ենք որ նա խելագարուի: Նայել ես ուշադրութեամբ այդ խեղճ, սիրելի էակի վրայ, չէ: Արդեօք բաւականաչափ պարզ է քեզ համար թէ ինչ էք դուք արել նրա հետ: Թող մայրդ միայն պատմի թէ ինչպէս է խեղճ Կէթէն գիշերներով լալիս և հեկեկում քո պատկերի վրայ: Դէ միանդամ ես կրկնում եմ, Հան-

նէս, մի թաթախիր ձեռներդ արեան մէջ: Եւ այժմ մենք վերջացրինք, այն: Եկ գնանք, Մարթա, գնանք:

ՅՈՀ. (Կարենատեւ մաքառումից յետոյ): Հայր, մայր:

Տ. ՖՈԿԵԲԱԾ. } (Յետ են նայում, Յոհաննեսը ընկնում է ՖՈԿԵԲԱԾ. } նրանց զիրկը): Յոհաննէս:

Դադար:

ՅՈՀ. (Ընկնուած ձայնով): Հիմա ասէք, ի՞նչ պէտք է ես անեմ:

ՖՈԿԵԲԱԾ. Մի պահիր օրիորդին: Թող նա գնայ, Հաննէս:

ՅՈՀ. Խոստանում եմ քեզ այդ: (Ուժապառ եղած, սիրաւած է նաև լ արոռի վրայ):

Տիկին Ֆոկերատը ուրախացած շասպում է դէպի ննջարանը:

ՖՈԿԵԲԱԾ. (Նոյսում է Յոհաննեսին եւ համբուրում նրա նակարը): Իսկ այժմ—թող Աստուած քեզ ոյժ տայ: (Գնում է ննջարանի):

Յոհաննէսը մի քանի վայրկեան նստում է հանդարտ. ապա ցնցում է ամբողջապէս, դառնում է անհանգիստ, վեր է կենում տեղից, պատուհանից դիտում աղջամողջը, յետոյ բաց է անում դրսի դուռը:

ՅՈՀ. Ո՞վ է այդտեղ:

ՕԲ. ԱՆՆԱ. Այդ ես եմ, պարոն Յոհաննէս: (Ներս է մտնում):

ՅՈՀ. Դուք ուզում էք գնալ առանց մնաք բարեաւ ասելու: (Յետ ու առաջ բայլելով):

ՕԲ. ԱՆՆԱ. Իսկապէս մի բոպէ ես տատանուում էի: Բայց այժմ այդպէս լաւ է:

ՅՈՀ. Ես սարսափելի զրութեան մէջ եմ: Իմ հայրը այստեղ է: Ես նրան երբէք այդպէս չեմ տեսել: Միշտ ուրախ ու պարզ մարդ... Ես չեմ կարողանում բաժանուել այդ տպաւորութիւնից: Իսկ միւս կողմից պէտք է տեսնեմ, թէ ինչպէս դուք մեղնից հեռանում էք, օրիորդ ե...

ՕԲ. ԱՆՆԱ. Լոհիր, պարոն դօկտօր, չէ որ ես այսպէս թէ այնպէս պէտք է հեռանայի:

ՅՈՀ. Բայց դուք չը պէտք է գնաք. դուք չեք կարող գնալ: Գոնեա այժմ, այժմ այս վայրկեանում: (Նստում է, նակար յենում ձեռներին, խոր հատաշ է դուրս զախի նրա կրծքից):

ՕԲ. ԱՆՆԱ. (Յուզուած, նազիւ լսելի ձայնով): Պարոն դօկտօր: (Կամաց դնում է ձեռներին):

ՅՈՀ. (Ուղղուած է տեղում, հատաշելով): Ախ, օրիորդ Աննա:

ՕԲ. ԱՆՆԱ. Թիշէք այն խօսքերը, որ մենք մի քանի ժամ

առաջ ասացինք:—Ստիպումը պէտք է առաքինութիւն դարձնենք:

ՅՈՆ. (Վեր և կենում տեղից եւ յուզուած յետ ու առաջ բայլում): Ես չը գիտեմ ինչի մասին ենք մենք խօսացել: Գլուխս դադարկ է և ամայի և տանջուած: Ես չը գիտեմ անգամ՝ թէ ինչ եմ խօսել հօրս հետ: Ես ոչինչ չը գիտեմ: Դատարկ է և ամայի իմ գլուխս:

ՕՐ. ԱՆՆԱ. Ա. իւ, շատ լաւ կը լինէր, պարոն Յոհաննէս, եթէ մեր վերջին բոպէները լինէին պայծառ բոպէներ:

ՅՈՆ. (Կարնասեւ ներբին կոռուից յետոյ): Օգնեցէք ինձ, օրիորդ Աննա: Այլ ես ոչինչ վեհութիւն, ոչինչ հապարտութիւն չը մնաց իմ մէջ: Ես այլ մարդ դառայ: Հէնց այժմ, այս վայրիկեանում ես արդէն այս չեմ, ինչ որ էի, մինչև ձեր մեղ մօտ դալը: Ես միայն ունեմ զգուանք դէպի ինձ և հակակրթութիւն դէպի կեանքը: Ինձ համար ամեն ինչ նուաստացաւ, պղծուեց, աղտոտուեց, արատաւորուեց, ցեխի մէջ տրորուեց: Սակայն ես զգում եմ, որ ես մի բան էի, ձեր չնորհիւ, ձեր ներկայութեան, ձեր խօսքերի չնորհիւ—և եթէ ես կրկին չեմ կարող նոյնը լինել, այն ժամանակ... այն ժամանակ ինչիս է պէտք միւս բոլորը: Այն ժամանակ ես հաշիւը կը փակեմ և... վերջ կը դնեմ:

ՅԵՒ ու առաջ է գնում և ապա կանգ առնում Աննաի առաջ: Տուէք ինձ մի նեցուկ: Տուէք ինձ մի բան, որի վրայ ես կարողանայի կանգնել: Մի նեցուկ: Ես ջախջախուած եմ ամբողջապէս: Մի յենարան: Ամեն ինչ իմ մէջ, օրիորդ, ջախջախուեց իսպառ:

ՕՐ. Աննա. Պարոն գօկաօր: Ինձ մեծ վիշտ է պատճառում ձեզ այդպէս տեսնելը: Ես չը գիտեմ ինչպէս ձեզ նեցուկ լինել: Բայց մի բան պէտք է մտարերէք: Մենք այս առաջուց գիտէինք. մի օր առաջ, մի օր ուշ մենք պէտք է ամեն բանի համար պատրաստ լինէինք, պարոն գօկաօր:

ՅՈՆ. (Կանգնում է լուռ եւ մտածողութեան մեջ):

ՕՐ. ԱՆՆԱ. Մտարերէցիք հիմա: Ուզում էք եկէք փորձենք զրա մասին: Դուք արդէն գիտէք թէ ինչ մաս ին: — Ուզում էք մենք մեղ համար մի կանոն դնենք—և նրա համեմատ փարուենք: Միայն մենք երկուսս,—մեր ամբողջ կեանքի ընթացքում, եթէ մենք անզամ երբէք իրար նորից չը հանդիւպէնք—վարուենք մի յատուկ կանոնով: Ուզում էք: Դրանից զատ ոչինչ չը կայ, որ կարող լինի մեղ միացնել: Մենք չը պէտք է մեղ խարենք այդ մասին: Ամեն ուրիշ բան մեղ բաժանում է: Այդպէս չանենք: Համաձայն էք:

ՅՈՆ. Այս, ես զգում եմ որ այդ ինձ կարող էր պահել:

Ես կարող էի նոյն իսկ աշխատել առանց յոյսի թէ նպատակին կը համնեմ: Բայց ով կը երաշխաւորի: Ո՞րտեղից վերջնեմ ես հաւատ: Ո՞վ է ասում ինձ, որ ես ինձ չեմ տանջում ոչնչութեան համար:

ՕՐ. ԱՆՆԱ. Եթէ մենք կ ամեն ու մենք, պարոն գօկաօր, ինչի են մեղ հարկաւոր հաւատ և երաշխաւորութիւն:

ՅՈՆ. Բայց եթէ իմ կամքը ամուր չէ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Քոլորովին ցած ձայնով): Եթէ իմ կամքը թուլանայ, ես կը սկսեմ մտածել նրա մասին, որ նոյն կանոնի տակ է կանգնած: Եւ ես հաստատ գիտեմ որ այդ կ'ամրացնի: — Ես կը յիշեմ ձեր մասին, պարոն Յոհաննէս:

ՅՈՆ. Օրիորդ Աննա.... Լաւ, ես կ ամեն ու մենք, ես կ ամեն ու մենք: — Նախազգացումը մի նոր, աղատ գրութեան, մի հեռաւոր այսպէս ասած երանելի երջանկութեան, որ մեր մէջ կար—այդ մենք կը պահպանենք: Են ինչ որ մենք մի անգամ զգացինք, այն հարաւորութիւնը, որ մենք զգացինք, այսուհետեւ չը պէտք է կորչի գնայ: Մի և նոյն է ունի նա ապագայ թէ ոչ, նա պէտք է մնայ: Այդ բոցը պէտք է շարունակ փառուի իմ մէջ և երբ նա մարի, կը մարի և իմ կեանքը: (Երկուսն էլ լուռ ու ցնցուած): Շնորհակալ եմ ձեզնից, օրիորդ Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Մնաք բարով, Յոհաննէս:

ՅՈՆ. Ուր էք հիմա գնում:

ՕՐ. ԱՆՆԱ. Երեկ հիւսիս—երեկ հարաւ:

ՅՈՆ. Զէք ուզում ինձ ասել թէ ուր:

ՕՐ. ԱՆՆԱ.—Բայց աւելի լաւ չէր լինի որ դուք ինձ չը հարցնէիք զրա մասին:

ՅՈՆ. Բայց միթէ մենք չենք կարող... գէթ մի երկու խօսք... գէթ կարճ աեղեկութիւններ գրել... թէ ինչ ենք անում, ուր ենք գտնուում...

ՕՐ. ԱՆՆԱ. (Նարժում է գլուխը, դառն ժայռակուլ): Իրաւունք ունենք: Միթէ այդ ամենամեծ վտանգը չի լինի, թէ մենք ինքներս մեղ համար խորտակում ենք պատրաստում: Իսկ երբ մենք խորտակունք—այն ժամանակ մենք նաև խարսուած կը լինենք:

ՅՈՆ. Լաւ, լաւ, — ես կը կրեմ այդ բեռք: Ես նրան կը տանեմ հաստատուն կերպով—թէ կուղ նա ինձ ճմլի: (Բոնելով Աննայի ձեռքի): — Երջանիկ ապրէք:

ՕՐ. ԱՆՆԱ. (Իրան յաղբեկով, մերբ սպրենելով, մերբ կարմրելով, շփորուած եւ խոր յուզուած): Յոհաննէս. մի բան ես... այս մատանին... հանուած է մի մեռած կնոջ մատից, մի կնոջ...

որ իր... մարդուն... իր մարդուն հետևեց մինչև Սիբիր: Հաւատարմութեամբ նրա հետ մինչև վերջը տարաւ բոլոր նեղութիւնները, (Կիսակատակ): Մեր գէպում բոլորովին հակառակն է:

ՅՈՆ. Օրիորդ Աննա: (Մօսենում է նրա ձեռքի իր ցրուենեցին եւ այդպէս պիտի պահում):

ՕՐ. ԱՆՆԱ. Ես երեք այլ զարդ չեմ կրել: Երբ մարդ թուլանում է՝ պէտք է յիշի այն պատմութիւնը, որ կապուած է այդ մատանու հետ: Եւ երբ դուք դրան նայէք—թուլութեան բովիներում—այն ժամանակ... մտաբերէք նաև... նրա մասին... որ ձեզնից հեռու—մենակ ինչպէս դուք... մաքառում է նոյն խորհրդաւոր կուռում:—Մնաք բարով:

ՅՈՆ. (Զիներ կորցնելով): Երբ բէք, երբ բէք մենք իրար չե պէտք է կրկին տեսնենք:

ՕՐ. ԱՆՆԱ. Եթէ մենք կրկին տեսնուենք, մենք կորած ենք:

ՅՈՆ. Բայց եթէ միայն ես այս կարողանամ տանել:

ՕՐ. ԱՆՆԱ. Այն ինչ որ մեզ չի յաղթում, այն մեզ աւելի ուժեղ է դարձնում: (Նա ուզում է զնալ):

ՅՈՆ. ԱՆՆԱ, քոյր:

ՕՐ. ԱՆՆԱ. (Արտասուալից): Եղբայր Յոհաննէս:

ՅՈՆ. Միթէ չի կարող եղբայրը համբուրել իր քրոջը—յափառեան բաժանուելուց առաջ:

ՕՐ. ԱՆՆԱ. Հաննէս, ոչ:

ՅՈՆ. Այն, Աննա, այո, այո: (Նա գրկում է նրան եւ երկուի ցրուենեցիր միանում են միակ, երկար բոցավառ համբայրով, ապա ազատում է Աննան եւ անհետանում պատկամ-բում):

Յոհաննէսը մի վայրկեան կանգնած է շշմածի պէս, ապա սկսում է մեծ քայլերով անց ու զարձ անել, ձեռքը քսում է մազերին, հառաչում է աւելի ուժգին, մնում է կանգնած, ուշաղրութեամբ ականջ է զնում: Յանկարծ հեռուից լսում է աղմուկ մօտեցող զնացքի, որ սրբնիաց անցնում է անտառի միջով: Յոհաննէսը բաց է անում պատշկամբի դուռը և ականջ զնում: Ազմուկը աւելի սաստկանում է, լեռոյ դադարում է: Որոշ լսում է կալարանի զանգը: Լսում է երկրորդ և ապա երրորդ զանգը Խուզոցը փշում է: Յոհաննէսը դիմում է դէպի իր սենեակը, բաց ճանապարհին ընկնում է աթոռի վրայ: Նրա մարմինը ցնցում է լացից և հեկեկալուց: Պատշկամբի վրայ ընկնում է լուսնի դժգոհն լուսը:—Հարեան սենեակում լսում է ազմուկ: Բարձր խօսում են, Յոհաննէսը ցատկում է տեղից, ուղղում է դէպի իր սենեակը, կէս ճանապարհին մնում է կանգնած, մի վայրկեան մտածում է և սրբնիաց դուրս թուզում պատշկամբով: Ծեր Ֆօկերատը ներս է մտնում ննջարանից, տիկին Ֆօկերատը հետեւում է նրան: Երկուսն էլ զնում են դէպի դրսի դուռը:

ՅՈԿԵՐԱ. (Մնաւմ է կանգնած): Հաննէս:—Ինձ այնպէս թուաց, որ այստեղ մարդ կայ:

Տ. ՅՈԿԵՐԱ. (Արդեն դրսի դռան մօս): Մէկը բարձրացաւ սանդուղքներով:

ՅՈԿԵՐԱ. Այն, այո, աղան հանգստանում է: Նրան չը պէտք է խանգարենք: Գուցէ աւելի լաւ կը լինէր ուղարկե նրա մօտ Բրատինին:

Տ. ՅՈԿԵՐԱ. Ի հարկէ, հայրիկ: Ես կ'ուղարկեմ որ նրան կանչեն:—Կամ գուցէ աւելի լաւ կը լինէր, հայրիկ, որ ես բարձրանայի Յոհաննէսի մօտ:

ՅՈԿԵՐԱ. (Մօսենում է պատշկամբի դռան): Ոչ. Մարթա, աւելի լաւ է չը դնաս: (Բաց է անում դռուր եւ ականջ դնում): Հիանալի լուսնեակ գիշեր: Լոիր:

Տ. ՅՈԿԵՐԱ. (Ետապով մօտենում է): Այդ ինչ է:

ՅՈԿԵՐԱ. Վայրի սագեր—տեսնում ես, այնտեղ, լճի վրայէ կէտեր, որոնք լուսնի դիմաց թռչում են:

Տ. ՅՈԿԵՐԱ. Ի՞ն, դու էլ իմ աչքերը, այնքան էլ ջահէլ չեն: (Յետ է զնում դեպի դրսի դռանը):

ՅՈԿԵՐԱ. Լոիր:

Տ. ՅՈԿԵՐԱ. Ալր ինչ: (Մնում է կանգնած):

ՅՈԿԵՐԱ. Սսա, Մարթա:

Տ. ՅՈԿԵՐԱ. Ի՞նչ է, հայրիկ:

ՅՈԿԵՐԱ. (Փակում է դռուր, հետեւում է իր կնոշ): Ոչինչ: Ինձ թուաց, Մարթա, որ մէկը՝ այստեղ ներքենում աղմկում է թիակներով:

Տ. ՅՈԿԵՐԱ. Ո՞վ կարող է այդ անել: (Երկուսն էլ նեռանում են մուտքի դռնով):

Մէկը պատշկամբից պատուհանի միջով նալում է ներս: Այդ Յոհաննէսն է, Դարանից լեռոյ խկոյն նա զգուշութեամբ ներս է մտնում: Նա փոխուած է երկում, մեռելի նման զունատ, շնչում է բաց բերանով: Շատապ և լի երկիրով, թէ մի՞ դուցէ յանկարձակի վրայ հասնեն. նայում է շուրջը, որոնում է թղթի կտոր, գրում է մի քանի խօսք, ապա հնաց որ աղմուկ է լսում, տեղից ցատկում, վալր է զցում զրիչը և դուրս փախչում աղմուկ կամբով: Պալոն և տիկին Ֆօկերատը լեռ են զալիս, Մըապատած պատշկամբով:

Տ. ՅՈԿԵՐԱ. Այդ ինչ ես անում, ինչու ես նստել մըթանում:

Տ. Կէթէ. (Չեռնեցիր բոնելով աչենի առաջ): Աչքերս ծակում է լոյսը:

Տ. ՅՈԿԵՐԱ. Զէ, տեսէք, տեսէք ինչպէս է այդքան երկար նստում մըթանումը մեր չարաճճին:

Տ. Կէթէ. (Մի իլչ անվասան): Ինչու... ինչու այդքան քընչը ու սիրալիր ինձ հետ:

ՖՕԿԵՐԱԾ. Որովհետեւ դու մեր միակ, սիրելի, աննման աղջիկն ես: (Համբուրում է երան):

Տ. ԿԵԹԻ. (Թոյլ ժպտալով): Այն, այո, դուք ինձ խղճում էք:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ելի՞ քեզ լաւ չես զգում, ԿԵԹԻ:

ՖՕԿԵՐԱԾ. Աստուծով լաւ կը լինես: Հիմա ամեն բան դարձեալ իր սովորական ընթացքը կը ստանայ: Վատթարագոյնը, փառք Աստուծոյ, անցաւ:

Տ. ԿԵԹԻ. (Նստելով սեղանի մօս եւ կարն լուսիրինից յետոյ): Գիտես, մայրիկ... ախ, լոյսը գեռ կուրացնում է—ես ինձ այնպէս եմ զգում, ինչպէս մէկը, որ մեծ անմտութիւն անելով միայն նոր-նոր է խելքի գալիս:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ի՞նչ ես ուզում ասած լինես:

Տ. ԿԵԹԻ. Աննան գնաց, մայրիկ:

ՖՕԿԵՐԱԾ. Այն, ԿԵԹԻ: Եւ այժմ... այժմ դու պէտք է կրկին ուրախ և երջանիկ լինես:

Տ. ԿԵԹԻ. (Լուսում է):

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Դու այլ ես չես սիրում Յոհաննէսին, ԿԵԹԻ:

Տ. ԿԵԹԻ. (Կարն մածութիւնից յետոյ): Այսու ամենայնիւ, իմ կեանքս այնքան էլ վատ չանցաւ: Ֆաննի Շտէնցէլը մարդու գնաց մի պաստօրի: Թէկուզ նա այնքան դոհ է և բախտաւոր, կարծում ես թէ ես կը փոխէի նրա հետ իմ դրութիւնս: Ոչ, ի հարկէ, ոչ—Այսուեղ ծիփ հոտ է գալիս, չէ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ո՛չ, զաւակս, ես չեմ լսում հոտ:

Տ. ԿԵԹԻ. (Հեծեծելով կոտրատում է ձեռները): Ախ, Աստուծո, ամեն ինչ վերջացաւ, ամեն ինչ վերջացաւ:

ՖՕԿԵՐԱԾ. Կէթիէն, Կէթիէն: Միթէ կարելի է այզքան փոքրոզի լինել: Ես դարձեալ հաւատու ու յոյսս գնում եմ Աստուծոյ վրայ: Ողորմած Աստուծը ունի անսովոր միջոցներ և ձանապարհներ մոլորուած հոգիները յետ բերելու համար: Ինձ թւում է, Կէթիէն, որ ես նրա անօրէնութիւնը թափանցեցի:

Տ. ԿԵԹԻ. Տեսնում ես, մայրիկ, իմ առաջին զգացմունքը, որ ես ունի այն ժամանակ, երբ Հաննէսը եկաւ ինձ մօտ և առաջարկութիւն արաւ—այդ զգացմունքը բոլորովին ուղիղ էր: Յիշում եմ որ ամբողջ օրը պատում էր իմ զլիսում թէ ինչ կարող է գտնել իմ մէջ այդպիսի զարգացած և ուսեալ մի մարդ: Թէ սա ինչ ընդհանուր բան կարող է ունենալ ինձ հետ: Տեսնում ես, բոլորովին ուղիղ էր իմ մտածմունքը:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ո՛չ, Կէթիէն, նա չէ բարձր կամքնամք քեզնից, այլ դու նրանից: Նա պէտք է քեզ ներքեց վերև, ահա ճշմարտութիւնը:

ՖՕԿԵՐԱԾ. (Դողդոջիւն ձայնով): Բայց հէնց այդ պատճառով ձիշտ այնպէս է, ինչպէս Մարթան ասաց, այս... բայց հէնց այդ պատճառով—եթէ դու կարող ես ներել... եթէ դու նրա մեծ մեղքը կարող ես ներել...

Տ. ԿԵԹԻ. Ա՛խ, եթէ բանը ներելուն մնար... կարելի է ներել մի անգամ,—հարիւր անգամ—հազար անգամ:—Բայց Հաննէսը չի նուաստանալ: Ես ողորմելի արարածս բան չունեմ Հաննէսին ներելու: Խնդիրը պարզ է: Դու այս ես ոչ այժմ գիտեմ միայն, թէ ինչ եմ ես և ինչ չեմ: (Դրսից լսում է կրկնուելով «հօլօպպա» օգնութեան կոչը):

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Կէթէ, սիրելիս. Ես ուզում եմ քեզ մի առջարկութիւն անել: Լսիր, եկ, գնանք. Ես քեզ կը պառկեցնեմ անկողնում և մի բան կը կարդամ քեզ՝ Գրիմի հէքեաթները. մինչեւ որ դու կը քնես: Եւ վաղ առաւօտ ես կը պատրաստեմ քեզ համար չօրվա և թերիսաւ ձու, յետոյ դու կը վեր կենաս և յետոյ մենք կը գնանք պարտէզ, իսկ այնտեղ կարմիր արեց շատ լաւ է լուսաւորում, և այնտեղ ամեն բան քեզ այլ կերպով կ'երեւայ քան այսօր երեկոյեան: Եկ, գնանք:

ԲԲԱՌԻՆ. (Մտնում է պատճկամբից): Բարի երեկոյ:

ՖՕԿԵՐԱԾ. Բարի երեկոյ, պարոն Բբառուն:

ԲԲԱՌԻՆ. Բարի երեկոյ, պարոն Ֆօկերատ: (Չեռք է տալիս):

Յոհաննէսը տանն է:

ՖՕԿԵՐԱԾ. Կարծեմ վերևում է:

ԲԲԱՌԻՆ. Համար այսինքն, հաստատ:

ՖՕԿԵՐԱԾ. Կարծեմ: Մարթա, այդպէս չէ: Սակայն ի՞նչ է պատահել:

ԲԲԱՌԻՆ. Ես ուզում եմ գեռ նրան տեսնել: (Արագ դուրս է գնում դրախ դրեն):

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Թերեւ անհանգստութեամբ): Ի՞նչ է պատահել Բբառունին:

Տ. ԿԵԹԻ. (Երկիրովից յուզուած): Սակայն ուր է Հաննէսը:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Միայն մի վախիր, ԿԵԹԻ, սիրելիս. Ուր պէտք է լինի, ի հարկէ այստեղ է:

Տ. ԿԵԹԻ. (Արագ անող անհանգստութեամբ): Համար ուր է նա:

ՖՕԿԵՐԱԾ. Ի հարկէ վերևում... վերևում... բնականաբար այնտեղ է:

ԲԲԱՌԻՆ. (Վերադառնում է: Սասիկ լարուածութեան վայրկեան: Լուսութիւն):

ՖՕԿԵՐԱԾ. Հը, ի՞նչ է, այնտեղ է նա, պարոն Բբառուն...

ԲԻԱՌԻՆ. Ոչ, պարոն ֆօկերատ, նա վերեռում չէ և... և... ՖՕԿԵՐԱՏ. Հա, միթէ, Բայց ինչ է պատահել ձեզ:

ԲԻԱՌԻՆ. Ոչինչ, ոչինչ:

Տ. ԿԵԹՔ. (Վազելով Բրառունի մօս): Այս, դուք ինչոր բան դիմէք:

ԲԻԱՌԻՆ. Ոչ, ոչ, իսկապէս ոչ: Իսկապէս ոչ մի հիմք չը կայ անհանգստանալու—միայն—ինձ թւում է, որ ոչ մի կերպ չը պէտք է հիմա Հաննէսին մենակ թողնել: Եւ երբ ես հիմա մի քիչ առաջ... ախ, ոչ՝ այդ իսկապէս անհեթեթ միտք է:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Հա, ուրեմն մի քիչ առաջ ինչ, առացէք շուտով:

ՖՕԿԵՐԱՏ. Դէ, շնուր առացէք, ժամանակ մի կորցնէք:

ԲԻԱՌԻՆ. Իսկապէս ոչինչ առանձին բան: Երբ մի քիչ առաջ ես բացի պարտէզի դուռը—ինձ թուաց, որ մէկը յետ է անում նաւակը, և երբ ես աւելի մօտեցայ, մէկը ճիշտ որ հեռանում էր նաւակով: Մէկը—ես չը գիտեմ ով—մի մարդ: Այն ժամանակ ես վճռեցի նրան կանչել—բայց պատասխան չը տուաւ: Իսկ Հաննէսը անշուշտ կը պատասխանէր:

Տ. ԿԵԹՔ. (Խելակորոյսի նման): Յոհաննէս: Այդ Յոհաննէսն էր: Վազէք, շտապէք, ի սէր Աստուծոյ, որքան կարող էք արագ: Մայր, հայր: Դուք նրան ծայրացեղութեան հասցրիք: Ինչու, ինչու դուք այդ արիք...

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Բայց, ԿԵԹՔ:

Տ. ԿԵԹՔ. Այս, ես այդ զդում եմ: Նա այլ ես չէ կարող ապրել: Ես պատրաստ եմ ամեն ինչ անել: Միայն այդ ոչ, միայն այդ ոչ:

ՖՕԿԵՐԱՏ. (Վազում է պարտէզ, ժամանակ առժամանակ կանչում է): Հաննէս, Յոհաննէս:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Վազում է բակը եւ կանչում): Հաննէս, Հաննէս:

Տ. ԿԵԹՔ. (Դիմելով Բրառունին): Մի մարդ: Դուք նրան կանչեցիք: Նա ոչինչ չը պատասխանեց: Վազէք, վազէք:

ԲԻԱՌԻՆ. (Գնում է):

Տ. ԿԵԹՔ. (Երա հետեւից կանչում է): Ես էլ եմ գալիս: (Կուրատելով ձեռները): Ախ Տէր Աստուած, Տէր Աստուած: Միայն թէ կենդանի լինէր նա: Միայն թէ նա գեռ կարողանար ինձ լսել:

Լառում է լի վրայից Բրառունի կոչը՝ «Հօլօ՛պպ», «Հօլօ՛պպ»:

Տ. ԿԵԹՔ. (Կանչում է դեպի դրսի դուռը): Ա՛լմա, Միննա, լապտերները պարտէզ տարէք: Շնուտ, լապտերները: (Ուզում է վազել դեպի պատշաճը, նկատում է Յոհաննէսի գրած թղթիկը, վազել դեպի պատշաճը, մօտենում է սառածի պէս կանգ է առնում մոմի նման ձգուած, մօտենում է սառածի պէս եւ դողդողալով վերցնում թղթիկը, մի քանի վարկեան հարացածի նման մնում է բեւեռուած եւ ապա վայր է ընկնում: Դրսից դեռ եւս շարունակ լսում են օգնութեան կանչող աղաղակներ):

Թարգմ. Ե.—Ա.

(Ա. Ե. Ր. Չ.)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*Ա. ՄԱՍԱՆԻ ԱՆԴՐԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
7. 7. 1901

b 17 b p 9 q

(Recens. Michaelis)

Si nomen ad aliudque ducatur per se
debet esse aliud per se habere in se
sunt ut nomen cum personis respondeat
nam dicitur dicitur dicitur

Et hoc est quod dicitur per se habere
de aliud cum aliud non possit
Et hoc est quod dicitur de aliud non possit
per se habere nisi per se habere

Et hoc est quod dicitur per se habere
de aliud cum aliud non possit
Et hoc est quod dicitur de aliud non possit
per se habere nisi per se habere

Et hoc est quod dicitur per se habere
de aliud cum aliud non possit
Et hoc est quod dicitur de aliud non possit
per se habere nisi per se habere

Et hoc est quod dicitur per se habere
de aliud cum aliud non possit
Et hoc est quod dicitur de aliud non possit
per se habere nisi per se habere

Et hoc est quod dicitur per se habere
de aliud cum aliud non possit

ՀՀ Ազգա



NL0

4360